




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2447

9(47)

9-51



2011-07



1թ 940 հ 5

ՆԱԽՈՐՅԱԿԸ

Իտրեր ռուսական ստալին հեղափոխության
մասին

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԾՏԱՐԱԿԶՈՒԹՈՒՆ
1926

9147
4-37
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԽՈՐՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրաբսարանի բոլոր յերկրների, միացե՛լ:

48

300

2636-ԲՈ



24 JAN 2006

1905 ԹՎԱԿԱՆԻ

ՆԱԽՈՐՅԱԿԸ

1003
12747
Նյութեր առաջիկա առաջին հեղափոխության
մասին

Ժողովից Յ. ԲՈՅՐՈՎՍԿԱՅԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1926

005
07-0802

ԱՌԱՋԱԲԱՆ

1905 թվականի շրջանի պատմական նյութերն ուսումնասիրելիս մարդ հանդիպում է պրոկլամացիոն և զրական այլ տեսակ այնպիսի որինակների, վորոնք իրանց պայծառությամբ և զորությամբ յերբեմն լույսի ամբողջ խուրձեր են սփռում այն ժամանակի պայքարի առանձին հոսանքների վրա: Մենք նպատակահարմար ենք համարում, վոր ազիտպրոպագանդներն այդպիսի զրականությունն ոգտագործեն, վորպես լուսաբանող նյութ՝ մեր առաջին հեղափոխության պատմության հետ կապված հարցերի մասին ղեկուցումներ կազմելու համար:

Ներկա աշխատության մեջ, վոր ղեկուցող ընկերների ուշադրությանն ենք առաջարկում, կարգավորված է այն նյութը, վորից կաբելի յե ոգտվել 1905 ռազմական տարվա պատմության ներածական ղեկույցի և ղեկույց-նախերգանքի համար:

Այս գրքի մեջ առաջ են բերված Ռ.Ս.Դ.Բ. կուսակցության Պետերբուրգի կոմիտեյի 1904 թ. նոր տարվա պրոկլամացիան, վոր անփոփոխ է 1903 նըշանավոր թվականի դեպքերը, և զրան իբրև հավելված «քրիստոսի ծննդյան հազար ինն հարյուր յերեք թվի» ամառը փետրվարի 21-ին արձակված ցարական պերճախոս մանեֆիստը:

Միքանի պրոկլամացիաներ, վորոնք կապ ունեն ունս յապոնական պատերազմի սկզբնավորութեան և հետագա ընթացքի հետ, ցարական կառավարութեան դիվանագիտական գրադրութեանը Յապոնիայի հետ, վոր այն ժամանակ հրատարակված է «Правительств. Вестник» թերթում, կոմս Վիտտեյի «Հուշերից» մի գլուխ,—սրանք բոլորը բավականաչափ գունեղ տալիս են պատերազմի ամբողջ պարագան:

Ընկ. Լենինի «Պորտ-Արայուրի անկումը» հոդվածը, ասես թե, մի ամփոփ հաշիվ է պատերազմի մասին:

Այս գրքի վերջում լինում է համառոտ, սակայն մեր կարծիքով հափազանց կարևոր նյութ, վոր վերաբերում է մեր բոլորական շարքերի վիճակին—1905 թվականի նախորդակին:

3. Բարեփոխում

“ՆՈՐ ՏԱՐՈՒ ԱՌԻՅՈՎ”

(Ռ. Ս. Դ. Բ. Կ. Պետերբուրգի Կոմիտեյի պրոկլամացիան 1904 թ.)

ՌՈՒՍՍԻԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոկեսարներ բոլոր յերկրներ, միացե՛ք:

ՆՈՐ ՏԱՐՈՒ ԱՌԻՅՈՎ

Անցնում է տարին, պայքարի և զոհերի տարին, կամայականութեան և բռնութեան կատաղութեան տարին, ժողովրդական մասսաների փառավոր բաղխումների տարին բարբարոս կառավարութեան հետ: Անցնում է այս տարին արյունաներկ ցուլով, և ողի մեջ սավառնում են տագնապ ու շփոթ, մարտական կոչ և անհղ վրեժխնդրութեան—այդ մեր թշնամին է, վոր զգացել է մոտավորապես աղետը, այդ բանվոր ժողովուրդըն է, վոր վրեժ է գոռում դահիճներին և դեպի վրճառական կռիվ խոյանում:

Հրաժեշտի մի հայացք ձգենք, ընկերներ, գնացող տարվա վրա, հիշենք նրա նշանակալից մոմենտները և ի մի գումարենք այն ժառանգութեանը, վոր թողեց մեզ այդ տարին:

Կամայականութեան և բռնութեան ամբիոնից—«ցարական դահիճ» բարձրութեանից—տարվա սկզբին

ճանաչվեց ուստի ժողովրդի հեղափոխական շարժումը: Յերկրի խառնակ վիճակն ստիպեց թագավորին լեզուն բաց անել: Յեվ նա սկսեց խոսել ինքնակալության լեզվով, ստի, նենգության և կեղծավորության լեզվով: *) Կառավարությունը դեռ այն ժամանակ մըտածում էր խառնակությունը վորսալ այդ կառթով: Ինքնակալ հրեշի անունով դեռ այն ժամանակ մտածում էյին կեղծ ու պատիր խոսքերով հանգստացնել ժողովրդական մասսաներին, վորոնք արդեն ըսկսել էյին հուզվել և ալեկոծվել:

Յեվ կարծես վորպես պատասխան ցարի այդ լպիրշ մանիֆեստին, նրա հրապարակումից միքանիոր հետո Դ/Վ Ռոստովում տեղի ունեցավ բանվորական մի լիթխարի ցույց, ժողովրդական ցատուժի միջև այդ Ռուսաստանում չեղած արտահայտությունն ընդդեմ բարբարոս կառավարության, նույն այն Ռոստովում, վոր դրանից միքանի ամիս առաջ ցույց տըվավ աշխարհին գործաթող բանվորների նոյեմբերյան հռչակավոր միտինգների վեհ տեսարանը: Տասնյակ հազարավոր բանվորներ հպարտորեն անցնում էյին քաղաքի փողոցներով և նգովներ էյին կարդում քաղաքաձայն՝ ինքնակալության հասցեյին: Վոչ վստիկանությունը, վոչ ել կաղակներն անկարող էյին զաղել բանվոր ժողովրդի հեղափոխական յերթը Ռոստովի փողոցներում: Մեր կարմիր դրոշակները ծփում էյին ողում բազմության գլխի վերև և ավետում էյին հեռավոր բանվոր ժողովուրդների ապստամբության մոտալուտ ժամը՝ իրանց ճնշողների դեմ: Այդ փողի ձայնն

*) Տես սրան կցված մանիֆեստը:

Եր, վոր մարտիկներին հրավիրում էր ընդհանուր գործի՝ ժողովրդական գործի համար:

Յեվ ահա միքանի ամիս դրանից հետո Ռուսաստանի ամբողջ Հարավը բռնված էր մինչև այդ չտեսնված ժողովրդական շարժումով: Բանվորական ընդհանուր գործադուլ էր բռնկվել Ուդեսայում, Յիկատեբինսկավում, Կիևում, Թիֆլիզում, Բագվում... Բանվորական մասսաները, ինչպես մի մարդ, պահանջում էյին լավագույն կյանք, պահանջում էյին վերջ դնել կառավարական կամայականության, վոչնչացնել բարբարոս ինքնակալությունը: Բաց յերկնքի տակ, քաղաքների հրապարակներում և փողոցներում, հավաքվում էյին բանվոր մասսաները, ճակատում էյին հեղափոխական վոստիկանության և կաղակների դեմ՝ փախուստի մատնելով ցարական այդ բաշիրողուկներին: Բաց տա արձակ, վոստիկանության և զինվորների աչքի առաջ արտասանվում էյին հեղափոխական ճառեր, վորանց ձայնակցում էր ռազմական վոգով տոգորված ամբոխը իր հավանության միաբան գոչերով՝ «Կորչի՛ ինքնակալությունը», աղաղակում էր ժողովուրդը... «Կորչի՛ մարդասպանները»... «Կեցցե՛ քաղաքական ազատությունը»... Հուլիսյան այդ փառավոր որերին առաջա սովորական կյանքը կանգ առավ բանվորի ջրատ քաղկի վճռական շարժումով: Կանգ առավ գնացքների յերթևեկությունը, վտանգ էր սպառնում քաղաքներին, վոր կրման առանց ջրի, առանց լույսի, առանց հացի՝ Վոստիկանական հրամանները կորցրել էյին իրենց ուլժը: Հայտնապես ցրվում, տարածվում էյին առցիալ-դեմոկրատական պրոկլամացիաները, հայտնապես բարձրաձայն կարգում էյին այն տաս-

նյակ հաղարավոր բանվորներ: Յեվ միայն դինվորական ուշի առաջ, անդեն մարդկանց մասսաների բարբարոսական գնդակահարությունից հետո ժողովրդական խմբերն ստիպված յեղան նահանջելու: Այս՝ բանվոր ժողովրդի արձագանքն էր մարտի կոչին, այս՝ ժողովրդական ապստամբության առաջին փորձն էր:

Իսկ մեր թշնամին, վորպես նետահար մի հրեշ, վայրագորեն այս ու այն կողմն էր նետվում, իր շուրջը տարածելով սարսափ ու ավերմունք: Մանիֆեստի անուշ, բայց կեղծուպատիր ձայներից հետո ժողովուրդը շուտով այլ ձայներ լսեց՝ հրացանաձգության սոսկալի ձայներ. Ջլատողատում բազմաթիվ խաղաղ բանվորներ, վորոնք հավաքվել էին իրանց գործերը քննության առնելու, հրացանաձգության յենթարկվեցին: Յեվ այս դեպքից հետո մասսայական գնդակահարությունները կրկնվում էին մեկը մյուսի յետեից Կովկասի բոլոր քաղաքներում և հարավային Ռուսաստանի խոշոր քաղաքներում: Անցյալ ամբողջ ամառը ուսաց յերկրում լսվում էր հրացանների համազարկերի սոսկալի թնդյունը: Հարյուրավոր սպանվածներ և վիրավորներ... Մեռնողների հեծեծանքները, վորբացած ծնողների, այրիների և մանուկների վոզըն ու լացը բռնել էր ամբողջ յերկիրը:

Մասսայական գնդակահարություններին և բարբարոսական տանջանքներին հաջորդեցին կեղծավոր արդարադատության դատի վայրենի փաստերը: Յուլյերին մասնակցելու համար՝ մահվան դատաւճիռ, պրոկլամացիաներ տարածելու համար՝ տաժանակիր աշխատանք և ցմահ Սիբիր, յերկար ժամանակով բանտարկելություն: Նա՝ մեր կառավարությունն ուղեց

դատել իր թշնամիներին, սակայն նա չհամարձակվեց դատել բաց ու հայանի, ժողովրդի աչքի առաջ, չհամարձակվեց, վորովհետև վախենում էր, վոր հանձինս ժողովրդի նա ինքն իր համար դատավոր դառնի:

Մեր կառավարությունն այս տարի գիվանական մի միջոց էր հնարել՝ ժողովրդական ցասունն իրանից հեռացնելու համար: Դահիճ Պլեյի գաղտնի հրամանով Քիշնևում և Գոմելում տեղի յեն ունեցել անպաշտպան հրյանների վայրագ կոտորած: Միքանի վարձկան մարդասպաններ՝ վոստրիկանության և զինվորների գործակցությամբ ամենասոսկալի վոճրագործություններ են կատարում հրյանների նկատմամբ զատկի կիրակի որը: Որը ցերեկով կոտորում են ձերուներին, մաս-մաս հողատում մանուկներին, ծնողների աչքի առաջ զազանային ցինիզմով բռնաբարում են աղջիկներին: Ամբողջ աշխարհը սարսուռ զգաց, յերբ լսեց այդ անգթությունների մասին: Յեվ յերբ բոլոր յերկիրներում սկսեցին հնչվել զայրութի ձայներ, մի-նիստը-դահիճը լրբություն ունեցավ այդ վոճրագործությունը, վոր մենակ իր ձեռքի գործն էր, ձգել մեզ վրա, իբր թե մենք, բանվորներս, հրյաններից վրեժ ենք հանում նրա համար, վոր նրանք գնում են հեղափոխական բանակը: Այսպես և մեր թշնամին, ընկերներ, այսպես են նրա արարքները: Այսպես և նա ցուցադրել իրեն այս անցնող տարում: Ավելի մեծ անգթություն, ավելի մեծ գազանություն, ավելի մեծ լրբություն դժվար և յերևակայել: Յեվ այս լրբերի դեմ մեզ վիճակված և կռվել. այդ խայտառակությունը դեռ ծանրացած և մեր հայրենիքի վրա, այդ այլանդակ հրեշը դեռ շարունակում և արատավորել ուստական հողն անմեղների արյունով:

Սակայն մոտ և հաղթության ժամը, ընկերներս
կովի յե պատրաստվում Ռուսաստանի բանվոր ժողո-
վուրդը: Դեպի մեր հեղափոխական բանակն են վազում
բոլոր ճնշվածները, կամայականություն ատողները և
ազատություն տենչացողները: Մոտ և ժողովրդական
մասսաների ապստամբության ժամը վճռական մարտի
համար մեր ամրակուռ բանակից:

Իսկ մեր բանակը ամրացած և մեր սոցիալ-դե-
մոկրատական բանվորական կուսակցությունը համա-
խմբված և կազմակերպված է: Անցյալ տարվա մեջ կա-
յացել և մեր կուսակցության յերկրորդ համագումարը,
մի համագումար, վորին մենք այնքան յերկար ապա-
սում եյինք և վորին այնքան անհրաժեշտ եր մեք ու-
ժերը համախմբելու և կանոնավոր կազմակերպելու
համար: Անցնող տարվա այս թանկագին ժառանգու-
թյունը վողջ Ռուսաստանում մենք կարող կըլինենք
պահպանել յեկող տարվա ընթացքում. կըմեծացնենք
նրա արժեքը ամրակուռ կազմակերպությամբ, ավելի
սերտ համերաշխությամբ և մեր գործողությունների
կանոնավորությամբ: Գիտակցելով մեր արժանիքը,
ազատության համար մարտնչողների արժանիքը, մեր
սրաում ունենալով վշտալի հիշատակը մեր զորքերի,
վորոնք ընկան թշնամու դեմ վարած փառավոր կռիվ-
ների մեջ, անսահման ատելությամբ լի դեպի այդ
թշնամին—անա այս պայքարում մենք հրաժեշտ
ենք տալիս մեղանից այժմ հեռացող 1903 թվականին:
Կովելու պատրաստականությամբ, վառ հույսերով մենք
դիմավորում ենք 1904 թվականին: Ավելի համերաշխ,
ավելի միասիրտ, ընկերներ... Բարձր բռնեցեք մեր
կարմիր դրոշը: Յեվ թող նա ծածանվի հպարտորեն և

բայց՝ որն բովանդակ ուսական հողի վրա: Յեվ թող
հնգվի ամբողջ Ռուսաստանում բազմամիլիոն ժողովրդի
կրճքից. «Երբեք դարձելի, բարբարոս, կեղծավոր, աք-
յառնող շաղախված ինքնակալությունը» գոչը...

Ենցե՛ք Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական
բանվորական կուսակցությունը:

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական
Կուսակցության Ս. Պետերբուրգի Կոմիտե

2. ՆԻԿՈԼԱՅ ՅԵՐԿՐՈՐԴԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ *)

26 փետրվարի 1903 թ.

Վողորմության մասունք մենք, Նիկոլայ յեր-
կրադ, կայսր և ինքնակալ համայն Ռուսիո, թագա-
վար Լեհաստանի, մեծ իշխան Ֆինլանդիայի և այլն,
և այլն:

Հայտարարում ենք մեր բոլոր հավատարիմ հալա-
տակներին.

Աստվածային նախախնամության հաճությամբ
բարձրանալով մեր նախահայրերի գահը, մենք սրբա-
դան օւխտ արինք ամենաբարձրյալի և մեր խղճի ա-
ռաջ Ռուսիո ղեկավարության դարավոր հիմունքները սըր-
բության պահպանելու և մեր կյանքը սիրեցյալ հայ-
րենիքի ծառայության նվիրելու:

Մեր հպատակների մասին ունեցած անդուլ հո-
գացողությունների մեջ մենք ժողովրդի բարեկեցու-
թյան իրագործման միջոցները ձեռք ենք բերել մեր
ինքնակալ նախորդների և ամենից առաջ մեր անմո-

*) «Արարատ», 1903 թ. Մարտ:

ռանալի ծնողի հավերժ հիշատակութեան արժանի խոհուն գործերի հետեւողութեամբ:

Ամենակալ աստծուն հաճելի յեղով իր անհասանելի կամքով ընդհատել վաղաժամ մահով մեր սիրեցյալ ծնողի պետական աշխատանքները և շրանով մեզ վրա սրբազան պարտականութիւն դնել՝ լրացնելու Ռուսաց յերկրում կարգն ու արդարութիւնը և ամրացնելու նրա սկսած գործը՝ համաձայն ժողովրդի կյանքի մեջ ստեղծվող պահանջներ:

Ի մեծ վիշտ մեր, այն խառնակութիւնը, վոր սերմանված է մասամբ պետական կարգի դեմ թշնամական միտումներով, մասամբ էլ ռուսական կյանքի ոտար սկզբունքներից հափշտակվելով, արգելք է հանդիսանում ժողովրդի բարեկեցութիւնը բարւոյեցնելու աշխատանքին: Այդ խառնակութիւնը, հուզելով մտքերը, շեղում է նրանց արտադրական աշխատանքից և հաճախ կորստի է մատնում մեր սրտի համար թանգ և իրանց ծնողների ու հայրենիքի համար անհրաժեշտ յերիտասարդ ույթեր:

Պահանջելով մեր բոլոր կամակատարներից, ինչպես բարձրաստիճաններից, նույնպես ստորիններից, վոր հաստատուն կերպով դիմադրեն ժողովրդի կյանքի կանոնավոր ընթացքի ամեն մի խանգարման, և հուսալով, վոր ամենքը և ամեն մեկն ազնվաբար կըկատարեն իրանց ծառայական և հասարակական պարտքը, մենք անհողգողով վճռականութեամբ անհատադ հոհացում տալու հասունացած պետական կարիքներին, բարւոյե համարեցինք:

Վոր հավատը գործերի հետ առնչութիւն ունեցող իշխանութիւնները աննկուն կերպով պահպանեն

Ռուսաց Կայսերութեան հիմնական որոնքների մեջ գըրված կրօնական համբերատարութեան պատվիրանները, վորոնք, մեծարելով խորին յերկուղածութեամբ ուղղափառ յեկեղեցին, վորպես նախամեծար և տիրող յեկեղեցի, մեր բոլոր այլակրօն և այլադավան հպատակներին ազատութիւն են տալիս դավանելու իրանց կրօնը և կատարելու իրանց ծեսերն ըստ իրանց կրօնի:

Վոր շարունակեն յեռանդուն կերպով գործադրել այն միջոցները, վորոնք ուղղված են գյուղական ուղղափառ հողտրականութեան նյութական վիճակը բարելավելուն, կրկնապատկելով յեկեղեցու պաշտօնյաների արդյունավետ մասնակցութիւնը իրանց հօտի հոգևոր և հասարակական կյանքի մեջ:

Վոր ժողովրդական անտեսութեան գորացման տաջիկա խնդիրների համապատասխան՝ առաջ տանեն պետական վարկի հաստատութիւնների, մանավանդ ազնվականների և գյուղական բանկերի գործունեութիւնը, վորպեսզի ավելի ուժեղ կերպով ամրապնդվի և զարգանա ռուսաց գյուղական կյանքի հիմնական տարրերի՝ տեղական ազնվականութեան և գյուղացիների՝ բարորութիւնը:

Վոր գյուղական վիճակին վերաբերյալ որոնադրութեան վերաքննութեան մասին մեր ծրագրած աշխատանքները մեր ցույց տված կարգով կանխորեն կատարելուց հետո՝ ուղարկեն նահանգական խորհուրդներին՝ մշակելու համար տեղական առանձնահատկութիւնների համաձայն, հասարակութեան վստահութիւնը վայելող արժանավորագույն գործիչների մասրակցութեամբ: Այս աշխատանքներին հիմք ընդունել գյուղական հողատիրութեան համայնական կազմի ան-

ձեռնմխելիությունը, միևնույն ժամանակ միջոցներ վորոնելով դյուրացնելու համար առանձին գյուղացիներին համայնքից դուրս գալը:

Անհապաղ միջոցներ՝ ձեռք առնել վերացնելու գյուղացիներին ճնշող համառարտ (КРУТОВАЯ) յերաշխավորությունը:

Վերակազմել նահանգական և գավառական վարչությունները, վորպեսզի գեմատվոյային կյանքի բազմապիսի կարիքներին անմիջապես գոհացում տալու միջոցները ուժեղանան տեղական գործիչների աշխատանքներով, վորոնց պիտի ղեկավարեն զորեղ և որինական իշխանությունը՝ խիստ պատասխանատու լինելով մեր առաջ:

Տեղական կենցաղի հետագա կանոնավորելու համար նպատակ դնել այնտեղ, ուր այդ կարելի չե հասարակական վարչության մերձեցումը՝ ուղղափառ յեկեղեցիներին կից գտնված ծխական հոգաբարձությունների գործունեյությանը:

Կոչ անելով մեր բոլոր հավատարիմ հպատակներին աջակցել մեզ՝ ընտանիքի, դպրոցի և հասարակական կյանքի մեջ հաստատելու բարոյական հիմունքներ, վորոնցով միայն՝ միահեծան իշխանության հովանու տակ կարող են զարգանալ ժողովրդի բարորությունը և յուրաքանչյուրի վստահությունը իր իրավունքների ամրության վերաբերմամբ, մենք հրամայում ենք մեր նախարարներին և առանձին մասի զըլխավոր կառավարիչներին, վորոնց գերատեսչությանն և վերաբերում այս, ներկայացնել մեզ իրանց գիտողությունները մեր ծրագիրների կատարման կարգի մասին:

Ամենակալ տերը թող որհնի մեր արքայական աշխատանքը և թող ոգնե նա մեզ՝ հայրենիքի բոլոր հավատարիմ զավակների սերտ միությամբ կատարելու մեր խորհուրդները՝ պետական կարգը կատարելագործելու, սահմանելով տեղական կյանքի հաստատուն կազմ, իբրև գլխավոր պայման մեր պետությունը ծաղկեցնելու հավատո, որենքի և իշխանության ամուր հիմքերի վրա:

Տրված է Ս. Պետերբուրգում, փետրվարի 25-րդ որը, քրիստոսի ծննդյան հազար իննը հարյուր յերեք թվին, մեր թագավորության իններորդ տարում:

Իսկականի վրա նորին կայսերական մեծության ձեռքով ստորագրված է՝

ՆԻԿՈԼԱՅ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

(Ռ. Ս. Դ. Բ. Կ. Պետերբուրգի Կոմիտեյի 1904 թ. պրոկլամացիան)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոկլամացիա բոլոր յերկիրների, միացե՛ք:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Պատերազմ է սպառնում Յապոնիայի և Ռուսաստանի մեջ: Ամբողջ աշխարհը լարված հետաքրքրությամբ հետևում է Հեռավոր Արևելքի դեպքերին: Լրագրները լեփ-լեցուն են հեռագրներով և ամեն տեսակ տեղեկություններով մոտավոր պատերազմի մասին: Այ-

սոր լրագրները խոսում են հարցի խաղաղ լուծման, իսկ վաղը՝ պատերազմի անխուսափելիության մասին: Եինչ այդ յերկու պետութիւններն ել համենայն դեպքս պատրաստվում են, միլիտնավոր թվերով պաշար են աւնում, մթերում: Մեր զորքերն ու նավատորմն ուղարկվում են Հեռավոր Արեւելք: Մի կողմից ել կառավարութիւնն աշխատում է հասարակութեանը տրամադրել հոգու այդ դաժան, անգութ նյութանքի: Այդ նպատակով Ս. Պետերբուրգի սրբակրօններից մեկը հարկավոր է համարել մի յերկար քարոզ խոսել ժողովրդի մեծ բազմութեան առաջ և աշխատել ե պապաշուքն, վոր պատերազմը սրբազան դործ է և միանգամայն քրիստոնեական: Մեր սուրբ յեկեղեցին խայտառակ և անարգ յեղբայրասպաութեան համար արգեն տալիս է մեզ իր որհնութիւնը չարչարյալ քրիստոսի և ամենազոր աստծու անունով: Մեր թագավորն արդեն մոռացել է ժողովուրդներէ մեջ խողաղութիւն հաստատելու իր կեղծավոր քարոզը և պատրաստ է մեր զավակներին և յեղբայրներին հանգիստ մորթվելու ուղարկել, դաժան կոտորածի մեզ անձանթ թշամիների հետ:

Իսկ ինչո՞ւն է բանը: Ռուսաստանի ու Յապոնիայի միջև կռիւնները Մանջուրիան և Կորեան Մանջուրիան չինական կայսրութեան հյուսիս-արեւելյան ընդարձակ շրջանն է: Կորեան, այդ լեռնոտ թեւալղին, մի փոքր պետութիւն է, վոր գտնվում է Յապոնիայի և Չինաստանի հովանավորութեան տակ: Այդ յերկու յերկիրները՝ Մանջուրիան ու Կորեան, գտնվում են հեռավոր Արեւելքում, յերողական Ռուսաստանից 10—15 հազար վերստ հեռու: Մեր կառավա-

րութիւնն աչք և դրեւ նախ և առաջ Մանջուրիայի վրա և վճռել է իր ձեռքը գցել այդ յերկիրը: Նա այս գործը սարքում է վարպետութեամբ: Նախ չինական կառավարութիւնից թույլատրութիւն է ստանում Մանջուրիայում յերկաթուղի շինելու համար: Սակայն շուտով ծագում է պատերազմ Չինաստանի և բոլոր յեւրոպական պետութիւնների միջև: Ռուսաստանն ողտըվում է հանգամանքից և իր զորքերով գրավում է ամբողջ Մանջուրիան, իբր թե յերկաթուղու պահպանութեան համար: Պատերազմը վերջանալուց հետո ուսաց կառավարութիւնը պայմանագիր է կնքում Չինաստանի հետ, վար 1903 թ. հոկտեմբերին ուսական գորքերը հեռանան Մանջուրիայից, իսկ յերկաթուղու պաշտպանութեան համար մնա միայն մի փոքրիկ կայազոր: Սակայն ուսական կառավարութիւնը խախտում է պայմանագիրը, Մանջուրիայից զորքերը չեն հանվում: Այդ յերկիրը Ռուսաստանն այժմ արդեն գրավել է: Այս միեւնոյն վիճակն է սպասում մոտիկ ապագայում նաև Կորեային, վորտեղ արդեն ուս կառավարութիւնն սկսել է կարգադրութիւններ անել, վորպէս տեր: Մեր գիշարիչները Կորեայում սկսել են անտառային արդյունաբերութիւն: Կողմը վիւ և ուսական բաժնեատիրական(ակցիոնեական) ընկերութիւն, վոր ջրի գնով ձեռք է բերել հսկայական անտառներ և սկսել է անխնայ կոտորել ու փչացնել առանց խճի խայթ զգալու: Այդ ընկերութեան ամենագլխավոր բաժնետերը, այդ ձեռնարկութեան հողին մեծ իշխան Ալեքսանդր Միխայլովիչն է. հենց ինքը թողավորը 500,000 ուրլու բաժնետոմս և ձեռք բերել կապիտալիստներն իրենց ուղղանքների համար



նոր շուկա յեն ձեռք բերել: Ազնվականությունը, փողքը ու մեծ իշխանները դրավել են ասիական յերկիրներում հեղափոխամբ խոշոր ոգուտներ ձեռք բերելու հնարավորությունը. նրանք ցանկացան բաց ծովը դուրս գալու համար ձանապարհ ունենալ: Նրանք ցանկացան Դեղին և Յապոնական ծովերի ափերին չսառչող ծովածոցեր ունենալ. նրանց հարկավոր եր հաստատվել մեղանից անչափ հեռու Խաղաղ-ովկիանոսի վրա՝ համաշխարհային առևտրին մասնակցելու համար: Արդեն հարյուրավոր միլիոններ են ծախսված մեղանից անսահման հեռու այդ յերկիրներում՝ յերկաթուղի, նավահանգիստներ և ամրոցներ շինելու վրա: Սակայն Յապոնական կառավարությունն ել իր հերթին նույնպես բավական վորոշ դիտավորություններ ունի Կորեայի և Մանջուրիայի նկատմամբ: Յապոնական կայսրությունը գտնվում ե Հեռավոր Արևելքում և բաղկացած ե մի շարք չափազանց խիտ բնակված կղզիներից. նա բաժանված ե Մանջուրիայից ու Կորեայից մի փոքրիկ նեղուցով: Յապոնական կառավարությունն իր համար նոր հողեր ե վորոնում իր հարևան յերկիրներում: Նա նույնպես հետամուտ ե նոր շուկաներ ձեռք բերելու Կորեան և Մանջուրիան նրա համար ել համեղ պատահներ են: Ահա թե ինչու Յապոնիան վճռել ե դուրս գալ այսօր պաշտպանելու Կորեան ու Մանջուրիան ռուսական յերկզկիսանի արծվի ճանկերից:

Յապոնական կառավարությունը պահանջում ե, վոր Ռուսաստանը Մանջուրիայից ու Կորեայից հեռանա: Յեթե Ռուսաստանը մերժե, պատերազմ պիտի հայտարարվի: Ե՛, իսկ Չինաստանը, Դժբախտ Չինաս-

տանը հոշոտվում ե յեվրոպական բոլոր պետությունների ձեռքով, վորոնցից ամեն մեկն աշխատում ե իր թաթը գցել առյուծի ըտժինը: Չինաստանը վորսկան շներից հալածված մի գայլ ե:

Այսպես ուրեմն, պատերազմ ե սպասվում Ռուսաստանի և Յապոնիայի միջև: Ո՞ւմ ե հարկավոր այդ պատերազմը: Ինչու համար են պատրաստվում այդ սոսկալի և միևնույն ժամանակ անմիտ մարդկային կոտորածը: Ի՞նչ նպատակով են ուղարկվում ռուսաց զորքերը հաղարավոր վերստ հեռու յերկիրներ: Աշխատենք այս հարցերին պատասխանել: Ժամանակակից բուրժուա-կապիտալիստական հասարակարգում բարձր զասակարգերը և կառավարությունը ներշնչված են հարստության և վաստակի մեծ տենչով: Նրանց մըշտապես տանջում ե նորանոր հարստությունների, նորապես տանջում ե նորանոր կողոպուտների անհագ ծարավը: Շարունակ նորանոր հարստություններ ձեռք բերելու, կապիտալիստական վաստակը անսահման մեծացնելու տենչանքի մեջ պետք ե վորոնել պիտական բոլոր աֆերաների և գաղութային ձեռնարկությունների գըլխավոր զսպանակը: Դրա մեջ ե, այսպես կոչված, արտաքին քաղաքականության ամբողջ իմաստը: Այդ նպատակով ամեն մի կառավարություն միլիարդներով ժողովրդական փողեր ե ծախսում, հսկայական բանակ և նավատորմ ե պահում, ճանապարհներ ե շինում, իր սահմաններն ե ամրացնում բազմաթիվ ամրոցներով և նավահանգիստներով: Այդ նպատակով ամեն մի կառավարություն աշխատում ե նոխ և առաջ կլորացնել իր տիրապետությունները, այսինքն պարզ տեսով իր հարևաններից խլել այն բոլոր հողերը, վոր վատ ե

ընկած: Սակայն բուրժուա-կապիտալիստական տնտեսությունն այստեղ կանգ չի առնում: Կլորացնելով և ամբացնելով իր տիրապետությունները, նա իր աչքը տնկում է հեռավոր յերկիրների վրա, նա ձգտում է ձեռք բերել նոր հողեր, նոր շուկաներ իր արդյունաբերության և առևտրի համար: Իսկ դրա համար հարկավոր է նավատորմ, հարկավոր է աղատ յեղձ՝ բաց ծով դուրս գալու համար, հարկավոր են հարմար ծովածոցեր և նավահանգիստներ: Դարձյալ ծախսվում են միլիարդներով ժողովրդական փողերը ի հաճույս կապիտալիստական Մոլոթի: Արդյունաբերության և առևտրի բարդավաճման համար կառավարութենաներն իրանց հայրենիքի ծաղիկը՝ լավագույն յերիտասարգ ույժերն ուղարկում են դաժան և անմիտ սպանդանոց: Բոլոր վերև ասածները վերաբերում են նաև Ռուսաստանին: Ռուսաստանն ընդարձակ է և առատ: Ինչնէրիս են պետք նոր հողերը: Ինչնէրիս են պետք մեղանից անչափ հեռու գտնվող Մանջուրիան և Կորեան: Գաղտնիքը շատ հեշտ է բացվում: Մեր կապիտալիստներն ու կառավարությունը ձեռք բերելով այդ հողերը, ձեռք կըբերեն նոր շուկաներ իրանց ապրանքների համար և կըսկսեն դիզել մեծամեծ ոգուտներ: Մեր արդյունաբերությունն ու առևտուրը Խաղաղ ովկիանոսը դուրս գալու ճանապարհ կունենան: Յեվ այնուհետև կըսկսվի մի զգվելի վակիանալիա և ոտարների հարստությունների գիշատիչ հափշտակություն: Յեվ մեր ինքնակալը կըսկսի թաղավորել նաև Մանջուրիայի և Կորեայի վրա և կառավարել բռնության և հափշտակության ամբողջ նվազախումբը: Իսկ ի՞նչ կըլինի մեր բաժինը: Արդյոք մենք ել կըհարստանանք. վնչ. կը-

շատանան հարկերը, կըթանդանա ամբողջ կյանքը: Այնտեղ հեռավոր յերկրի դաշտերը կոռուզվեն մեր արյունով, այստեղ վշտից ու աղքատությունից հալ ու մաշ կըլինեն մեր վորբացած ծնողները, կանայքն ու յերեխաները: Մի հավատաք, ուրեմն, մեր ստորաքարշ հայրենասերների կեղծավոր ստերին և ոռոսաց կառավարության խորամանկ նյութանքներին: Եյանքը հարկավոր է մեզ: Մեղ համար, մեր յերեխաների համար: Ի՞նչ մի ցանկալի բան է արյուն թափել մեծ և փոքր իշխանների անհագ ու վայրենի ազահությունը գոհացնելու և թագավորին ու նրա դահիճներին հաճույք պատճառելու համար: Մեր թշնամիները բարձր դասակարգերն են և վոչ թե յապոնացիներն ու չինացիները: Մեր բարեկամները բոլոր յերկիրների և աղբերի պրոլետարներն են, հետևապես և յապոնական և չինական պրոլետարները, վորոնց և ուղարկում ենք մեր յեղբայրական վողջույնը: Իսկ ոռոսական ինքնակալության և միապետական ամբողջ կարգին մենք ուղարկում ենք մեր նղովքը:

Ռուս. Սոց. Բանվ. Կուս. Ս. Պետերբուրգի Կոմիտե
Հունվար, 1904 թ.

4. ՊԱՏԵՐԱԶՄՆ ՍԿՍՎԵԼ Ե

(ՌՍԴԲԿ ՊԵՏԵՐՈՒՐԳԻ ԿՈՄԻՏԵՅԻ 1904 թ. պրոկլամացիան)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱ-
ԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոկլամացիա բոլոր յերկիրների, միացե՛ք:

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՍԿՍՎԵԼ Ե

Պատերազմն սկսվել է... Հարյուր հազարավոր
ուսւ պրոլետարներ գնում են մահու և կյանքի կռիվ
մղելու հարյուր-հազարավոր յապոնացի պրոլետարնե-
րի հետ: Ինչո՞ւ համար: Ի՞նչն է կովացրել մեզ յապո-
նացիների հետ: Մեզ ի՞նչ չարիք են պատճառել յա-
պոնացի պրոլետարները: Ի՞նչ չարիք են պատճառել
մենք նրանց: Տաճակն ենք թշնամություն դեպի յա-
պոնացի բանվորները. տաճակն են նրանք թշնամու-
թյուն դեպի մեզ:

Վնչ, մեր և նրանց մեջ թշնամություն չկա: Վոչ
թե թշնամություն, այլ բարեկամություն և համերաշ-
խության զգացմունքն է, վոր մենք փոխադարձաբար
տաճում ենք դեպի իրար: Մենք, գլխավոր ռուս բան-
վորներս, ուրախանում ենք յապոնական բանվորների
ամեն մի հաջողությամբ, վոր նրանք ձեռք են բերում
յապոնացի շահագործողների դեմ մղած կռվում. մեր
կապիտալիստների դեմ մեր մղած պայքարն էլ յապո-
նացի գլխավոր բանվորների կողմից է բարեկամա-
կան ցանկություններով վողջունվում: Մենք մի ընդ-
հանուր թշնամի ունենք—դրանք կապիտալիստներն

են և կառավարությունները, վոր կապիտալիստներին
թե ու թիկունք են լինում:

Ժողովրդի ահապին բազմությունները, ուսւ թե
յապոնացի, իրանց կամքով չեն, վոր գնում են սար-
սափ ու մահ տարածելու: Նրանց ուղարկում են ավե-
րելու և կոտորելու նրանք, վորոնց ձեռքին է իշխանու-
թյունը, նրանք, վորոնք շահագործում և ստրկա-
ցնում են մեզ:

Այդ յապոնական իշխանություններն են, վոր
հոգատարությամբ պահպանում են յապոնացի կապի-
տալիստների շահերը և գործաթողների դեմ դուրք հա-
նում. այդ ուսական իշխանություններն են, վոր
Ռոստով, Ուլեսսա, Կիև, Զլատոուստ, Բազու, Բաթում,
Թիֆլիզ և ուրիշ տեղեր գնդակահարում էյին մեզ նրա
համար, վոր պահանջում էյինք մեզ համար ավելի լավ
կյանք, վոր գյուղացիներին ծեծելով մահվան դուռն
էյին հասցնում.—այդ ուսական և յապոնական կա-
ռավարություններն են, վոր իրար հետ կռվել են և
իրանց վեճը վճռում են արյունահեղ պատերազմի մեջ
մեզ իրար դեմ հանելով:

Պրոլետարիատը պատերազմ չի ուղում: «Պրոլե-
տարներ բոլոր յերկիրների, միացե՛ք».— ահա մի կոչ,
վոր հնչվում է ամեն յերկրի պրոլետարական միջա-
վայրում: Խաղաղություն բոլոր ժողովուրդների մեջ.
վերջ պատերազմներին—այս խոսքերը վաղուց են հըռ-
շակված բոլոր ժողովուրդների պրոլետարական կու-
սակցությունների կողմից: Յեվ ուս-յապոնական վե-
ճի հենց սկզբից, ինչպես ուսական, նույնպես և յա-
պոնական սոցիալ-դեմոկրատները խաղաղության կոչ
էյին անում և բողոքում յերկու ժողովուրդներին ան-
ամոթաբար միմյանց դեմ գրդուելու դեմ:

Պատերազմները մեր թշնամիների ձեռքի գործն են, ձեռքի գործն են կապիտալիստների և կառավարությունների, վորոնք հարստանում են մեր գծախտությունների դնով, վորոնք շահի պատճառով իրար հետ կռվում են և մեզ են ուղարկում իրանց մեղքերը քաղելու: Յեվրոպայի զանազան պետություններ, ընկած շահի յետևից, ձեռնարկում են զազութային պատերազմներ, վորոնցից մեծամեծ հարստություններ են սպասում միայն և միմիայն կապիտալիստները:

Իսկ Յապոնիայի դեմ մղվող պատերազմը: Ո՞ւմ և հարկավոր այդ պատերազմը: Ի՞նչ են սպասում նրանից մեր կապիտալիստները: Այս պատերազմն անիմաստ է, վոչ վոքի հարկավոր չէ, բերելու չէ միայն թշվառություններ, բերելու չէ միայն ավերմունքներ: Յեվ այս պատերազմի համար մենք պարտական ենք միայն մեր ինքնակալ կառավարությանը:

Ամեն մի յերկրում, վորտեղ քաղաքական ազատություն կա, այսպիսի անիմաստ պատերազմի ծագումն անկարելի չէ: Այնտեղ, վորտեղ կառավարության իշխանությունը սահմանափակված է, վորտեղ կառավարությունն իր ամեն մի արածի համար պետք է նախ և առաջ խնդրի ժողովրդական ներկայացուցիչների թույլտվությունը, — այնտեղ այդ ժողովրդական ներկայացուցիչները չեյին թույլ տա կառավարությանը, վոր նա անմտորեն հարյուրավոր միլիոններով ժողովրդական զրամներ ծախսերը Մանջուրիայում յերկաթուղի շինելու, անհարկավոր հողեր խլելու և դրանով էլ հարեան պետությունների հետ ընդհարման պատճառ տալու: Նույնիսկ տիրող դասակարգերը — կապիտալիստների դասակարգերը — թույլ չեյին տա

կառավարությանը, վոր մի այդպիսի վտանգավոր և անմիա խաղի ձեռք զարկե: Միայն մեղանում, վորտեղ ժողովրդական շահերի ներկայացուցչության փոխարեն տիրում է կամայականություն և մեծամտություն, միայն մեղանում, վորտեղ արգելվում է հասարակական վորակ հարցի ազատ քննադատություն, միայն մեղանում ինքնակալ կառավարությունը կարող էր յերկիրը հասցնել ավերմունքի դուռը և նրան ձգել արյունահեղ ընդհարումների և դժբախտությունների դիրկը:

Յեվ թող այդ կառավարության դիւին թափվեն տնավեր ժողովրդի բոլոր հեծեծանքներն ու անեծքները, իր առաջացրած բուրժուական պատերազմի բոլոր սարսափներն ու թշվառությունները:

Ընկերներ, մեր ինքնակալ կառավարության շքնորհիվ մեր առաջ կա մի սարսափելի արյունհեղություն: Ավելի էս սարսափելի են այդ արյունհեղության հետևանքները: Նույնիսկ «Новое Время» թերթը տարակուսած հարցնում է՝ «Նոր Սևաստոպոլ չի սպասում արդյոք մեզ»:

Սևաստոպոլ... Այդ սրանից հիսուն տարի առաջ էր, Ղրիմի պատերազմի սարսափների ժամանակ: Նիկոլայ I-ի կառավարությունը, վոր ամբողջ ժողովրդին պահում էր ստրկության մեջ, Ռուսաստանը հասցրեց ծայր աստիճան ավերմունքների դուռը և իր անմիա քաղաքականությամբ պատճառ յեղավ ընդհարման ծրարանիայի և Անգլիայի հետ: Այդ ընդհարումը հասավ պատերազմի, վոր շատ յերկար տևեց և անհամար մարդկային կյանքեր և միջոցներ կլանեց և վերջապահ ուսական բանակի պարտությամբ Սևաստոպոլի մոտ:

Յեւ վաղ վաղ միայն բանակի պարտություն եր, այլ բովանդակ յերկրի պարտություն, խորտակումն եր բովանդակ պետական կարգերի, վոր հաստատված եր ժողովրդի ստրկության վրա, ճորտատիրական իրավունքի վրա: Նիկոլայ I-ինն անկարող յեղով տանել այդ պարտությունը և թունավորվեց: Սկստապուլն ակներև ցույց տվավ թե Ռուսաստանին վնասեց և հասցրել նրա բռնակալական կառավարությունը:

Անկարելի յեր Սկստապուլից հետո պահպանել ճորտատիրական իրավունքը, վոր սպառնում եր հիմնովին կործանել Ռուսաստանը:

Ալեքսանդր Յերկրորդի կառավարությունը՝ ճարհատյալ վերցնում ե ճորտատիրական իրավունքը և պետական հաստատությունների մեջ վորոշ բարենորոգումներ և մտցնում, սակայն միապետությունը ֆուռ և կանգուն և շարունակում ե ժողովրդին պահել աղքատության և տգիտության մեջ, շարունակում ե խեղդել ամեն մի ազատ խոսք, շարունակում են կամայականությունն ու բռնությունը: Յեւ անա կառավարության կեսդարյա աշխատանքների պտուղները: Ավերված մի յերկիր, մշտական սով գլուղերում, դժգոհություն հասարակության բոլոր խավերում, կաշառակերություն, արքունի գանձի գողություն և աշխարհ հափշտակություն... և ի լրումն այդ բոլորի՝ անմիտ պատերազմ հեռավոր ծայրերկրում: «Նոր Սկստապուլ չի սպասում արդյոք մեզ»:

Նման և նրան: Ինչպես այն ժամանակ, մոտ 50 տարի սրանից առաջ, դեռ պատերազմից առաջ ամեն մի խելահաս մարդու համար պարզ եր, վոր ժողովրդի ստրկության վրա հիմնված կարգը փտած և, այնպես

եւ այժմ Ռուսաստանի բոլոր խելքը գլխին և անկաշառ մարդիկ տեսնում են վոր ինքնակալությունը մի բարբարոսական լուծ ե, վոր ճնշում և անարգում ե ուսարդուրդին: Ինչպես այն ժամանակ հեռավոր ծայրերկրում պատերազմը լրումն եր կառավարության քաղաքականության հակառակ ժողովրդի շահերի, այնպես և ե այժմ կառավարության կռիվը ժողովրդի դեմ և հեռավոր արևելքի պատերազմը: Սակայն միթե միայն նոր Սկստապուլը կարող ե ազատել մեզ բարբարոս ինքնակալությունից: Միթե Ռուսաստանն այնքան պիտի սպասե իր ազատությանը, մինչև վոր կառավարությունը կատարյալ պարտություն կրե:

Մեր յեռանդից, ընկերներ, ինքնակալության դեմ մարտնչող բանվոր ժողովրդի յեռանդից և կախված Ռուսաստանի բախտը: Ինչքան ավելի յեռանդով տարվի հեղափոխական պայքարը, ինչքան ավելի համառ պնդի բանվոր ժողովուրդն իր քաղաքական ազատության պահանջների վրա, ինչքան ավելի ուժեղ լինի ժողովրդական մասսաների ապստամբությունն իրանց ճնշողների դեմ, այնքան ավելի մեծ շանսեր կլինեն Ռուսաստանի համար առանց նոր Սկստապուլի առաջ դնալու:

Միաբան սրտով դեպի հեղափոխական աշխատանք, ընկերներ: Մենք պատմական կարևոր մոմենտներ ենք, լուր ուշիվքը, տասնապատկենք մեր յիռանդը, Պատմենք ժողովրդին, թե ով և նրա բոլոր թշվառություններին իսկական հանցավորը, ում վրա յե ընկնում պատերազմի առաջիկա սարսափների պատասխանատվությունը:

Յեւ թող ի պատասխան կառավարության ժողո-

վրդին ուղղած կեղծավոր ղեմումը հնչվի ժողովրդի միաձայն դռը:

Կորչի ինքնակալությունը,

Կեցցե՛ք քաղաքական ազատությունը:

Ռուս. Սոց. Դեմ. Բան. Կուս. Պետերբուրգի Կոմիտե:
Փետրվար, 1904 թ.

5. ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՆԱՆ ՅԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(ՌՍԴԲԿ Պետերբուրգի Կոմիտեի 1904 թ. պրոկլամացիան)

ՌՈՒՍՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱ-
ԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրներին, միացե՛ք:

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՆԱՆ ՅԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄՈՒ- ՐԱՑԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինքնակալութիւն, արքունի գանձի գողութիւն, կաշառակերութիւն, կամայականութիւն, ապօրինութիւն՝ այս բոլոր յերևույթները անմիջականորեն կապված են իրար հետ. դրանք բոլորը միևնույն ընդհանուր յեղանակի (մոտիվ) առանձին փոփոխականներն են (վարիացիա): Կառավարել յերկիրը՝ առանց ժողովրդական ներկայացուցիչների հսկողութեան, առանց հասարակական կարծիքի դատի, արգելելով ամեն մի ազատ խոսք, անտանելի կերպով ճնշելով հասարակական ամեն մի նախաձեռնութիւն, վոչ այլ ինչ է, յեթե վոչ ինքնակալների ամբողջ մի բանակի տիրապե-

սութիւն, սկսած մինիստրներից մինչև դեմատվոյի պետը և դավառային իսպրավնիկը (վոստիկանապետ): Կամայական բարձրագույն հրամանները լրացվում են զանազան մինիստրների կամայական վորոշումներով, նահանգապետների և վոստիկանապետների կամայական կարգադրութիւններով, ամեն տեսակ գերատեսչութիւնների պետերի կամայական շրջաբերականներով, իսպրավնիկների, վոստիկանների կամայական հրամաններով: Յե՛վ այս բոլորը՝ պետական իշխանութեան հովանավորութեան տակ. դրանց չի կարելի քնննադատել, դրանց չի կարելի չհնազանդել, ինչքան եւ դրանք անմիտ լինեն: Ինքնակալների համար որեւէ չկա գրված: Ռուսաստանում իրավաւարդի փոխարեն տիրում է՝ ինքնակալների կամքը, կամայականութիւնը, որին հաղանցութիւնը: Յե՛վ ինքնակալների այդ բաղմութիւնը, վորոնց գործողութիւնները մատչելի չեն հասարակական հսկողութեան, Ռուսաստանում տնօրինութիւն են անում անվերադարձ կերպով, վորպես լիազոր տերեր, վորպես իրանց պապական կալվածում: Պործելով ըստ իրանց հայեցողութեան, նրանք չեն մոռանում իրանց ոգուտը: Յերկիրը նրանց սեփականութիւնն է, բնակիչները՝ նրանց հարկատուները: Վոչ մի տեղ կաշառակերութիւնն այնպես չեր զարգացած, ինչպիսի Ռուսաստանում, վոչ մի տեղ այնպես նշամոթաբար, բռնի և զանազան պատրվակներով փող չեն դուրս կորզում բնակիչներից, ինչպես Ռուսաստանում, վոչ մի տեղ արքունի փողերն այնպես չեն հափշտակվում զանազան չինովնիկների ձեռքով, ինչպես Ռուսաստանում: Ինքնակալութիւն, արքունի գանձի գողութիւն, կաշառակերութիւն, կամայականութիւն և

ապորինություն—սրանք բոլորը միայն զանազան ձև-վերն են բյուրակրատիայի միեւնոյն անկոնտրոլ իշխանության բովանդակ յերկրում: Ուստի և զարմանալի չէ, վոր պատերազմի ժամանակ յերեաց, վոր Ռուսաստանը պատրաստ չէ և վոչ մի բանի համար: Զինվորական պահեստներում, վորտեղ հաշվում եյին յերկար տարիների պաշար, դուրս յեկավ, վոր միքանի քսակ փչացած ալյուր կա միայն: Պորտ-Արտյուրում, վորտեղ պետք է լինել ամեն տեսակ մթերքի հինգ տարվա պաշար, հենց ըստ կառավարութեան հայտարարութեան՝ կա միայն մի տարվա պաշար, այն եւ բնակիչները քաղաքից դուրս հանելուց հետո: Սիբիրի յերկաթուղին մարդկանց և բեռների վորոշած քանակութեան կեան անդամ չի կարող փոխադրել: Տաք հագուստ չկա զինվորների հանար, վորոնք փոխադրվում են ապրանքատար վագոններով: Սիբիրի խիստ ցրտերից հարյուրավոր մարդիկ ճանապարհին սառչում են և մեռած են տեղ հասնում: Նույնիսկ զուտ զինվորական ինչք՝ զենք, վաւոր, ամուրի ետյն չկան ձեռքի տակ այն քանակով, ինչ քանակով վոր պետք է լինեյին, իսկ այդ բոլորի վրա ծախսվում եյին հարյուր և հազար միլիոններով ժողովրդական փողեր, իսկ այդ բոլորի համար տասնյակ միլիոն գյուղացիներ տասնյակ տարիներով սոված եյին մեռում: Յեւ այդ գումարների մեծագույն մասը թալանվում եր զանազան մեծ ու փոքր ինքնակալների ձեռքով: Բեւ ահա այսօր, ներկա տաքնապալից մոմենտին, յերբ կառավարութեան ինքն և ստիպված խոստովանուած, վոր վոչ մի բան պատրաստված չէ, ցարական վոստիկանութեանը մի իսկական արշավանք և սկսել բնակիչների

զրպանների վրա: Վոստիկանական գործակալները գործում են յեռանդով. նրանք ստիպում են բոլոր հոսարակական հիմնարկներին իրանց գումարները նվիրաբերել զանձարանին, վոր դրանով չինովնիկների գողացած փողերի պակասը լրացվի:

Բոլոր զեմսավոյական վարչութեանները, բոլոր քաղաքային վարչութեանները, բոլոր հոգաբարձութեանները, բոլոր բարեգործական հիմնարկութեանները թալանված են: Առևտրական ընկերութեանները խոշոր գումարներ են նվիրաբերում և ապա այդ գումարները մասնադրում են մանր առևտրականների վրա: Նույնիսկ բանվորներից կորզում են նրանց վերջին կուպեկը, ստիպելով նրանց, վոր արտաժամյա աշխատանք կատարեն և իրանց աշխատավարձից պատերազմական կարիքների համար վորոշ տոկոս հատկացնեն: Ուսուցիչներ, բժիշկներ, գրասենյակի ծառայողներ—բոլորն իրանց ուժիկները խուզած են ստանում. բոլորից մասն են հանում պատերազմական ծախսերի համար: Փող կորզելը կատարվում և տոանց քաշվելու, ցինիկարարաշքարա հափշտակութեան: Իր միջոցները վատնած կառավարութեանը չի ամաչում այդպիսի միջոցներ ղեմել:

Բայց այս դեռ բոլորը չէ: Կարելի չէ թալանել ժողովրդական փողերը, յերբ դրանք գտնվում են վորեւ հիմնարկութեան ձեռքում կամ յերբ դրանք վճարվում են այս կամ այն հիմնարկութեան կողմից իրեւ մասնավոր աշխատավարձ: Սակայն ինչպիսի մոտենալ այն մարդկանց, վորոնք ուղղակի կախում չունեն վոչ կառավարութեանից, վոչ եւ նրա գործակալներից: Այդպիսիների զրպանները զատարկելը վտանգավոր և Կա-

առավարութիւնը դրա համար գտել ե նոր միջոց: Վորտեղ թալանելն անկարելի յե կամ անհարմար, այնտեղ մնում ե մութացկանութիւն անել: Կառավարութիւնն այդպիսի միջոցներն անգամ խոտելի չի համարում: Պատերազմն սկսվելուց մի շաբաթ դեռ շանցած ահա արդեն հայտարարվեց բարձրագույն հրաման՝ բովանդակ կայսրութիւն մեջ հանգանակութիւն անել բանակի ե նաւատորմի ուժեղացման համար: Յեվ այս դեռ պատերազմի առաջին շաբաթին, պատերազմի, վոր, ամենայն հավանակտնութիւնմբ, պիտի տարիներ շարունակվի: Կարելի՞ յե արդոք սնանկութիւն աւելի լավ վկայական գտնել, քան այն, վոր կառավարութիւնն ինքը տվավ իրան իր բարձրագույն մուրացկանութիւնմբ: Թալան ե մուրացկանութիւն. ահա սխրագործութիւններ, վորոնցով ինքնուկալ կառավարութիւնն արտաքին տաքնապի առաջին իսկ մոմենտին իրան հոչակեց: Սխրագործութիւններ՝ արժանի սխտեմի: Միապետութիւն, կաշառակերութիւն, արքունի դանձի գողութիւն, կամայականութիւն ե ապորինութիւն իազաղ ժամանակ, իսկ կրկնի ժամանակ այս բոլոր հրապույրներին ավելանում են նաև թալան ե մուրացկանութիւն:

Ռուս. Սոց. Դեմ. Կուս. Պետերբուրգի Կոմիտե:
Փետրվար 1904 թ.

6. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՐՑԸ ՊԵՏԲ Ե ԼՈՒԾԻ ԻՆՔԸ ԺՈՂՈՎՈՐԴԸ

(ՌՍԳԻԿ Պետերբուրգի կոմիտեյի 1904 թ. պրոկլամացիան)

ՌՌԻՍ. ՍՈՑ. ԴԵՄ. ԲԱՆՎ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոկլամացիա բոլոր յերկրների, միացեմ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՐՑԸ ՊԵՏԲ Ե ԼՈՒԾԻ ԻՆՔԸ ԺՈՂՈՎՈՐԴԸ

Այս ընթացիկ որերում, ընկերներ, մեզ բոլորիս հուզում են Հեռավոր Արևելքի դեպքերը: Թե ով կըլի նի հաղթողն այս արյունահեղ կռվի մեջ՝ ցույց կըտա ապագան: Սակայն յերկու դեպքումն ել, մենք կըհաղթենք Յապոնացիներին, թե նրանք կոչնչացնեն մեր նաւատորմն ու բանակը, հայրենիքի սեղանը համենայն դեպս մեզանից մեծամեծ զոհեր պիտի պահանջե՞ թե մարդկային, թե դրամական: Թող մեր հաղթանակի դեպքում յապոնացիք պարտավորվեն մեզ վերադարձնել մեր պատերազմական ծախսերի մի մասը, սակայն կորած մարդկային կյանքն այլևս չի վերադառնա:

Ինչպես ել վերջանա պատերազմը, պատերազմը մնում ե պատերազմ՝ մի սոսկալի, անազորույն, անմիտ չարիք: Իսկ յապոնական պատերազմն ավելի ես մեծ չարիք ե, վորովհետեւ նա մղվում ե բացառապես կապիտալիստների ե նրանց հյուս-հպատակ կառավարութիւն շահի համար. դրանք ցանկանում են նույն

իսկ զենքի ուժով իրանց ձեռքում պահել Հեռավոր Արևելքում շուկաներ իրանց ապրանքների ապաման համար: Իսկ ի՞նչ է զենքի ուժը, յեթե վոչ մեր կյանքը, մեր առողջությունը, մեր ընտանիքների մարդկային համեստ գոյությունը: Յեւ վաճառք, յերբ ուսուսական կապիտալիստների վտանգությունները հանդիպել են յապոնացիների կողմից բնական դիմադրության, այժմ, ինչպես դուք կարդացիք մանիֆեստում, ուսաց ցարը հայանում է՝ «հաստատապես հուսալով մեր բոլոր հավատարիմ հպատակների միասիրտ պատրաստականություն վրա՝ մեզ հետ միասին պաշտպանելու հայրենիքին»:

Իայց ինչո՞ւ միջանի տարի սրանից առաջ, յերբ մտածում եյին տիրել Մանջուրիային, յերբ պատրաստվում եյին յերկաթուղի և ամրոցներ շինել, յերբ այդ նյութանքի վրա այն ժամանակ միլիոններով ծախսում եյին ժողովրդական աշխատավորական փողերը— ինչո՞ւ այն ժամանակ թագավորը չդիմեց ժողովրդին և չհարցրեց. «Ի՞նչ անենք»... Կասկած չկա, վոր ժողովուրդը ըն իր բազմափորձ բազմամիլիոն գլխով կըտար իր խելոք պատասխանը, և պատերազմ չեր լինի, կարիք ել չեր լինի զոհաբերության համար կոչ անելու:

Մակայն ցարական կառավարությունն այդ բռնավ չարավ: Ընդհակառակը նա միշտ իր ձեռքի տակ յեղած ուժերով պայքարում եր ժողովրդի ազատ խոսքի դեմ: Յեւ նույն այն գնդակները, վորոնցով այժմ հարվածում են թշնամի յապոնացիներին, ցարական կառավարությունն ստիպում եր զինվորներին նույն այդ գնդակներն ուղղել իրանց իսկ յեղբայրներին՝ ուսա բանվորներին կրծքին:

Ինչո՞ւ ուրեմն այդ նույն կառավարությունը, վոր կռիւ յե դուրս գալիս մեր՝ բանվորներին դեմ, վոր պայքար ե մղում ժողովներին, խոսքի, մամուլի, խղճի և անձի ազատության դեմ, վոր չի հարցնում մեր համաձայնությունը մեզանից— ժողովրդից— հավաքած փողերը ծախսելու համար, այժմ իր հույսը դնում ե մեր ոգնության վրա, ինչո՞ւ կառավարությունը, առանց մեր գիտության և համաձայնության ամեն բան անում ե, վոր պատերազմ առաջ բերե, և այժմ, յերբ արդեն սկսված ե արյունահեղ կռիվը թշնամիների միջև, ստիպում ե թագավորին, անհնազանդ բանվորներին գնդակահարելու կոչ անող թագավորին, վոր իր հույսը դնե ժողովրդի «միասիրտ պատրաստականության վրա»՝ իր անձը զոհելու ցարական կառավարության և կապիտալիստների ոգտին:

Ինչո՞ւ: Տվե՛ք ձեզ, ընկերներ, այս հարցը և քիչ մտածելուց հետո կըգտնեք նրա պատասխանը. նրա համար, վոր ցարական կառավարության համար ժողովուրդը վոչ թե մեծ տեր ե, այլ վախկոտ ստրուկ, նույնիսկ ավելին, պարզապես մի հոտ վոր խաղաղ ժամանակ պարտավոր ե աշխատել կապիտալիստների համար, իսկ պատերազմի ժամանակ իր անձը զոհելու ծառի, կապիտալիստների և չինովնիկների համար ժողովուրդը թնդանոթի միս ե միայն:

Կարդալով մանիֆեստներն ու կոչերը, չի կարելի մոռանալ, վոր դրանց հեղինակները նույն գալերն են միայն գառան մորթի հագած: Ցարական կառավարությունը մեզ հո չի դիմում իբրեւ ազատ քաղաքացիների, մեր ինքնահոգար համաձայնությունն առնելու համար. վոչ նա շողոքորթ ձևով հրամայում ե, վոր

մենք ամեն բան դոճենք: Ձոճենք, սակայն ում և ինչի՞ համար—այդ մասին մենք նույնիսկ չենք կարող խոսել: Ստորուկների վիճակն ամեն տեղ նույնն է—հընազանդվել: Յե՛վ յեթե նեակում կայանար բանլորահան հավաքույթ, վորտեղ պատերազմի պատճառների մասին ազատ խոսվեր, ցարական կառավարութիւնն առանց յերկար ու բարակ մտածելու թնդանութի ուժերն երբեք չէին ժողովրդին:

Ցարական կառավարութիւնն այլապես վարվել չի ել կարող, վորովհետեւ թույլ տալով ժողովուրդն և խոսքի ազատութիւն, ընդունելով վոր ժողովուրդն իրավունք ունի քննադատելու կառավարութեան գործողութիւնները, նա հենց դրանով վոչնչացրած կըլինի ինքնակալութիւնը: Յերկուսից մեկը. կամ ինքնակալութիւն, յերբ ժողովուրդն իրավագուրդ է և բանտի ու մահի յերկյուղի տակ պետք է լուռ ու մունջ հնազանդվի ցարական ամեն մի խոսքին, կամ ազատ ժողովրդագետութիւն, այսինքն՝ դեմոկրատիք հանրագետութիւն, յերբ ժողովուրդն ինքն է իր ներկայացուցիչների միջոցով իր վրա՝ և՛ հարկեր դնում, և՛ պատերազմ հայտարարում: Վորտեղ գերիշխում է ժողովուրդը, այնտեղ կա ազատութիւն, վորտեղ թագավորը՝ այնտեղ ստրկութիւն, բռնութիւն և խաբէյութիւն:

Ուշագրութեամբ նայեցեք ձեր շուրջը, ընկերներ, և մտածեցեք, թե դուք ինչ գեր եք կատարում այս պատերազմի և առհասարակ ուստական կյանքի մեջ: Միթե դուք չեք տեսնում ամենքի համար այս ակներև փաստը. կառավարութիւնը ժողովրդից հարկեր է հավաքում, իսկ թե ինչի՞ վրա պետք է ծախսում

այդ հարկերը, դրա մասին ժողովրդի կարծիքը չի հարցնում: Կապիտալիստներն իրանց ոգտի համար քիթները կոխել են Արեւելք և յերկար տարիներից ի վեր այնտեղ արդեն պատերազմ են նյութում. կառավարութիւնը նրանց ոգնում է, իսկ բանվորներին, յերբ նրանք հավաքվում են իրենց կենսական կարիքների մասին իրար հետ խորհրդակցելու,—կառավարութիւնը հրամայում է սվիններով ցրել: Քանի դեռ պատերազմ չկար, գործարաններում մեր քրտինքը քամում էյին: Այժմ պատերազմ է, կապիտալիստներն ու չինովնիկները գոչում են. «Հայրենիքը վտանգի մեջ է», և մեղ ուղարկում են խաղաղ ովկիանոսի ափերը մորթվելու համար:

Ընկերներ, թշվառութեան որերին, ինչպիսին պատերազմն է, մի լինիք փոքրոգի: Միշտ աչքի տռաջ ունեցեք իսկական ուստական կյանքը: Մի մոռանաք, վոր մենք՝ բանվորներս, ուժեղ ենք մեր ընկերական միութեամբ միայն և այն գիտակցութեամբ, վոր ճանաչում ենք, թե ով է մեր թշնամին: Յեթե այսօր յապոնացիք մեր թշնամիներն են, դա միայն մեր մշտական թշնամիների-կապիտալիստների և ցարական կառավարութեան շնորհիվ է: Յապոնական պատերազմը հետեանք է միայն կառավարութեան և կապիտալիստների միութեան: Պատերազմն սկսվել է առանց ժողովրդի համաձայնութեան: Յեթե հաղթեն ուսները, դրանից պիտի ողուտ քաղեն միայն կապիտալիստներն ու չինովնիկները. պարտութեան դեպքում՝ ամբողջ ծանրութիւնը ժողովրդի վրա պիտի ընկնի:

Թե՛ թագավորը, թե՛ կապիտալիստները գոչում են. «Հայրենիքը, վտանգի մեջ է»: Բայց հայրենիքը,

ընկերներ, այդ մենք ինքներս ենք—ամբողջ ժողովուրդը: Այդ ժողովրդի ոգտի համար ավելի լավ երվոր այդ պատերազմը չլիներ. այսօր յեթե պատերազմը կա, դրա պատճառն այն է, վոր ժողովրդին վոչ միայն չեն հարցրել, այլև սվինների ու յոժով միշտ ըստիպել են լռել:

Ի սեր հայրենիքի, ուրիշ խոսքով՝ ի սեր մեր իսկ, մենք պետք է ջանք թափենք, վոր այն ինչ վոր կատարվել է, այլևս չկրկնվի. մենք պետք է ձգտենք ժողովրդապետութան: Ի սեր հայրենիքի, այսինքն՝ մեր իսկ, սոցիալ-դեմոկրատիայի շարքերում կռվելով կապիտալիզմի դեմ, մենք պիտի կռվենք նաև ցարի ինքնակալութան դեմ:

Յեւ ամենից առաջ մենք պիտի տապալենք ցարական ինքնակալությունը և Ռուսաստանում նրատեղ հաստատենք իսկական ժողովրդական իշխանություն՝ դեմոկրատիք հանրապետություն:

Յեւ միայն այն ժամանակ այս սոսկալի հարցը՝ նոր պատերազմ լինի, թե՞ վոչ, կըլուծե ինքը՝ ժողովուրդը, իր իսկական շահերն նկատի առած:

Կորչի ինքնակալությունը և կեցցե՞ դեմոկրատիք հանրապետությունը:

Կեցցեն սոցիալիզմը և մեր Ռուս. Սոց. Դեմոկր. Բանվորական Կուսակցությունը:

Փետրվար 1904 թ.

Պետերբուրգի Կոմիտե
Կոմիտեի քարան

7. ՄԵՐ ԱՆԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԲՈՒՄ

(Ռ. Ս. Դ. Բ. Կ. Պետերբուրգի Կոմիտեի 1904 պրոկլամացիան

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՅԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱՆԵ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոկլամացիոն բոլոր յերկրների, միացե՛ք:

ՄԵՐ ԱՆԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Պատերազմը դեռ նոր է սկսվել, սակայն ոռւսաց կառավարությունն արդեն կարողացել է հայտնաբերել իր ամբողջ թուլությունը և անպատրաստությունը, մեր պետական ինքնակալական կարգի ամբողջովին խախտւտ ու փտած լինելը:

Ծովային վողբերգության առաջին գործողությունն արդեն խաղացվեց: Մեր տասներկու ռազմական նավերից յեոթը շարքից դուրս են յեկել: Ռուսաց կառավարությունը հանդգնություն ունեցավ իր աններելի հանցանքը բարդելու ուրիշների վրա, իր խայտառակությունը արդարացնելու համար՝ յապոնացիների ասիական խորամանկությունն առաջ բերել, մեր անաջողությունները բացատրելով թշնամու գիշերային անսպասելի հարձակմամբ: Չքնենք, թե յապոնացիք իրավացի, թե՞ անիրավացի եյին: Այդպիսի հանկարծակի հարձակումներ մինչև պատերազմի հայտարարությունը լինում եյին նաև առաջներում: Պետք է

միշտ պատրաստ լինել ամեն մի պանդահականութեան համար: Հետեւեալս մեր նախատորմը պետք է շարունակ արթուն հսկեր, պետք է լիներ միշտ կազմ ու պատրաստ և վոչ թե կաշգնէր խարխալ ձգած: Մեր ծովային պարտութեան ամբողջ խայտառակութիւնը հենց այն է, վոր այդ պայմանները պահված չեն յեղել: Բանից դուրս է գալիս, վոր մենք խարխալ ձգած հտնդիստ կանգնած ենք յեղել վոչ թե միայն հարձակման չարաքաստիկ գիշերը, այլև հաջորդ օրը, յերբ յաղոնական ամբողջ եսկադրան կրկին մոտեցել է Պորտ-Արայուրին և սկսել է ուժեղանալ մեզ: Այլև իսկ կարելի արդարացնել մեր կառավարութեանը, նկատի առնելով այն հանգամանքը, վոր պատերազմական գործողութիւններն սկսված ելին դեռ առաջուց: Արդեն տեղի յեր ունեցել ընդհարում Չեմուլսոյի մոտ, վորտեղ կործանվեցին «Վարյագ» և «Կորեյեց» նավերը: Ուստի և մեր նախատորմը պետք է արթուն լինէր: Ի լրումն այդ բոլորի «Յենիսեյն» ել խորաակվեց իր խոյակների պայթուցիկ: Թշնամին գրավել է նաև բազմաթիւ մանր փոխադրական նավեր: Իսկ ինչ կորուստներն են ունեցել յապոնացիները: Պաշտոնական տեղեկութիւնները հաղորդում են, վոր համարներն խորտակվել են միայն մի հաժանով և միքանի ակառակներ: Այսպես ուրեմն Պորտ-Արայուրի եսկադրայում մնացել են հինգ խոշոր ռազմանավ, մինչդեռ յապոնական նախատորմը բաղկացած է 15-ից: Վրադիվաստոկի յերեք հաժանավերը մեզ ոգնել չեն կարող: Ուշք յապոնացիների կողմն է: Մեր զրուսթիւնը կըրէտիքական է: Կառավարութիւնն իր գլուխը կըրցըրել է: Հարց է հարուցված, վոր Բալթիկ և Սև ծովերի

ների նախատորմներն ուղարկվեն Հեռավոր Արեւելք: Սակայն Տաճկաստանն ու Անգլիան, 1878 թ. Բերլինում կնքված պայմանագրի հիման վրա, թույլ չեն տալիս, վոր մեր նախատորմը Սև ծովից դուրս գա: Բացի այդ նախատորմը անպետք ել է հեռավոր ծովագնացութեան համար: Միակ հուշար մնում է Բալթիկ ծովի նախատորմը: Բայց այն ժամանակ Պետերբուրգը և Ռուսաստանի հյուսիս-արևմուտքը մնում են բոլորովին առանց նախատորմի՝ միայն չորս ամբողջ պաշտպանութեան տակ: Յապոնական ուշքերի անսահման գերակշռութիւնը ծովի վրա նաև նրանից է, վոր ներանք ունեն հոյակապ նավահանգիստներ, հրաշալի արհեստանոցներ և քարածխի ու այլ ռազմամթերքների պաշարներ: Այս բոլորից մենք Հեռավոր Արեւելքում վոչինչ չունենք: Պորտ-Արայուրի դեկերը վոչ մի բանի պետք չեն, իսկ վրադիվաստոկը բոլորովին կտրված է գլխավոր եսկադրայից: Այս բոլորից կարելի չէ միայն մի յագրակացութիւն հանել, վոր այսօր ծովի վրա իշխում են յապոնացիները, իսկ մեր ծովային ուշքերը ծայր աստիճան ուշժամապառ են յեղել:

Այժմ տեսնենք, թե ո՞վ է գերիշխում ցամաքի վրա: Հեռավոր Արեւելքում սուսաց զորքի թիւը հասնում էր 180 հազարի: Զորածոյովն այդ թիւը կարող է միայն կրկնապատկել, այն ել յերեք կամ չորս ամսվա ընթացքում: Սակայն յերեք հազար վերսա յերկարութիւն ունեցող մանջուրական յերկաթուղու և անչափ յերկար ծովային սահմանների պաշտպանութեան անհրաժեշտութիւնն ստիպում է մեր ցամաքային ուշքերը բաժանել մանր մասերի: Իր ժամանակին պատերազմական գործողութիւնների տեղը պարենի

և ռազմամթերքի պաշար հասցնելը կապված է համար-
յա անհաղթահարելի դժվարությունների հետ, յեթե
նկատի ունենանք, վոր ամեն մի վագոնին յերեք ա-
միս ժամանակ է հարկավոր այնտեղ գնալ-գալու հա-
մար: Ինչ Յապոնիային է վերաբերում, նա կարող է
400 հազարանոց բանակ դուրս բերել: Իշխելով ծովի
վրա, յապոնացիք կարող են կարճ ժամանակում պա-
րենի, ռազմամթերքի պաշար և անհրաժեշտ ոժանգակ
ուլթեր ստանալ: Այս բոլորը նրանց ձեռքի տակ է:
Այսպիսով, բանից դուրս է գալիս վոր ցամաքի վրա
մեր զորությունը նույնպես շատ լուրջ է: Այժմ հարց է,
ինչի՞ մասին եր մտածում մեր կառավարությունը,
յերբ նա իր ծանր թաթը դնում եր Մանջուրիայի վրա,
յերբ նա Հեռավոր Արևելքում Գորդյան հանգույց եր
սարքում: Ինչո՞ւ թագավորը և նրա մինիստրները
կանխորեն չեյին նախատեսում այդ բոլոր անհաղթե-
լի դժվարություններն ու արգելքները: Ինչո՞ւ պա-
տերազմական գործողությունների ամբողջ պլանը հան-
գամանորեն չի մտածված: Ինչո՞ւ ձեռք զարկել մի այդ-
պիսի անմիտ և անիմաստ, սոսկալի նյութանքի (за-
тея): Մեր ինչի՞ն եր պետք մեզանից անչափ հեռավոր
Մանջուրիան: Ինչո՞ւ համար հարյուր միլիոններով ժո-
ղովրդական փողերը ծախսել անմտորեն: Վերջապես
խաղաղասեր թագավորը հանուն ինչի՞ մեր զավակներին
ու յերեխաներին հարյուր հազարներով ուղարկում է
վայրագ սպանդանոցը: Միայն բռնակալական միապե-
տական Ռուսաստանում հնարավոր է այսպիսի անմիտ,
անիմաստ և դաժան ծաղր ճնշված ժողովրդի վրա:
Միայն ռուսաց ցարն է ընդունակ այսպիսի սոսկալի
արյունահեղ դատեր տեսնելու: Յեթե լինեք Ռուսաս-

տանում ժողովրդական ներկայուցուցչություն, մեզ
այսոք հանկարծակի չեյին բերիլ, Մանջուրիայի ան-
նպատակ դրավումը տեղի չեր ունենալ, սոսկալի ար-
յունահեղությունը չեր լինի: Ռուսաց կառավարությունն
այժմ վոչ մի միջոցի առաջ չի կանգնիլ, Յեթե հար-
կավոր լինի, նա նորից և նորից հարյուր հազարավոր
զինվորներ կուղարկի դեպի մահ, քանի վոր Ռուսաս-
տանում 120 միլիոնից ավելի կան դրանցից: Կասկած
չկա, վոր մենք վերջիվերջը կըհաղթենք մեր զորքի
բազմությունը, այդ նշանակումով, վոր մենք կըհաղ-
թենք շնորհիվ այն հանգամանքի, վոր զինվորներին
չեն արստալ, վոր մեզանում թնդանոթային միսն ա-
ռատ է. կըվոչնչանան գնդերը՝ գնդերի յետևից, կը-
կազմվեն դիակներից հսկայական լեռներ և այդ լեռ-
ների վրա մենք կըտնկենք փառավոր հաղթության
դրոշակը:

Յեվ ռուսաց թագավորն իր գլուխը կըպսակե
մարդկային խայտառակ սպանդանոցի դափնիներով:
Յեվ նրան կըփառաբանեն յեկեղեցիներում՝ զանգերի
հանդիսավոր ղողանջներով: Այդպես եր ռուս-տաճկա-
կան պատերազմից հետո: Սակայն Նիկոլայ II-ին ար-
դյոք ուրիշ վիճակ չի՞ սպասում: Արդյոք ժողովուրդն
իր դարավոր քնից աչքը բացի չի՞ անի և վերջիվեր-
ջո չի՞ կանգնիլ իր դահիճների դեմ:

Այժմ ուրիշ ժամանակներ են: Ժողովրդի գլուխ
է կանգնած բանվոր մասսան, վորն սկսում է դիտակ-
ցել իր ուլթն ու զորությունը: Կըգա ժամանակ և ցա-
րական զահը ջարդ ու փշուր կըլինի ու կըփոշիանա
քանվոր դասակարգի միաբան հարվածների տակ: Բան-
վոր դասակարգը կըհրաժարվի վերջապես թագավորի ու

նրա կառավարութեան հաճույքի համար թնդանութեան միս լինելուց:

Կորչի ոռոսաց բռնակալի ինքնակալութիւնը:

Ռուս. Սոց.-Դեմ. Բանվ. Կուս. Պետերբուրգի Կոմիտէի
Փետրվար, 1904 թ.

Տ. ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

15 մարտի, 1904 թ.

Պատերազմ Հեռավոր-Արեւելքում.— Կառավարութեան հաղորդագրութիւններ և պաշտոնական արձանագրութիւններ ոռոս-յապոնական պատերազմի առիթով.— Դիվանագիտական հնարավոր սխալներ.— Միջազգային իրավունքի խախտման վերաբերյալ հարցեր.— Չեզոք պետութիւնները և քաղաքական ընդհանուր վիճակը:

Դեպքերի հաջորդական ընթացքը պատկերանում է մի շարք կառավարական հաղորդագրութիւններին մեջ, վոր մենք այստեղ առաջ ենք բերում լրիվ:

Արտաքին գործերի մինիստրութիւնը արտասահմանի ոռոսական ներկայացուցիչներին ուղարկել է հունվարի 24 թվակիր հետեյալ շրջաբերական հեռագիրը.

«Իր կառավարութեան հանձնարարութեամբ յայտնական զեապանը բարձրագույն արքունիքում հանձնել է մի հայտագիր (նոտա), վորի մեջ հաղորդում է ի գիտութիւն կայսերական կառավարութեան Յապոնիայի վճռի մասին—խզել հետագա բանակցութիւնները և զեապանին և միսիայի ամբողջ կազմը Պետերբուրգից յետ կանչել»:

Սրա հետևանքով թագավոր կայսրին հաճելի յեղով բարձրագույնս հրամայել, վոր Տոկիոյի ոռոսական զեապանը՝ կայսերական միսիայի ամբողջ կազմով անհապաղ թողնի Յապոնիայի մայրաքաղաքը:

«Տոկիոյի կառավարութիւնը, չսպասելով անգամ, վոր իրան հանձնվի կայսերական կառավարութեան կողմից այս որեւէ ուղարկված պատասխանը, գործողութեան նման յեղանակով Յապոնիայի վրա յեձգում ամբողջ պատասխանատվութիւնը այն հետեւանքներին, վոր կարող են ծագել յերկու կայսրութիւնների միջև դիվանագիտական հարաբերութիւնների ընդհատումից»:

Այդ ընդհատմանը նախորդող բանակցութիւնների հոսթիւնը համառոտ բացատրված է մեր դիվանագիտական գերատեսչութեան հունվարի 27-ի հաղորդագրութեան մեջ:

«Անցյալ տարի՝ Տոկիոյի (կարինսետը) խաղաղովկիանոսի ամբերում հավասարակշռութիւն և յերկրի ավելի հաստատուն կարգ հաստատելու պատրվակով, դիմեց կայսրական կառավարութեան, առաջարկելով վերաքննութեան առնել գոյութիւն ունեցող պայմանագրերը, վորոնք վերաբերում են Կորեական գործերին,—գրան Ռուսաստանը հայտնեց իր համաձայնութիւնը:

«Թագավոր կայսրի բարձրագույն հրամանով՝ Հեռավոր Արեւելքում այդ ժամանակ փոխարքայութիւն հաստատված լինելը նկատի առած, Յապոնիայի հետ նոր համաձայնութեան նախագիծ կազմելը հանձնվեց զենեքալ-աղյուտանոս Ալեքսեյեին՝ մասնակցութեամբ Տոկիոյի ոռոսական զեապանի, վորի վրա դրված էր

յապոնական կառավարութեան հետ բանակութիւններ վարելու գործը:

«Չնայած, վոր այս առարկայի առիթով հարուցված հայացքների փոխանակութիւնը՝ Տոկիոյի կաբինետի հետ անցյալ տարվա ոգոստոսից սկսած պահպանում եր բարեկամական բնույթ, բայց և այնպէս, ինչպէս հայտնի յի, յապոնական հասարակական շրջանները, տեղական, նույնպէս և ոտարյերկրյա մամուլը ամեն կերպ աշխատում եյին առաջ բերել յապոնացիների մեջ ռազմական խմորում և դրդել կառավարութեանը զինյալ կռիւի Ռուսաստանի դեմ:

«Այդպիսի մի տրամադրութեան ազդեցութեան տակ Տոկիոյի կաբինետը բանակցութիւնների ժամանակ սկսեց յերևան բերել ավելի և ավելի մեծ պահանջներ, միաժամանակ ձեռք առնելով ամենալայն միջոցներ՝ յերկիրը պատերազմական պատրաստութեան հասցնելու համար:

«Այս բոլոր հանգամանքներն ի հարկե չեյին կարող Ռուսաստանի հանդիսալ խանգարել, սակայն զլրդեցին նրան՝ իր կողմից անել ռազմածովային համապատասխան կարգադրութիւններ: Բայց և այնպէս Հեռավոր Արևելքում խաղաղութիւն պահպանելու անկեղծ ցանկութեամբ վոգեկորված, վորքան թույլ կըտան իր անվիճելի իրավունքներն ու շահերը, Ռուսաստանը արժանավայել ուղադրութեամբ վերաբերվեց Տոկիոյի կառավարութեան հայտարարութիւններին և պատրաստականութիւն հայտնեց՝ ընդունել Կորեա թեքակղզու վրա Յապոնիայի առևտրա-տնտեսական նախամեծար դրութիւնը, առաջադրելով նրան իրավունք՝ այդպիսի դրութիւնը պաշտպանել զինքով յերկրում անկարգութիւններ ծագած դեպքում:

«Սակայն միաժամանակ Ռուսաստանը խստորեն հետեւելով իր բռնած քաղաքականութեան սկզբունքին Կորեայի նկատմամբ, վորի անկախութիւնը և տերրիտորիալ անձեռնմխելիութիւնն ապահովված չիին ինչպէս Յապոնիայի հետ կապված նախընթաց համաձայնութիւններով, նույնպէս և մյուս պետութիւնների հետ կնքած պայմանագրերով, չեր կարող չպնդել:

1. Այդ հիմնական սկզբունքի փոխադարձ և անպայման պահպանութեան վրա. 2. Ռազմագիտական նավակների համար Կորեայի տերրիտորիայի և վոչ մի մասով չորտվելու պարտավորութեան վրա, վորովհետեւ թույլ տալ վորեւէ կառավարութեան այդպիսի մի դործողութիւն, ուղղակի կըհակասեր Կորեայի անկախութեան սկզբունքին, և վերջապէս 3. Կորեայի նեղուցում նավագնացութեան կատարյալ ազատութեան պահպանութեան վրա:

«Սակայն այս մտքով մշակված համաձայնութեան նախագիծը չգոհացրեց յապոնական կառավարութեանը, վոր իր վերջին առաջարկութիւնների մեջ վոչ միայն խույս տվաւ ընդունել այն պայմանները, վորոնք Կորեայի անկախութեան յերաշխիքն են կազմում, այլ և միաժամանակ սկսեց պնդել, վոր վերոհիշյալ նախագիծ մեջ մտցվեն նաև Մանջուրիայի հարցին վերաբերյալ վորոշումներ:

«Յապոնիայի այդպիսի պահանջները չեյին կարող ի հարկե թույլատրելի լինել:

«Ռուսաստանի դրութիւնը Մանջուրիայում հարցը նախ և առաջ վերաբերում ե Զինաստանին և ապա բոլոր այդ պետութիւններին, վորոնք առևտրական

շահեր ունեն Ձինաստանում: Ուստի և կայսերական կառավարութիւնը կտրականապէս վոչ մի հիմունք չեր տեսնում՝ Յապոնիայի հետ Կորեայի գործերին վերաբերող առանձին պայմանագրի մեջ մտցնելու վորէն վորոշում, վոր վերաբերում և ուստաց զորքով գրավւած շրջանին:

«Բացի այդ, կայսերական կառավարութիւնը՝ Մանջուրիայի զինվորական գրավման ընթացքում չի հրաժարւում ճանաչելուց ինչպէս Բողղիխանի գերագույն իշխանութիւնն այդ շրջանի վրա, նույնպէս և այն արտոնութիւնները, վոր ձեռք են բերել պետութիւնները՝ Ձինաստանի հետ կնքած պայմանագրերի գորութեամբ, վորի մասին արդեն համապատասխան հայտարարութիւն և արված ոտարյեկըյա կուրինետներին:

«Նկատի առնելով այդ, կայսերական կառավարութիւնը, հանձնարարելով Տոկիոյի իր ներկայացուցչին, վոր յապոնական վերջին առաջարկութիւններին իր պատասխանը հաղորդե, իրավունք ունեւ հուսալու, վոր Տոկիոյի կարինետն ուշադրութեան կառնե վերե առաջ բերված կշաղատումների նշանակութիւնը և կըզնահատե Ռուսաստանի հայտնաբերած ցանկութիւնը՝ խաղաղ համաձայնութեան դալու Յապոնիայի հետ:

«Մինչդեռ յապոնական կառավարութիւնը չըսպասելով նույնիսկ այդ պատասխանի ստանալուն, վճռել և ընդհատել բանակցութիւնները և խզել դինադիտական հարաբերութիւնները Ռուսաստանի հետ:

«Հետեանքների ամբողջ պատասխանատւութիւնը, վոր գործողութեան այսպիսի յեղանակից կարող են առաջ գալ, ձգելով Յապոնիայի վրա, կայսերական

կառավարութիւնը կրսպասե դեպքերի զարգացման և առաջին իսկ անհրաժեշտութեան միջոցին. ձեռք կառնե ամենակտրուկ միջոցներ՝ պաշտպանելու իր իրավունքներն ու շահերը Հեռավոր Արեւելքում»:

Դիվանագիտական հարաբերութիւնների խզումը Յապոնիայի հետ՝ մեղանում բացատրում եյին վնչ վորպէս նախագուշակ պատերազմի, այլ ազդեցութիւն գործելու մի առանձին միջոց, վոր, ի միջի այլոց, կարող եր առաջ բերել ստար պետութիւնների կողմից բարեկամական միջնորդութիւն: Ի հաստատութիւն այդ հայացքի լրագրերը պատմութիւնից բերում եյին որինակներ, վորոնցով զեղավարվելու դիտավորութիւն ընալ չի ունեցել Յապոնական դիվանագիտութիւնը: Յեւ մինչդեռ մեր կառավարութիւնը հայտարարում և, վոր «կըսպասե դեպքերի զարգացման և առաջին իսկ անհրաժեշտութեան միջոցին ձեռք կառնի ամենակտրուկ միջոցներ պաշտպանելու իր իրավունքներն ու շահերը Հեռավոր Արեւելքում», հենց այդ ժամանակ յապոնացիների կողմից տեղի յե ունենում զինյալ հարձակում ռուսական նավատորմի վրա, վոր կանգնած եր Պորտ-Արտուրի մոտ: Այդ միևնույն որը, հունվարի 27-ին, ստորագրվում և բարձրագույն մանեֆեստը, վորի մեջ ասված և.

«Մեր սրտի համար թանգ խաղաղութեան պահպանութեան հոգացողութիւնների միջոցին մեր կողմից գործ են դրվել բոլոր ջանքերը՝ Հեռավոր Արեւելքում հանգստութիւն հաստատելու համար: Այս խաղաղասիրական նպատակներով մենք հայտնել ենք մեր համաձայնութիւնը Կորեայի գործերի վերաբերյալ յերկու կայսրութիւնների մեջ յեղած համաձայնու-

թյունների քննության համար, վոր առաջարկված էր յապոնական կառավարության կողմից: Այս առարկայի առիթով հարուցված բանակցութունները սակայն չհասան իրենց վախճանին, և Յապոնիան չսպասելով նույնիսկ մեր կառավարության վերջին պատասխանառաջարկություններն ստանալուն, հաղորդագրել է բանակցությունների խզման և դիվանագիտական հարաբերությունների ընդհատման մասին Ռուսաստանի հետ:

Կանխորեն չտեղեկացնելով, վոր հարաբերությունների այս խզումը նշան է պատերազմական գործողությունների սկսվելուն, յապոնական կառավարությունը հրաման է տվել իր ականակիր նավերին հանկարծ զբոս առնել մեր եսկադրայի վրա, վորը կանգնած է Պորտ-Արտյուր ամրոցի արտաքին նավակայանում:

«Հեռավոր Արևելքի մեր փոխարքայից այս մասին հաղորդագրություն ստանալուց հետո, մենք իսկույնէյեթ հրամայեցինք զինյալ ուժով պատասխանել Յապոնիայի հրավերին:

«Հայտնելով մեր այսպիսի վճռի մասին, մենք անհաղորդդ հալատով դեպի բարձրյալի ոգնությունը և հաստատուն հուսով մեր բոլոր հավատարիմ հպատակների միասիրտ պատրաստականության վրա՝ մեզ հետ միասին պաշտպան կանգնելու հայրենիքին, կոչում ենք աստվածային որհնությունը մեր փառապանծ բանակի և նավատորմի զինվորների վրա»:

Յապոնիայի մեղադրանքները իբրև պատասխան՝ «Провителственый Вестник»-ի փետրվարի 7-ի համարում տպագրված է պաշտոնական մանրամասն հաշվետվություն ուսւ-յապոնական ընդհարման վերջին շրջանի մասին:

«Յապոնական աղբյուրների հիման վրա՝ ոտարագդի մամուլի հջերում յերևան է յեկել հաշվետվություն այն դեպքերի առթիվ, վորոնք անմիջապես հաղորդել են դիվանագիտական հարաբերությունների ընդհատման մասին և ապա Ռուսաստանի ու Յապոնիայի միջև պատերազմական գործողությունների սկսելուն:

«Ինչպես և պետք էր սպասել, այդ հաշվետվության մեջ դիտավորյալ կերպով փաստերը խեղաթյուրված են և կեղծ դասավորված՝ Տոկիոյի կառավարության գործողության յեղանակն արգարացնելու, վոր խախտելով միջադգային հարաբերությունների ամենասովորական կանոնները, ամենուրեք վրդովել և հասարակական խիղճը:

«Ահա դեպքերի իսկական ընթացքը:

«Հունվարի 3-ին (16) ստանալով փոխարքայից հեռագրական հաղորդագրություն յապոնական վերջին առաջարկությունների մասին, վոր վերաբերում են համաձայնության նախագծին, կայսերական կառավարությունը ձեռք զարկեց դրանց ուշադիր ուսումնասիրությանը:

«Հունվարի 12-ին (25) Պետերբուրգի յապոնական դեսպանի այն հարցումին, թե մոտավորապես յե՞րբ կարելի յե սպասել ուսաց կառավարության պատասխանին, պ. Կուրենոյին տեղեկություն է տրվում, վոր թազավոր կայսրին հաճելի յե յեղել նշանակել այդպիսի մի պատասխանի բազմակողմանի քննության համար հատուկ խորհրդակցություն, վոր պատշաճ վարչությունների և փոխարքայի մեր համապատասխան հարաբերությունների մեջ մտնելուց հետո՝ պիտի կայանա հինգշաբթի որը, հունվարի 15-ին (28), և վոր

ամենայն հավանականությամբ բարձրագույն վճիռը կընդունվի հունվարի 20-ից (փետր. 2) վոչ շուտ:

«Հունվարի 20-ին (փետր. 2) թագավոր կայսրին հաճելի յեղավ բարձրագույնս հրամայել՝ հատուկ խորհրդակցության յեզրակացությունների հիման վրա պատրաստել վերջնական հրահանգների նախագիծը Տոկիոյի ոռոսաց դեսպանի համար:

«Հունվարի 21-ին (փետր. 3) վերհիշյալ բարձրագույն հրամանի հիման վրա՝ Հեռավոր Արևելքի փոխարքային ուղարկվեց յերեք հեռագիր, վորոնք բովանդակում էին Յապոնիայի հետ համաձայնության նախագծի բնագիրը, այն բոլոր պատճառարանություններն ու կշռադատությունները, վորոնցով ղեկավարվել է կայսերական կառավարությունը յապոնական վերջին առաջարկությունների մեջ մի քանի ուղղումներ մտցնելու ժամանակ, և վերջապես ընդհանուր ցուցմունքներ, ապա հանձնարարվում էր փոխարքային հաղորդել դրանք Տոկիոյի ոռոսաց դեսպանին՝ պատասխանը յապոնական կառավարությանը հանձնելու համար:

«Ժամանակ վաստակելու համար հիշյալ հեռագիրները միևնույն օրն ուղարկվում են անմիջապես նաև բարոն Ռոզենին:

«Հունվարի 22-ին (փետրվարի 4), ուրեմն 48 ժամ առաջ, նախքան Տոկիոյի կառավարությունից հարաբերությունների խզման մասին տեղեկություն ստանալը, արտաքին գործերի մինիստրը Պետերբուրգի յապոնական դեսպանին նամակով հաղորդում է, վոր Ռուսաստանի պատասխան-առաջարկները հաղորդված են բարոն Ռոզենին:

Հունվարի 23-ին (փետրվարի 5) փոխարքայից

տեղեկություն է ստացվում, թե բոլոր հեռագրները, վորոնք պարունակում էին Ռուսաստանի պատասխան-առաջարկները, ժամանակին հաղորդված են Տոկիո:

Շաբաթ օրը, հունվարի 24-ին (փետրվարի 6), ցերեկվա ժամը 4-ին, Ս. Պետերբուրգի յապոնական դեսպանը բոլորովին անսպասելի, արտաքին գործոց մինիստրին ուղղում է յերկու հայտագիր (նոտա). մեկով հաղորդում է, վոր Տոկիոյի կառավարությունն ընդհատում է հետագա բանակցություններն այն հնարովի ինչպես յերևում է նախընթացից, պատրվակով, վոր իբր թե Ռուսաստանը խույս է տալիս յապոնական առաջարկություններին պատասխանելուց, իսկ յերկրորդով հայտնում է յերկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների խզման մասին, ծանուցանելով-առաջիկա հունվարի 28-ին յապոնական միսիայի ամբողջ կազմի Պետերբուրգից մեկնելու մասին:

«Վերահիշյալ յերկու նոտաներին կցված էր յապոնական դեսպանի մասնավոր նամակը, ուղղված արտաքին գործերի մինիստրին, վորով պ. Կուրինոն հույս էր հայտնում, վոր դիվանագիտական հարաբերությունների խզումը կըսակի ըստ կարելույն շատ կարճ ժամանակ:

«Նույն օրը հունվարի 24-ին (փետրվարի 6), Հեռավոր Արևելքի փոխարքային, Տոկիոյի, Պեկինի և Սեուլի դեսպաններին, նույնպես և ոռոսաց բոլոր ներկայացուցիչներին՝ մեծ պետություններում շտապ հեռագիրներով տեղեկություն է տրվում, վոր յերկու պետությունների միջև խզված են դիվանագիտական հարաբերությունները և բարձրագույնս հրամայված է

քարոն Ռոզենին՝ թողնել Տոկիոն կայսերական միսիայի ամբողջ կազմով: Այդ շրջաբերական հաղորդագրության մեջ մատնանշվում է նույնպես, վոր Տոկիոյի կառավարության գործողության յեղանակը, վոր մինչև անգամ չի սպասել կայսերական կառավարության պատասխանն ստանա, Յապոնիայի վրա յե ձգում պատասխանատվությունն այն հետևանքների, վորոնք կարող են առաջ գալ յերկու կայսրությունների միջև գիվանագիտական հարաբերություններն ընդհատվելուց:

«Փոխարքան հունվարի 25-ին ցերեկը հեռագրով հաղորդում է Պետերբուրգ՝ Յապոնիայի հետ հարաբերությունների խզման վերաբերյալ շրջաբերականի ըստացման մասին:

«Թեև գիվանագիտական հարաբերությունների ընդհատումը բնավ դեռ չի նշանակում պատերազմական գործողությունների սկիզբը,—յապոնական կառավարությունն արդեն հունվարի 27-ի գիշերը և ապա հունվարի 27 և 28 ընթացքում մի քանի անգամ վերդրվեցուցիչ հարձակումներ ե գործում ոռւսաց ռազմական և առևտրական նավերի վրա հակառակ միջադգային իրավունքի վորոշումներին, վորոնք ընդունված են բոլորի կողմից:

«Յապոնական կայսրի հրովարտակը՝ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու մասին յեղավ միայն հունվարի 29-ին (փետրվարի 11):

Յապոնիայի հայտնաբերած արհամարհանքը դեպի միջադգային իրավունքը՝ դատապարտվում է մեր արտաքին գործերի մինիստրության շրջաբերական հեռագրով, վոր 1904 թ. փետրվարի 9-ին ուղղված է արտասահմանի մեր ներկայացուցիչներին:

«Ահա՛ այն ըրպելից, յերբ Ռուսաստանի ու Յապոնիայի միջև տեղի ունեցավ հարաբերությունների խզում, Տոկիոյի կառավարության գործողության յեղանակն ակներև վրտահարումն է ընդհանուրի կողմից ընդունված վորոշումների, վորոնցով սահմանվում են քաղաքակիրթ տերությունների միջև փոխադարձ հարաբերությունները:

«Այժմ Յապոնիայի կողմից առհասարակ ընդունության մեջ չմտնելով հիշյալ վորոշումների բոլոր առանձին խախտումները, կայսերական կառավարությունն անհրաժեշտ է համարում հրավիրել պետությունների ամենալուրջ ուշադրությունը այն բռնի միջոցների վրա, վորոնց դիմում է յապոնական կառավարությունը Կորեայի նկատմամբ:

«Կորեայի անկախությունն ու անձեռնմխելիությունը, վորպես միանգամայն ինքնորեն մի պետություն, ընդունված ու ճանաչված է բոլոր պետությունների կողմից: Այդ հիմնական սկզբունքների անսասանությունը հաստատված է Սիմոնեսեկի դաշնադրության առաջին հոդվածով, մի պայմանագիր, վոր կնքված է հատկապես այդ նպատակով Անգլիայի ու Յապոնիայի միջև 1902 թ. հունվարի 17-ին (30), նույնպես և նույն 1902 թ. մարտի 3-ի (26) ոռւսֆրանսիական դեկլարացիայով:

«Կորեայի կայսրը, նախատեսելով Ռուսաստանի և Յապոնիայի հնարավոր ընդհարման վտանգը, այս անցած հունվարի հենց սկզբին շրջաբերական հեռագրով դիմեց բոլոր պետություններին, հայտարարելով վոր ընդունված է վճիռ՝ ամենախիստ չնդրույնական պահանջներ: Պետությունների մեծ մասի կողմ

մից այդ հայտարարութիւնը մեծ համակրանքով ընդունվեց ի տեղեկութիւն, դրանց թվում և Ռուսաստանի կողմից: Մեծ-Բրիտանիայի կառավարութիւնը, վոր Յապոնիայի հետ ստորագրել է 1902 թ. հունվարի 17-ին (30) վերոհիշյալ պայմանագիրը, հանձնարարել է Սեուլի իր ներկայացուցչին, ինչպես հաղորդում է Կորեայի ռուսաց դեսպանը, պաշտոնական հայտագրով շնորհակալութիւն հայտնել Կորեայի կայսրին՝ Լոնդոնի կաբինետին նրա արած հայտարարութեան համար, վոր Կորեան խիստ չեզոքութիւն պիտի պահպանի Յապոնիայի և Ռուսաստանի միջև ընդհարում յեղած դեպքում:

«Չնայելով այս բոլոր հանգամանքներին, յապոնական կառավարութիւնը, հակառակ բոլոր դաշնադրերին, իր իսկ վրա առած պարտականութիւններին, և հակառակ միջազգային իրավունքի հիմնական որոշումներին, ինչպես այդ պարզվել է ճշգրիտ, միանշանակ ստուգված տվյալների հիման վրա.

«1. Սկսել է, նույնիսկ նախքան Ռուսաստանի դեմ պատերազմական գործողութիւններ սկսելը, իր զորքերին ափ իջեցնել Կորեական անկախ պետութեան սահմաններում, վոր հայտարարել է իր չեզոքութիւն պահպանելու մասին:

«2. Իր եսկադրայի մի ջոկատով հանկարծակի հարձակում է գործել հունվարի 26-ին, 3 ուր առաջ, նախքան պատերազմ հայտարարելը, Չեմուլպո չեզոք նավահանգստում գտնվող ռուսաց յերկու պատերազմական նավերի վրա, վորոնց հրամանատարներին չեզոք կարելի տեղեկութիւն հասցնել Յապոնիայի հետ հարաբերութիւններ խզման մասին, վորովհետև նախ-

քան այդ եապոնացիները չարամտորեն կտրել էին Դանիական ընկերութեան պատկանող կաբելով ռուսական հեռագիրների հաղորդակցութիւնը, իսկ Կորեայի կառավարական հեռագրական լարերը փչացած էին:

«Վրդովեցուցիչ հարձակման մանրամասնութիւնները, վորին յենթարկվել են ռուսաց վերոհիշյալ նավերը, պարունակվում են Սեուլի ռուսաց դեսպանի հրատարակած պաշտոնական հեռագրի մեջ:

«3. Հակառակ այս առարկայի մասին գոյութիւն ունեցող միջազգային վորոշումներին և նախքան սլաւերազմական գործողութիւններ սկսվելը, զբաղվել է, վորպես պատերազմական ավար, ռուսաց առևտրական նավերը, վորոնք գտնվում էին չեզոք Կորեայի նավահանգիստներում:

«4. Սեուլի յապոնական դեսպանի միջոցով հայտարարել է Կորեայի կայսրին, վոր սրանից հետո Կորեան պիտի Յապոնիայի կառավարութեան տակ լինի, նախադգուշացնելով, վոր անհնազանդութեան դեպքում՝ յապոնական զորքերը կըգրավեն պալատը:

«5. Յրանսական դեսպանի միջոցով դիմել է Կորեական կայսրի մոտ յեղած ռուսաց պաշտոնական ներկայացուցչին՝ առաջարկելով մեկնել յերկրից միսիայի և հյուպատոսութիւնների ամբողջ կազմով:

«Ընդունելով, վոր վերոհիշյալ բոլոր փաստերը ազդակող խախտումներ են ընդհանուր կողմից ընդունված միջազգային իրավունքի որոշումների, կայսերական կառավարութիւնն այժմ իսկ պատրաստ է համարում բոլոր պետութիւնների առաջ հայտարարել իր բողոքը՝ յապոնական կառավարութեան գործողու-

թյունների յեղանակի դեմ, լիովին հավատացած, վոր այն բոլոր տերությունները, վորոնց համար թանգ են իրանց փոխադարձ հարաբերություններն ապահովող սկզբունքները, կանգնած կըլինեն Ռուսաստանի տեսակետի վրա:

«Սրա հետ միասին կայսերական կառավարությունն անհրաժեշտ է գտնում կանխորեն զգուշացնել, վոր Յապոնիայի կողմից Կորեայում իշխանությունն ապորինաբար հափշտակելու իրավունքով, ինքն անվավեր է համարում բոլոր այն կարգադրություններն ու հայտարարությունները, վորոնք կորեական կառավարության անունից կըլինեն:

«Հաճեցեք այս մասին հաղորդել այն կառավարության, վորի մոտ դուք հաստատված եք ներկայացուցիչ»:

Վերջապես կառավարությունն իր պարտքն է համարում մեր խաղաղ-ովկիանոսի նավատորմի առաջին գործողությունների առթիվ նախազգուշացնել հասարակությանը, վոր չի կարելի հույս ունենալ ռուսաց զինքի շուտափույթ հաջողությունների վրա, և վոր անհրաժեշտ է մեծ համբերություն ունենալ, նկատի առնելով Արևելյան Ասիայի պատերազմի յուրահատուկ պայմաններն ու պարագաները:

«Ռուս ամբողջ հասարակությունը հասկանալի անհամբերությամբ և տենդագին զգացումով Հեռավոր Արևելքից լուրերի յե սպասում... Սակայն պատերազմի ամբողջ կացությունը մեզ ստիպում է համբերությամբ սպասել մեր զինքի հաջողության լուրերին, վորոնք կարող են ստացվել ռուսաց բանակի վճռական գործողությունների դիմելուց վոչ շուտ:

«Այն հարձակումը, վորին յենթարկվել է մեր

տերրիտորիայի ամենահեռավոր մասը, վոր գտնվում է տերության կեդրոնից հազարավոր վերստեր հեռու, և մեր կառավարության խաղաղություն պահպանելու անկեղծ ցանկությունը, վոր անկարելի յե դարձել պատերազմի համար կանխորեն պատրաստություններ առնել,—ստիպում են մեզ շատ ժամանակ գործ դնել նրա համար, վոր սկսենք Յապոնիային այնպիսի հարվածներ հասցնել, վորոնք համապատասխան լինեյին Ռուսաստանի հզորության և ռուսական թանկագին արյունի նվազագույն չափով թափելու գնով արժանի հատուցում այն ազդին, վոր հանգցնաբար մեզ կալի յե կանչել: Յեվ թող ռուս հասարակությունն համբերությամբ սպասե ապագա դեպքերին, միանշը համբերությամբ սպասե ապագա դեպքերին, միանշը համար հավատացած լինելով, վոր մեր բանակը կըստիպի հարյուրապատիկը հատուցանել մեզ նետած մարտիկի հարյուրապատիկը հատուցանել մեզ նետած մարտահրավերի համար: Ցամաքի վրա լուրջ գործողություններ դեռ շուտ չեն սկսվել, և մենք չպետք է և չենք կարող սպասել արագ լուրերի պատերազմի դաշտից մեր գործողությունների մասին: Ռուսական արյունը իզուր թափել մեր թշնամիներին արագ հատուցում անելու համար—վայել չե Ռուսաստանի մեծությանն ու հզորությանը: Այս որերում մեր հայրենիքը յերևան բերավ այնպիսի միաբանություն և ամեն բան թանկագին հայրենիքի ոգտի նվիրաբերելու մի այնպիսի ցանկություն, վոր, անկասկած, պատերազմի դաշտից ստացված ամեն մի լուր՝ անհապաղ ամբողջ ռուս հասարակության սեփականությունը կը դառնա»:

(«Провит. Вестн.») փետրվարի 4.

«Вестник Европы» 226-րդ հատոր.

1904 թ. Եջ 345.

9. ՊԱՏԵՐԱԶՍ ՅԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍ

(Ս. Յու. Վիսսելի «Հաւերից»)

Պետերբուրգ վերադառնալուց հետո՝ ինչպես ե լինում, մի անգամ յապոնական դեսպան Կուրիմոն, վոր մի խելոք մարդ եր և վորի համար, վորպես դեսպանի համար, պատվի հարց եր պատերազմի առաջն առնելը, մտնում ե ինձ մոտ։ Նա սիրում եր Ռուսաստանը, վորքան կարող եր սիրել մի յապոնացի։ Նա ինձ հաղորդեց, թե բանակցություններն այնպես են տարվում, վոր կարծես թե Ռուսաստանը պատերազմ ե ցանկանում։ Յապոնիան պատասխանները տալիս ե անհապաղ, իսկ Ռուսաստանը՝ շաբաթներ կամ ամիսներ անցնելուց հետո։

Լամպորֆը պատճառը գցում ե Ալեքսեյի վրա։ Ռոզենն ու Ալեքսեյը թագավորի ճանապարհորդություն են պատճառ բռնում։

Յեթե այդ ժամանակ Ռուսաստանը պատերազմի համար պատրաստություններ չտեսներ, թերևս Յապոնիան չանհանգստանար։ Մինչդեռ ամեն տեղ խոսում են պատրաստությունների մասին։ Հասարակական կարծիքն ավելի և ավելի յե բորբոքվում Յապոնիայում և կառավարությունը շատ դժվարանում ե իրա առաջն առնել։ Յապոնիայի համար ինչպես ամեն մի անկախ պետության համար, նվաստացուցիչ ե բանակցություններ վարել Հեռավոր Արևելքի մի վորևե փոխարքայի հետ, կարծես թե Հեռավոր Արևելքը պատկանում ե Ռուսաստանին, կամ Ռուսաստանը Հեռավոր Արևելքի պրոտեկտորն ե։ Յես պատասխանեցի, վոր վոչինչ չեմ

կարող անել, վորովետե հեռու յեմ իշխանությունից, և խորհուրդ տվի, վոր դիմի կոմս Լամպորֆին։ Կուրիմոն պատասխանեց, վոր Լամպորֆը հաղորդիչի դեր ե կատարում և իրան պահում ե այդ շրջանակներում։

Տարվա վերջին թագավորը տեղափոխվում ե Պետերբուրգ։ Հունվարի սկզբին սկսվում են պալատական պարահանդեսները, ասես թե՝ վոչ մի բան չի պատահել։

Այդ պարահանդեսներից մեկի ժամանակ՝ յես հանդիպում եմ Պետերբուրգի յապոնական դեսպան Կուրիմոյին, վորը մոտենում ե ինձ և ասում, վոր կարևոր ե համարում ինձ նախագրողացնել, վորպեսզի յես արտաքին գործերի մինիստրության վրա ազդեմ, վոր նա յապոնական վերջին հայտարարության պատասխանը շուտ տա, վոր Յապոնիայի հետ բանակցությունները տարվում են չափազանց դանդաղ, վորովհետե Յապոնիայի հայտարարությանը ամբողջ մի շաբաթվա ընթացքում պատասխան չի տրվում, այնպես վոր ակներե վարար մանջուրական և կորեական գործերը կարգավորելու համար բոլոր բանակցությունները դիտմամբ ձգձգվում են։ Վոր գործի այդպիսի վիճակը Յապոնիային համբերությունից հանել և և վոր ինքը՝ Կուրիմոն վորպես մեր բարեկամ, ազաչում ե մեզ շուտ պատասխան տալ, վորովհետե յեթե մի քանի որվա ընթացքում պատասխան չտրվի, այն ժամանակ պատերազմ կը բռնվի։

Այդ Կուրիմոյին յես ճանաչում եյի դեռ մինչև Ֆինանսների մինիստրի պաշտոնս թողնելը. նա 1903 թ. հուլիսին, մի ամիս առաջ՝ նախքան Ֆինանսական մինիստրի պաշտոնիցս հեռանալը, ինձ ու Լամպորֆին

ներկայացրեց՝ Հեռավոր Արևելքի գործերի նկատմամբ Ռուսաստանի և Յապոնիայի համաձայնության նախագիծը, վորը յեթե ընդունված լիներ, կը վերացվեր Հեռավոր Արևելքի հարցի լուծումը պատերազմի միջոցով:

Իմ կարծիքով այդ համաձայնությունը միանգամայն ընդունելի չեր և յես դրա վրա պնդում եյի: Սակայն իմ պնդումները վոչ մի հետևանք չունեցան, համաձայնությունն ուղարկվում և փոխարքա Ալեքսեյեի յեզրակացության: Այդ համաձայնության նախագիծն այնտեղ ել մնում և, կամ ավելի ճիշտ՝ այդ հայտարարությունների հետևանքով սկսվում են անվերջ բանակցություններ, վորոնք տևում են հուլիսից մինչև հունվար և վոչ մի հետևանք չեն տալիս:

Կուրիոյի այդ վճռական հայտարարությունն ինձ ստիպեց՝ նրա խոսքերը հաղորդել կոմս Լամսդորֆին: Կոմս Լամսդորֆը ինձ մի վորոշ պատասխան չտվավ, այլ ասեց միայն. «Այս դեպքում յես վոչինչ անել չեմ կարող, վորովհետև բանակցությունները յես չեմ վարում»:

Այս դեպքը պատահեց այսպես, հունվարի վերջին:

Վերջ ի վերջո մենք ժամանակին պատասխան չենք տալիս, և հունվարի 26-ին յապոնական նավերը հարձակվում են մեր եսկադրայի վրա Պորտ-Արտուրի մոտ և մեր նավերից մի քանիսը ջրասույզ անում, իսկ հունվարի 27-ին հրատարակվում և պատերազմի մասնիֆեստը:

Հետևյալ օրը Ձմերային պալատում տեղի ունեցավ հանդիսավոր մաղթանք: Այդ մաղթանքը բավական տխուր եր այն մտքով, վոր ճնշում եր մի ինչ վոր մոայլ տրամադրություն:

Յերբ նորին մեծությունը յեկեղեցուց դուրս յե-

կավ և ուղղվեց դեպի իր ապարանքները, յես հեռու չեյի նորին մեծությունից: Յերբ նորին մեծությունն անցնում եր գերերալ Բուդոգանովիչի մոտով, Բուդոգանովիչը ուռա կանչեց, վորին ձայնակցեցին մի քանի ձայներ միայն:

Հետո, այդ միևնույն օրը յես տեսա նորին մեծության, վոր անցնում եր կառքով Թագուհու հետ իմ տան մոտով, Կամենստրովսկիյ պրոսպեկտի վրա: Թագավորն այցելության եր դնում Ալեքսեյեի գլխավոր քայաղնուհուն: Նորին մեծությունը, անցնելով իմ տան մոտով, դեմքը դարձրեց դեպի իմ պատահանները և ըստ յերևութի ինձ տեսավ. նրա դեմքի արտահայտությունը և մարմնի կեցվածքը չափազանց հաղթական եյին: Ակներե եր, տեղի ունեցած դեպքերին նա վոչ մի նշանակություն չեր տալիս այն մտքով, վոր դրանք Թշվառություն են բերելու Ռուսաստանի գլխին:

Սարսափելի ժամանակն սկսվեց: Դժբախտագույն պատերազմներից դժբախտագույնը, և ապա, վորպես այդ պատերազմի մերձավորագույն հետևանք, հեղափոխությունը, վոր վաղուց պատրաստված եր վոստիկանական-ազնվապետական ռեֆորմի, կամ ավելի ճիշտ՝ վոստիկանական-պալատական կամարիլայական ռեֆորմի ձևով: Ապա հեղափոխությունը դառնում և անիշխանություն: Հետո ինչ և խոստանում մեզ աստված: Համենայն դեպս մենք դեռ շատ բան պիտի քաշենք: Ափսոս թագավոր: Ափսոս Ռուսաստան: Միևտու ու հոգիս տանջվել են բավականաչափ, բայց տակավին լույսի շող չկա և վոչ մի տեղից: Թշվառ ու դժբախտ թագավոր: Ինչ և ստացել և ինչ պիտի թողնի: 26 վոր լավ ել մարդ ե, վոչ հիմար, բայց կամազուրկ ե. և նրա բը-

նավորության այդ գծի վրա սկսեցին զարգանալ նրա պետական մոլությունները, այսինքն՝ մոլությունները մի կառավարչի, այն եւ այնպիսի ինքնակալ անսահման Ստոված և յետ:

Վարչական մարմինների կողմից մի շարք փողոցային ցույցեր կազմակերպվեցին, սակայն այդ ցույցերը վոչ մի համակրանքի չարժանացան: Առաջին իսկ անգամից պարզ յերևում էր, վոր այս պատերազմը բնավ ժողովրդականություն չի վայելում, վոր ժողովուրդը պատերազմ չի ուզում, իսկ մեծամասնությունն անիծում և չենց մենակ այդ հանգամանքը ցույց եր տալիս, վոր անկարելի չէ պատերազմից լավ արդյունքներ սպասել:

Յերբ Կուրոպասակինը թողից զինվորական մինիստրի պաշտոնը և դեռ չեր վճռված բանակի հրամանատարությունը նրան հանձնելու, նա հանդիմանում էր Պլեկին, վոր բոլոր մինիստրներից միայն նա յեր— Պլեկեն, վոր ցանկանում էր այս պատերազմը և միացավ քաղաքական աֆերիստների խմբակին:

—Ալեքսեյ Նիկոլայիչ, Ռուսաստանի ներքին գլխությունը դուք չգիտեք: Հեղափոխության առաջն առնելու համար մեզ հարկավոր է մի փոքրիկ նաղթական պատերազմ:

Ահա ձեզ պետական խելք և թափանցող միտք... Թագավորն, ի հարկե, խորապես հավատացած էր, վոր Յապոնիան ջարդ ու փշուր պիտի լինի, թեև գուցե մի քիչ ճիգ թափելուց հետո: Իսկ ինչ վերաբերում է փողերին, այս դեպքումն ևլ յերկյուղ չկա, վորովհետև Յապոնիան բոլորը կը վերադարձնե, իբրև պատերազմական տուգանք:

Առաջին որերում մակագրությունների ժամանակ նրա սովորական արտահայտությունն էր. «այդ մակալները»: Հետո այդ կոչումն սկսեցին գործ ածել այսպես կոչված հայրենասեր թերթերը, վորոնք իրոք պահվում են արժանի փողերով:

Բանակի գլխավոր հրամանատար նշանակված էր Ալեքսեյը՝ Հեռավոր Արևելքի փոխարքան: Նա այնպիսի գլխավոր հրամանատար էր, ինչպիսին յես. յերբեք նա զինվորական չէր յեղել, ցամաքային զորքի հետ զործ չէր ունեցել և ծովային ասպարիզում առաջ էր գնացել ավելի իր դիվանագիտական խելքով, քան թե ծովային ծառայությունը:

Լինելով դեռ յերիտասարդ ծովային սպա, Ալեքսեյը ճանապարհորդում էր մեծ իշխան Ալեքսեյ Միխայլովիչի հետ: Յերբ այս մեծ իշխանը, դեռ յերիտասարդ հասակում ժուկովսկայայի հետ, ամուսնացավ, Ալեքսանդր 2-ը դրան ուղարկեց շուրջերկրյա ճանապարհորդություն կատարելու այն նպատակով, վոր զգաստանա: Ինչպես պատմում են, յերիտասարդ՝ մեծ իշխանը Մարսելում՝ իր ծովագնաց ընկերների հետ գիշերը գնում է մի ուրախ տուն, վորտեղ լինում են աիկիներ: Մեծ իշխանն այդ հիմնարկություն մեջ զանազան գծություններ է անում, ուստի և կանչվում է պատասխանատվության: Բայց նրա փոխարեն դատարանում հանդես է գալիս յերիտասարդ սպա Ալեքսեյը և հավատացնում է, վոր ինքն է յեղել անկարգություններ անողը, և վոր այդ անկարգությունները սխալմամբ են վերագրել մեծ իշխանին, վորովհետև իր ազգանունը Ալեքսեյ է, իսկ ֆրանսիական իշխանությունները չեն կարողացել տարբերել Ալեքսեյ և Ալեք-

սեյ բառերը և կարծել են, վոր այդ գծություններն արել ե մեծ իշխան Ալեքսեյը:

Ապա Ալեքսեյը կրում ե պատիժը, վճարելով դրամական տուգանք, և շարունակ մեծ իշխանի մոտ բարեկամն ե մնում, վորը հետագայում Ալեքսանդր Յ կայսրի ժամանակ դառնում ե գեներալ-ադմիրալ:

Այդպիսով Ալեքսեյն առաջանում ե. հենց նույն մեծ իշխանի հանձնարարականովն ե վոր նա նշանակվում ե նաև Կվանտունի շրջանի պետ:

Ի հարկե, գեներալ-ադմիրալը չեր կարող յերևակայել, վոր Ալեքսեյը հետո հեռավոր Արևելքի փոխարքա կըդառնա, և մանավանդ ընդհանուր հրամանատար հսկա ուսական գործող բանակի: Դա մի այնպիսի հեքյաթային յերևույթ եր, վոր մեծ իշխան Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մաքովն անգամ չեր կարող անցնել:

Յեա հիշում եմ. յերբ 1903 թ. գնացի Պորտ-Արտյուր, և յերբ Ալեքսեյը զորատես եր անում, յես ել, վորպես սահմանապահ գործի շեֆ, ուստի և զինվորական համազգեստ հագնելու իրավունք ունեցող, յեկա զորատեսին զինվորական համազգեստով. յես կարծում եյի, վոր Ալեքսեյը զորատեսին ձի հեծած կըլինի և այդպես զորատես կանե,—ուստի յես ել պատրաստվում եյի ձիով գնալ անցնելով Չին-Արևելյան յերկաթուղու յերկարությամբ և զիտելով սահմանապահ զորամասերը, յես միշտ այդ զորատեսներին ձիով եյի ման գալիս: Ի զարմանս իմ, Ալեքսեյը ձի չեր նստած: Բա՛նից դուրս ե գալիս, վոր նա ձի նըստել չի կարողանում և ձիուց վախենում ե:

Ալեքսեյի և ցամաքային զորքի հետ նրա ունե-

ցած հարաբերությունների մասին ինձ անեկդոտներ եյին պատմում... Յեմ ահա հանկարծ մի այդպիսի մարդու—հանձք բան ե—գլխավոր հրամանատար են շինում գործող բանակի, վոր այն ժամանակ բաղկացած եր մի քանի հարյուր հազար հոգուց, իսկ հետո միլիոնանոց կազմ ունեն:

Հասարակական կարծիքի ճնշման տակ, վորը չափազանց անվստահությամբ եր վերաբերվում Ալեքսեյի նշանակումին, շուտով, այն ե փեարվարի Ց-ին, բանակի հրամանատար ե նշանակվում զինվորական մինիստր Կուրոպատկինը:

Այդ նշանակումը յեղավ հասարակական կարծիքի ցանկության համաձայն. հասարակական կարծիքը միաձայն պահանջում եր, վոր Կուրոպատկինը նշանակվի, մեծ վստահություն տածելով դեպի նա: Յեմ այսպես, կարելի յե ասել, վոր այդ նշանակումը յեղավ վոչ թե նորին մեծության նախաձեռնությամբ, այլ նույն իսկ հակառակ նորին մեծության համակրանքի, բացառապես հասարակական կարծիքի միաձայն ցանկությամբ, վոր չափով այդ կարծիքը կարող եր արտահայտվել լրագրական եջերում:

Բայց և այնպես այդ նշանակումն ինքը մի մեծ անհեթեթություն եր. ուսական բանակը պետք ե լիներ յերկու մարդու հրամանատարության տակ, մեկ կողմից գլխավոր հրամանատարն եր Հեռավոր Արևելքի փոխարքա Ալեքսեյը, մյուս կողմից բանակի հրամանատարն եր զինվորական նախկին մինիստր գեներալ-ադյուտանտ Կուրոպատկինը: Ակնհերե և, վոր այդպիսի մի կարգ հակասում ե զինվորական գործի այբուբենին իսկ, վորը պահանջում ե զինվորական

գլխավորության միանձնություն, առավել ևս պատե-
րազմի ժամանակ: Ուստի և այդպիսի մի նշանակումից,
բացի շփոթից, վոչինչ չեմ կարող դուրս գալ:

Կուրոպատկինը ճանապարհվում է դեպի պատե-
րազմ. նա ուղևորվում է մեծ շուքով և հանդիսով,
արտասանում է զանազան ճառեր, կարծես թե Յապո-
նիային ջարդելուց հետո, հաղթական պատերազմից
վերադառնալիս լինելու: Իհարկե, նրա կողմից մեծ խո-
հեմություն և խելոքություն կլըիններ, յեթե պատե-
րազմ գնար հանգիստ և պատերազմից վերադառնալու
շքով ու հանդիսով, յերբ արդեն հաղթող կլըիններ:
Դժբախտաբար բոլորովին հակառակը դուրս յեկավ:

Կուրոպատկինը իր մեկնելու նախընթաց յերե-
կոն անցկացրեց ինձ մոտ, և ահա թե մենք ինչ խո-
սակցություն ունեցանք.

Նա ասում եր, վոր յես, վորպես մի մարդ, վոր
շատ մոտիկից գլխե Հեռավոր Արևելքը և գործերի
դրությունը, ինչպես Չինաստանում, նույնպես և Յա-
պոնիայում թերևս նրան խորհուրդ տայի, թե ինչ
ընդհանուր նախագծով պետք է տանել պատերազմը:
Յես Կուրոպատկինին խնդրեցի, վոր ինքը շարադրե
իր կարծիքը: Նա ինձ ասաց, թե վորովհետև մենք պա-
տերազմը վարելու համար պատրաստված չենք, հա-
կավոր կլըինին յերկար ամիսներ, վոր մեր գործող
բանակն ուժեղացնենք. ուստի և նա յենթադրում է
պատերազմը վարել հետևյալ պլանով. մինչև մեր բա-
նակի հարկավոր կազմի լրացումը Հեռավոր Արևելքում
գործող մեր ուժերով շարունակ նահանջել դեպի Պա-
րսի, դանդաղացնելով միայն Յապոնական բանակի
հարձակումը: Թողնել իր բախտին Պորտ-Արտուրը, վո-

րը, նրա կարծիքով, պետք է կանգնած մնար դեռ
յերկար ամիսներ: Այդ միջոցին բանակ կազմել Պա-
րսից վոչ հեռու և յերբ մեր նահանջող բանակը հաս-
նի այդ տեղ, դրանից հետո միայն սկսել հարձակում-
ներ գործել Յապոնական ուժերի վրա և ջախջախել
նրանց:

Յես իմ կողմից նրան ասացի, վոր նրա գործո-
ղության պլանին համակիր եմ, վոր իմ կարծիքով,
ուրիշ նախագիծ չի ել կարող լինել, վորովհետև մենք
պատերազմի համար պատրաստված չենք, իսկ Յապո-
նիան պատրաստված է: Պատերազմական գործողու-
թյունների բեմը գտնվում է համարյա թե յապոնա-
ցիների քթի տակ, իսկ յերրոպական Ռուսաստանից,
մեր թե զինվորական և թե նյութական ուժերի կենտ-
րոնից հակադրական հեռավորության վրա:

Յիրբ մենք մտքերի փոխանակություն ունեցանք,
Կուրոպատկինը բազկաթուղի վեր կացավ, վոր ինձ
հրաժեշտ տա: Նա դիմեց ինձ այս խոսքերով. «Սերգեյ
Յուլևիչ, դուք մեծ խելքի տեր եք, դուք մեծ տա-
ղանդի տեր եք. հրաժեշտի ժամին հավանորեն դուք
կարող եյիք ինձ լավ խորհուրդ տալ, թե ի՞նչ անեմ»: Յես
նրան ասեցի. «Յես քեզ կարող եյի լավ խորհուրդ
տալ, բայց դուք նրան չեք հետևիլ»: Նա ագահու-
տալ, բայց դուք նրան չեք հետևիլ»: Նա ագահու-
թյամբ վրա պրծավ, ինձ խնդրելով վոր ասեմ, թե այդ
ինչ խորհուրդ է: Յես նրան հարց տվի. «Ո՞ւմ հետ
եք գնում Հեռավոր Արևելք»: Նա ինձ ասաց, վոր
միքանի աղյուստանների և այլ անձանց հետ, վո-
րոնք անդում պիտի կազմեն նրա շտաբը: Իմ հարցին
թե այդ անձինք արդյոք այնպիսի մարդիկ են, վո-
րոնց կարելի լինի կատարելապես վստահիլ, — նա պա-

առասխանեց. «Իհարկե»: Այն ժամանակ յես նրան ա-
սացի. «Այժմ ընդհանուր հրամանատար Ալեքսեյեը
գտնվում ե Մուկղենում: Դուք, իհարկե, ուղղակի կեր-
թաք Մուկղեն, և ահա թե յես ինչ կանեյի, յեթե ձեր
տեղը լինեյի: Հասնելով Մուկղեն, յես իմ ծառայու-
թյան մեջ գտնվող սպաններից կուղարկեյի գլխավոր
հրամանատարի մոտ, հրամայելով այդ սպաններին,
վոր գլխավոր հրամանատարին ձերբակալեն: Ի նկատի
առնելով այն հեղինակությունը, վոր դուք ունեք
զորքի մեջ, ձեր այդ վարմունքի դեմ զորքը վոչինչ
չի ունենալ: Ապա յես Ալեքսեյեին կընստացնեյի այն-
գնացքը, վորով Դուք յեկել եյիք և նրան ձերբակա-
լած կուղարկեյի Պետերբուրգ, և միևնույն ժամանակ
թագավոր կայսրին կըհեռագրեյի հետևյալը. Ձերդ
մեծություն, հաջողությամբ կատարելու համար այն
գործը, վոր դուք ինձ վրա յեք դրել, յես ան-
հրաժեշտ համարեցի գործող բանակը գալով, նախ և
առաջ ձերբակալել հրամանատարին և ուղարկել նրան
Պետերբուրգ, վորովհետև առանց այդ պայմանների
պատերազմը հաջողությամբ վարել անկարելի յե:
Խնդրում եմ Ձերդ մեծությունից այդ իմ հանդուգն
վարմունքիս համար հրամայել ինձ գնդակահարել, կամ
թե հայրենիքի ոգտի համար ինձ ներել»:

Այն ժամանակ Կուրոպատկինն սկսեց ծիծաղել,
ձեռքերը շարժել, և ինձ ասաց. «Ահա տեսնում եք,
Սերգեյ Յուլիսի, դուք միշտ կատակ եք անում», դը-
րան պատասխանեցի. «Յես, Ալեքսեյ Նիկոլայիսի, կա-
տակ չեմ անում, վորովհետև ես համոզված եմ, զոր
յերկիշխանությունը, վորի հետևանքները յերևան կը-
գան ձեր այնտեղ հասած որվանից սկսած, գրավականն
և մեր բոլոր ռազմական անհաջողությունները...»

Կուրոպատկինը հեռացավ ասելով.

«Իսկապես դուք իրավացի յեք»:

Հետևյալ որը մեկնեց: Նրան ճանապարհ եյին
դնում վորպես յապոնացիներին հաղթողի: Վոչ մի տեղ
և վոչ մի ժամանակ այդպես ճանապարհ չեն դցել վոչ
մի զորապետի, վոր դնում և պատերազմ:

Դալով գործող բանակը, Կուրոպատկինը վոչ միայն
չի հաստատվում Մուկղենում (հարմարագույն կըլի-
ներ՝ Մուկղենից ավելի հյուսիս), վոչ միայն չի ըս-
կըսում գործադրել այն խելացի պլանը, վոր նա իմ
առաջ դրեց, այլ սկսում ե միանգամից կիրառել յեր-
կակի պլանը. մի խառնուրդ իր և Ալեքսեյեի պլանի,
ավելի ճիշտ, Ալեքսեյեի մտքերի, ըստ վորում Ալեքսե-
յեը վոչ մի պլան չեր կարող ունենալ, սեփական մըտ-
քեր անգամ նա չուներ, այլ ուներ այն, ինչ վոր
թվում եր իրան, թե հաճելի կըլիներ թագավորին.
չե՞ վոր դեռ այն ժամանակ Բեզոբրազով և ընկերու-
թյունը խենթ ու խելառ մտքերի բոլոր մնացորդները
դեռ պահպանվում եյին և թագավորը չեր կարող հրա-
ժարվել այն բոլորից, ինչ վոր այս ճարպիկ գործա-
բարները նրան ներշնչել եյին: Յապոնացիք «մական-
ներ» են. մենք նրանց կըվոչնչացնենք:

Վորովհետև գլխավոր հրամանատարի գլխավոր
բանակատեղը Մուկղենումն եր, իսկ Կուրոպատկինը
առանց հիմքի չեր, վոր չեր ցանկանում իր բանակի
տեղն ել լինի այնտեղ, վորտեղ Ալեքսեյեն եր, ուստի
և նա հաստատվում ե Մուկղենից շատ հարավ: Ապա
գլխավոր հրամանատար Ալեքսեյեը համամիտ չեր կրա-
վորական նահանջի սխտեմին, այլ ընդհակառակն անց
եր կացնում ակտիվ հարձակման սխտեմը, գլխավորա-
պես Պորտ-Արտյուրն ազատելու համար:

Զորքի հրամանատար Կուրոպատկինը՝ առանց հիմքի չներ, վոր Ալեքսեյին յամարում եր կատարյալ վոչնչություն, քաղաքացիական ծովազնաց, և վոր գլխավորն ե՝ կարյերխաւո իսկ գլխավոր հրամանատար Ալեքսեյին ատում եր Կուրոպատկինին և իր սրտում ամեն տեսակ անհաջողություն եր ցանկանում նրան։ Առաջինը Պետերբուրգ հեռագրում եր մեկ բան, յերկրորդն ուրիշ բան, բայց և այնպես առաջինը չեր ուզում ընդհարում ունենալ յերկրորդի հետ, ուստի և դիմում եր կիսամիջոցներ, իսկ յերկրորդը ծածկվում եր բարձրագույն հրամաններով, վոր յերբեմն ինքն եր ներշնչում։

Պատերազմից հետո Կուրոպատկինն ինձ ասում եր, վոր նա Պետերբուրգից ստացած հեռագրներ ունի, վորոնք՝ պատերազմի առաջին շրջանի անհաջողությունների վրա ճշմարիտ լույս են սփռում։ Հավանորեն այդ հեռագիրները յերբեքից ելույս կըտեսնեն։

Թագավորը նույնպես իր սրտի խորքում ցանկանում եր հարձակում, սակայն ըստ սովորականին յերկվանում եր. այսոր՝ դեպի աջ, վաղը՝ դեպի ձախ, իսկ վոր գլխավորն ե, ցանկանում եր, ինչպես և միշտ՝ յերկուսին ել խաբել, իսկ նա միշտ բոլորից շատ ինքն իրան եր խաբում։ Պատերազմի առաջին մասի մանրամասնությունները յես չգիտեյի, քանի դեռ Ալեքսեյը Պետերբուրգ չեր կանչված և Կուրոպատկինը զբոսավոր հրամանատար չեր նշանակված, սակայն կարող եմ անսխալ պնդել, վոր պատերազմի առաջին մասը բոլորովին այլ կըլիներ, յեթե այդ յերկվությունը չլիներ, նա մեզ ավելի նպատավոր կըլիներ։ Իսկ սկզբի անհաջողությունն անկասկած ունեցել և ազդե-

ցություն պատերազմի յերկրորդ շրջանի գործողությունների վրա։

Ապա Կուրոպատկինն ինձ ասում եր նույնպես հարգարացումն իր, վոր անտաղանդ գեներալներ եյին նշանակում՝ հակառակ իր կամքի, և շարունակ միջամտում եյին Պետերբուրգից։ Այս տրտունջներին յես նրան պատասխանեցի, վոր ամեն բանի մեղավորը ինքն ե, վորովհետեւ չի կատարել իմ խորհուրդը, վոր յես նրան տվի, յերբ գնում եր բանակ։ Յեթե նա կարողացած լիներ առաջին անգամից իրան դնել այնպես, վոր վոչ վոք չմիջամտեր գործին և բոլորն ել իրան հնազանդվեյին, այն ժամանակ ստիպված չեր լինիլ բանն ուրիշների վրա գցել։ Յեթե այդ նրա համար անկարելի լիներ, վոր յես միանգամայն հասկանում եմ, իմանալով Թագավորի բնավորությունը, այն ժամանակ նրան մնում եր հեռանալ։

Թե վորքան լավատես եյին այն ժամանակ յապոնական պատերազմը պատերազմի նկատմամբ, կարող ե ասացույց լինել ի միջի այլոց նաև հետևյալը. յերբ 1924 թ. հունվարի 27-ին հայտարարվում ե պատերազմը, նախկին ղինվորական մինիստր Վաննովսկին խորհրդակցություն ուներ Կուրոպատկինի հետ այս պատերազմի շանսերի նկատմամբ. այդ խորհրդակցության ժամանակ Վաննովսկին և Կուրոպատկինը տարակարծիք եյին հետևյալ հարցերի նկատմամբ. — Կուրոպատկինը կարծում եր, վոր մեզ հարկավոր ե յապոնական ամեն մի մեկ ու կես զինվորի դիմաց պատերազմի դաշտը հանել մեկ ուս զինվոր, իսկ Վաննովսկին գտնում եր, վոր միանգամայն բավական ե Ցապոնիայի ամեն մի յերկու զինվորի դիմաց հանել

մեր մի գինավորին միայն: Ահա թե ինչպես ելին գնահատում յատրոնական բանակի և մերինի համեմատական արժանիքը թե այն ժամանակվա գինավորական միջխտորը և թե նրա նախորդը:

Յերբ պատերազմն սկսվեց, այն ժամանակ նորին մեծութունը շարունակ 1904 թվականի ընթացքում գնում եր ճանապարհի դնելու Հեռավոր Արևելք մեկնող զորքին: Այսպես, մայիսի սկզբին թագավորն այդ նըպատակով գնաց Բելգորոդ, Պոլտավա, Տուլա, Մոսկվա, ապա հունիսին՝ Կոլոմնա, Պինչա, Սիզրան և ուրիշ քաղաքներ: Սեպտեմբերին՝ Ուկեսա, Ռոմնի և ուրիշ տեղեր յերկրի արևմտյան մասում: Սեպտեմբերին նույնպես գնում և Ռեվել մեր մի քանի նավերը դիտելու: Ապա հոկտեմբերին՝ Սուվալկի, Վիտեմբսկ և ուրիշ քաղաքներ: Վերջապես դեկտեմբերին՝ Բիրզուլա, Ժմերինկա և հարավային ուրիշ քաղաքներ:

Այս շրջագայութունները նպատակ ունեյին ճանապարհի դնելու զորքին ու նորակոչներին դեպի Հեռավոր Արևելք. այդ միջոցին նորին կայսերական մեծութուններ թագավոր կայսրն ու թագուհին կայսրուհին բաժանում էին զորքին սրբերի պատկերներ և ի միջի այլոց Սերաֆիմ Մարովսկու պատկերը:

Յեվ վորովհետև այդ տարվա ընթացքում մենք պատերազմի դաշտի վրա շարունակ ամենախիստ պարտութուններ ելինք կրում, այդ հանգամանքն առիթ տվավ դեներալ Դրադոմիրովին մի չար կատակ անել, վոր ապա տարածվեց Ռուսաստանում: Նա ասել է տեսնում եք, մենք յապոնացիներին ուղղում ենք հարվածել մեր սրբերի պատկերներով, իսկ նրանք մեզ քոթկում են ուղմեներով: մենք նրանց՝ սրբի պատկերներով, նրանք մեզ՝ գնդակներով:

1904 թվականին ընդհանուր գծերով պատերազմական դեպքերին անցան հետևյալ կարգով. Մարտի 31-ին խորտակվում և մեր զրահակիր «Պետրոպավլովսկ» նավը՝ ծովակալ Մակարովի և կամանդայի մի ժասի հետ: Վորովհետև Մակարովը մեր Հեռավոր Արևելքի նավատորմի պետն էր, ուստի և «Պետրոպավլովսկ» զրահակիր նավի խորտակումից և մեր նավատորմի այլ կորուստներից հետո՝ մեր Հեռավոր Արևելքի նավատորմը կարելի չե համարել կատարյալ անգործության դատապարտված:

Ապրիլի 17 և 18 մենք տանուլ տվինք Տյուրեն-չենի ճակատամարտը: Ապրիլի 28-ին յապոնացիք Բի-ձիվոյում ափ են իջնում, վորը Պորտ-Արտյուրի կործանման սկիզբն և դառնում: Մայիսի 28 տեղի ունեցավ ծովային ճակատամարտը Պորտ-Արտյուրի մոտ, վորտեղ մենք կրկին կորցրինք մի քանի նավ: Ոգոստոսի 17—23-ը Լյաոյանի մոտ մենք տանուլ տվինք մեծ ճակատամարտ և սկսեցինք նահանջել դեպի Մուկդեն:

Յերբ մենք նահանջում ելինք դեպի Մուկդեն, այն ժամանակ Կուրոսատկինը՝ բանակին ուղղած իր հրամաններում հայտարարեց, վոր արդեն այլևս վոչ մի քայլ չպիտի նահանջեն: Դեկտեմբերի 22-ին ընկավ Պորտ-Արտյուրը, և ապա 1905 թվականին տեղի չեն ունենում մեր հետագա պարտությունները ընդամեն Մուկդենի մոտ հսկայական ճակատամարտ տանուլ տվեցինք և պետք է նահանջեյինք Խարբինի ուղղությամբ:

Ս. Յու. Վիսսե. — Հուլիս. Նեկոլայ 2-րդի քաղաքագրությունը. հատ. 1-ին 1923. թ. էջ 237.

10. ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐԻ ԱՆԿՈՒՄԸ

«Պորտ- Արտուրն անձնատուր յեղալ»:

«Այս անցքը ժամանակակից պատմութեան խոշորագույն դեպքերից մեկն է: Այս չորս բառը, վոր երեկ հեռագիրը հաղորդեց քաղաքակիրթ աշխարհի բոլոր ծայրերը, ճնշող սպաւորութիւնն են գործում, տպւորութիւն՝ վիթխարի և սոսկալի աղետի, դժբախտութիւն, վոր դժվար է բառերով արտահայտել: Խորտակվում է հզոր կայսրութեան բարոյական ուժը, նսեմանում է հեղինակութիւնը յերիտասարդ ցեղի, վոր դեռ չի կարողացել բացվել, ինչպես հարկն է: Հանվում է դատաւճիռը մի ամբողջ քաղաքական սիստեմի, կտրվում է պահանջների յերկայն շղթան, խորտակվում են հզոր ջանքերը: Պորտ-Արտուրի անկումն է հարկէ վազուց արդեն նախատեսնում էյին, վաղուց արդեն գլխից հեռացնում էյին բառերով և միտքարվում պատրաստի Փըրազներով: Սակայն շոշափելի, կոպիտ փաստը ջախջախում է բովանդակ պայմանական սուտը: Այժմ տեղի ունեցած սնանկութեան նշանակութիւնն անկարելի է թուլացնել: Առաջին անգամն է, վոր հին աշխարհը նըվաստանում է անուղղելի հարվածով, վոր հասցրել է նրան նոր աշխարհը, այնքան խորհրդավոր և ըստ յերևութին պատանի-յերիդասարդ աշխարհը, վոր դեռ յերեկ միայն կոչվեց քաղաքակրթութեան»:

Անցքի անմիջական տպւորութեան տակ այսպես եր գրում յերոպական մի լուրջ բուրժուական թերթ: Յեզ պետք է խոստովանել, նրան հաջողվել է ցայտուն կերպով արտահայտել վոչ ամբողջ յերոպական բուր-

ժուական տրամադրութիւնը. այդ թերթի բերանով խոսում է հին աշխարհի բուրժուազիայի դասակարգային ճիշտ բնագիւղը, այն աշխարհի, վորն անհանգստացել է նոր բուրժուական աշխարհի հաջողութիւններով, վըրդովվել է սնանկութեամբ ոռոսաց զինվորական ույժի, վոր յերկար ժամանակ համարվում եր յերոպական ռեակցիայի ամենավստահելի պատվարը: Զարմանալի չէ, վոր պատերազմին նույնիսկ անմասնակից յերոպական բուրժուազիան այնուամենայնիւ զգում է իրան նվաստացած և ճնշված: Նա սովորել եր Ռուսաստանի բարոյական ույժը յեվրոպական ժաշդարմի զինվորական ուժի հետ նույնացնել: Նրա համար ոռոսական յերիտասարդ ցեղի հեղինակութիւնն անխզելի կապված եր՝ անդրդիւրի ուժեղ ժամանակակից «կարգը» ամուր պահպանող ցարական իշխանութեան հեղինակութեան հետ: Զարմանալի չէ, վոր կառավարող և հրամայող Ռուսաստանի աղետը յերոպական ամբողջ բուրժուազիային թվում է «սոսկալի»: Այդ աղետը, նշանակում է համաշխարհային կապիտալիստական զարգացման հսկայական արագացումը, պատմութեան արագացումը, իսկ բուրժուազիան շատ լավ, չափազանց շատ լավ գիտե, դառն փորձով գիտե, վոր այդպիսի արագացումը՝ պըրոլետարիատի սոցիալական հեղափոխութեան արագացումն է: Արեւմտայեվրոպական բուրժուազիան զգում եր իրան այնպես հանգիստ յերկարատե անշարժութեան մթնոլորտում «հզոր կայսրութեան» թևի տակ, և հանկարծ մի վորեւէ «պատանի-յերիտասարդ խորհրդավոր» ույժ համարձակվում է վրդովել այդ անշարժութիւնը և ջարդել այդ հենարանները:

Այն, յեվրոպական բուրժուազիան պատճառ ունի

վախենալու: Պրոխտարիատը պատճառ ունի ուրախա-
նալու: Մեր ամենավտիւններն թշնամու աղետը նշանա-
կում է վնչ միայն ուսական ազատագրութեան մոտե-
նալը, նա նախագուշակում է նաև յերոպական պրոլե-
տարիատի հեղափոխական նոր վերելքը:

Սակայն ինչո՞ւ և ինչ չափով Պորտ-Արտյուրի ան-
կումը հանդիսանում է իրոք պատմական աղետ:

Նախ և առաջ դեպքը նշանակութուն ունի պա-
տերազմի ընթացքի համար: Յապոնացիք հասել են պա-
տերազմի գլխավոր նպատակին: Առաջադեմ, առաջա-
վոր Ասիան անուղղելի հարված է հասցրել հետամնաց
և հետադեմ Յեվրոպային: Սրանից տասը տարի առաջ
այդ հետադեմ Յեվրոպան Ռուսաստանի գլխավորու-
թյամբ, անհանգիստ եր լինում, յերբ յերիտասարդ Յա-
պոնիան ջարդում եր Չինաստանին. Յեվրոպան միա-
ցալ, վոր Յապոնիայից խլե նրա հաղթութեան լա-
վազունն պտուղները: Յեվրոպան պահպանում եր հին
աշխարհի հաստատված հարաբերութիւնները, դարե-
րով սրճագործված եր վաղեմի նախամեծար իրավունք-
ները՝ ասիական ժողովուրդներին շահահործելու
համար: Պորտ-Արտյուրի Յապոնիայի ձեռքն անցնելը
մի հարված է, վոր կրում է բովանդակ հետադիմական
Յեվրոպան: Ռուսաստանը վեց տարի տիրում եր Պորտ-
Արտյուրին, ծախսելով հարյուր և հազար միլիոններ
ռազմագիտական յերկաթուղիներ, նոր նավահանգիստ-
ներ, նոր քաղաքներ շինելու, բերդն ամրացնելու վրա,
վորը Ռուսաստանի ձեռքով կառուցված և Ռուսաստա-
նի առաջ սողացող յեվրոպական ամբողջ թերթերը հուշա-
կում եյին անառիկ: Չինվորական գրողներն ասում
եյին, վոր Պորտ-Արտյուրն իր ուշփով հալաւոր է վեց

Սևաստապոլի: Յեւ ահա փոքրիկ, մինչ այդ ամենքից
արհամարհված Յապոնիան ութ ամսում տիրանում է
այդ ամբողջան, մինչդեռ Անգլիան և Ֆրանսիան մի-
ասին մի ամբողջ տարի չարշարվեցին Սևաստապոլը
զրավելու համար: Ռազմական հարվածն անուղղելի յե-
նեւրկա պատերազմի գլխավոր և հիմնական հարցը թե
ո՞վ պետք է լինի գերիշխողը ծովի վրա—լուծված է:
Ռուսական խաղաղ ովկիանոսի նավատորմը, վոր պա-
տերազմի սկզբում յապոնականից յեթե վնչ ավելի,
գոնե պակաս ել չեր, վոչնչացած է վերջնականապես:
Խլված է նավատորմի գործողութիւնների նույնիսկ
բազան, և Ռոժեստովենսկու եսկադրային միայն մնում
է խայտառակարար հետ դառնալ՝ ապարդյուն կերպով
նորանոր միլիոններ ծախսելուց հետո, այն մեծ հաղ-
թութիւնից հետո, յերբ մեր ահեղ զահաւորները տա-
րան անգլիական ձկնորսական նավերի վրա: Հաշվում
են, վոր միայն նավատորմի վրա Ռուսաստանի նյու-
թական կորուստը կըլինի յերեք հարյուր միլիոնի չափ
մի գումար: Բայց ավելի ևս կարեւոր է տասնյակ հա-
զարի չափ լավագուն նավաստիների կորուստը, մի
ամբողջ ցամաքային բանակի կորուստը: Յեվրոպական
շատ թերթեր աշխատում են այժմ այդ կորուստների
նշանակութիւնը թուլացնել, հասնելով իրանց այդ յե-
ռանդի մեջ այսպիսի ծիծաղաշարժ արտահայտութիւն-
ների, թե Կուրոպատիկներ «թեթեացել են», Պորտ-Արտյու-
րի հոգսերից ազատվել են: Ազատվել է նաև ուսաց գոր-
քը մի ամբողջ բանակից, Գերիների թիվը, Անգլիական
վերջին տվյալների համաձայն, հասնում է 48 հազարի.
Իսկ քանի՞-քանիսներն ընկել են Կինչաուի կռիվներ-
ում և հենց Պորտ-Արտյուրի պարիսպների տակ: Յա-

պոնացիք վերջնականապես տիրում են Լյարտունին, ձեռք են բերում անսահման կարևորություն ունեցող հենակետ Կորեայի, Չինաստանի և Մանջուրիայի վրա՝ իրանց ազդեցությունը տարածելու համար, Կուրոպատկինի դեմ կռվելու համար ազատում են 80-100 հազարանոց մի փորձված բանակ՝ հսկայական ծանր հրետանու հետ, վոր յեթե Շախո գետի ափը փոխադրվի, նրանք ուսաց գլխավոր ուժերի հանդեպ ճնշող գերակշռություն կունենան:

Միապետական կառավորությունը, ինչպես հաղորդում են արտասահմանի թերթերը, վճռել է, ինչ ուզում է լինի, շարունակել պատերազմը, և 200 հազարանոց բանակ ուղարկել Կուրոպատկինին: Շատ կարելի չէ, վոր դեռ պատերազմը յերկար տևի, սակայն նրա անհուսալիությունն ակներև է, և յեթե շարունակվի, միայն պիտի սաստկանան այն անհամար թշվառությունները, յոր տանում է ուս ժողովուրդը, տանում է, վորովհետև իր ուսերի վրա կրում է ինքնակալությունը: Յապոնացիք մինչև այսօր ել ամեն մի մեծ ճակատամարտից հետո ավելի արագ, ավելի շատ եյին ոժանդակում իրանց ղինվորական ուժերին, քան ուսները: Իսկ այժմ, կատարյալ տեղ գտնալով ծովին, և կատարելապես վոչնչացրած լինելով ուսաց բանակներից մեկը, նրանք կարող կը լինեն ուսներից յերկու անգամ ավելի ոժանդակ ուժեր ուղարկել: Յապոնացիք մինչև այժմ ջարդում, հաջարդում եյին ուսաց գեներալներին, չնայելով վոր նրանց հրետանու լավագույն մասը զբաղված եր ամբողջային պատերազմում: Յապոնացիք այժմ հասել են իրանց ուժերի կատարյալ կենտրոնացման, իսկ ուս-

ները նախազգուշական միջոցներ պետք է ձեռք առնեն վոչ թե Սախալինի, այլև Վլադիվստոկի համար: Յապոնացիք գրավել են Մանջուրիայի ամենալավ և ամենախիտ բնակված մասը, վորտեղ նրանք իրանց բանակը կարող են պահել գրաված յերկրի միջոցներով և Չինաստանի ոգնությունը: Իսկ ուսներն ստիպված են հետզհետե բավարարվել այն պարենով, վոր ուղարկում են Ռուսաստանից, և շուտով Կուրապատկինի համար՝ հետագայում բանակ մեծացնելն անհնարին կը դառնա՝ Ռուսաստանից բավականաչափ պարեն ստանալու անկարելիություն հետևանքով:

Սակայն ռազմական անանկությունը, վոր կրեց միապետությունը, ավելի ևս մեծ նշանակություն է ստանում վորպես նշան մեր ամբողջ քաղաքական սխառեմի խորտակման: Անդարձ կերպով հավիտենականություն գիրկն անցան այն ժամանակները, յերբ պատերազմները վարում եյին վարձկանները կամ ժողովրդից կիսով չափ կտրված կաստաների ներկայացուցիչների միջոցով: Այժմ պատերազմները վարում են ժողովուրդները: Նույն իսկ Կուրոպատկինը, ինչպես վկայում է Նեմիրովիչ-Դանչենկոն, սկսել է ըմբռնել, վոր այդ ճշմարտությունը մենակ վայելչագրության տեսրակներում գրելու համար չէ: Պատեգրագմներն այժմ վարում են ժողովուրդները և դրա համար ել ներկայումս ավելի պայծառությամբ է յեղևան գալիս միլիոնավոր մարդկանց մեծ հատկությունը, ժողովրդի և կառավարության միջև յեղած այն անհամապատասխանությունը, վոր մինչև այժմ նկատելի յեր միայն գիտակից աննշան փոքրամասնություն համար: Այն քննադատությունը, վորին յե-

Թարկվում եր ինքնակալությունը բոլոր ուսումնական մարզերից, ուսումնական սոցիալ-դեմոկրատիայի կողմից, ուսում պրոլետարիատի կողմից, այժմ հաստատված ե յապոնական զորքի քննադատությամբ, հաստատված ե այնպես, վոր միապետության ժամանակ ապրելու անկարելիությունն ալելի ե ալելի զգացվում ե նույն իսկ նրանց կողմից, վորոնք չգիտեն, թե ինչ ասել ե միապետություն, նույն իսկ նրանց կողմից, վորոնք գիտեն ե ամբողջ հոգով կրքանկանային պաշտպան կանգնել միապետության: Ինքնակալության ե ամբողջ հասարակական դարգացման շահերի, ամբողջ ժողովրդի (բացի մի խումբ չինոֆիլներից ու հարուստներից) շահերի անհաշտելիությունը յերևան յեկավ, հենց վոր ժողովուրդն ստիպված յեղավ ինքնավարության համար հատուցում տալ իր արյունով: Ինքնավարությունը իր հիմար ե հանցավոր գաղութային արկածախնդրությամբ իրան ձգեց մի այնպիսի փակուղի, վորից կարող ե դուրս գալ միայն ինքը՝ ժողովուրդը ե միայն ցարիզմի խորտակման գնով:

Պորտ-Արտյուրի անկումը պատմական խոշորագույն հաշվետվություններից մեկն ե ցարիզմի այն հանցագործությունների, վորոնք սկսել են այժմ յերևան գալ ալելի ես լայնորեն, ալելի ես անգուսպ: Մեղանից հետո թեկուզ ջրհեղեղ,—այսպես եր դատում ամեն մի փոքր ե մեծ Ալեքսեյ, չմտածելով, չհալատալով, վոր ջրհեղեղն իրոք պիտի լինի: Գնեբրալները, ղրքապետները դուրս յեկան անճարակություններ ե վոչնչություններ: 1904 թվականի ամբողջ պատմությունը, մեկ անգլիական զինվորական գրողի հեղինակավոր

վկայությամբ («Թայմս» թերթում), «մի դատապարտելի արհամարհանք եր ծովային ե ցամաքային ռազմադիտության տարրական սկզբունքներին»: Թե զինվորական, թե քաղաքացիական բյուրոկրատիան նույն ձերիակեր ե վաճառվող բյուրոկրատիան դուրս յեկավ, ինչ վոր եր ճորտատիրության ժամանակ: Սպառությունն անկիրթ, անզարգացած, անպատրաստ, զուրկ սերտ կապից զինվորների հետ ե նրանց վստահությունը չվայելող: Գյուղական մասսայի խավարը, սոցիալությունը, անգրագիտությունը, ընկճված լինելը սոսկալի բացահայտությամբ յերևան յեկան, յերբ ընդհարվեցին առաջադեմ ժողովրդի հետ ժամանակակից պատերազմում, վորը նույնպես անհրաժեշտորեն պահանջում ե բարձր վորակի մարդկային նութ, ինչպես վոր ժամանակակից տեխնիկան: Առանց ձեռներեց, գիտակից զինվորի ե նավաստու անկարելի յե ժամանակակից պատերազմում հաջողություն ունենալ: Վոչ մի տոկոսնություն, վոչ մի ֆիզիքական ուժ, վոչ հոտականությունը ե համախմբումը ժամանակակից մասսայական կովում չեն կարող գերակշռություն տալ արագաձիգ հրացանների, մեքենայական թնդանոթների, նավերի բարդ տեխնիկական կառուցվածքների ցամաքային ճակատամարտների ցիրուցան զորաշարքերի դարաշրջանում: Ինքնակալական Ռուսաստանի ռազմական հզորությունը խափուսիկ, յերևակայական դուրս յեկավ: Դուրս յեկավ, վոր ցարիզմը խոչընդոտ ե հանդիսանում նորագույն պահանջների բացակայության վրա կանգնած զինվորական գործի կազմակերպման, խոչընդոտ ե լինում հենց այն գործին, վորին ինքը ցարիզմը նվիրված եր իր ամբողջ հոգով, վորով

նա ամենից շատ եր պարծնում, վորին նա անչափ
զոհեր եր բերում՝ չթաշվելով վոչ մի ժողովրդական
ընդդիմադրությունից:

Մեկիսած գերեզման—ահա ինչ դուրս յեկավ ինք-
նակուալությունն արտաքին պաշտպանության ասպա-
րիզում, իրան ամենից հարազատ և ամենից մոտ, այս-
պես ասած, մասնագիտության մեջ: Դեպքերը հաստա-
տեցին, վոր ճիշտ եյին այն ոտարագրելները, վորոնք
ծիծաղում եյին, տեսնելով թե ինչպես տասնյակ հար-
յուրավոր միլիոններով փողեր ինչ պարտվում հոյակապ
ուսման համար շինելու և զնելու համար. նրանք
ասում եյին, թե անոգուտ են այդ ծախսերը, քանի
վոր չկան մարդիկ, վորոնք վարվել գիտենան ժամանա-
կակից նավերի հետ, քանի վոր չկան մարդիկ, վորոնք
գիտակ լինեն գործին և ընդունակ ոգտվելու գին-
վորական տեխնիկայի նորագույն կատարելագործու-
թյուններով: Դուրս յեկավ, վոր նավատորմն ել, բերդն
ել, դաշտային ամրություններն ել, ցամաքային բա-
նակն ել յետ են մնացել և բոլորովին անպետք են:

Յերբեք յերկրի գինվորական կազմակերպության
կապը այնքան սերտ չի յեղել յերկրի ամբողջ տնտե-
սական և կուլտուրական կառուցվածքի հետ, ինչպես
ներկա ժամանակում: Ուստի և գինվորական սնան-
կությունը չի կարող յերևան չգալ վորպես սկիզբ քա-
ղաքական խոր կրիզիսի: Առաջավոր յերկրի պատե-
րազմը հետամնացի հետ այս անգամ ել, ինչպես բազ-
նիցս պատմության ընթացքում, կատարեց մեծ հեղա-
փոխական դեր: Յեվ գիտակից պրոլետարիատը անվո-
ղոք թշնամի լինելով պատերազմի, վոր անխուսափե-
լի և անվեհեր ուղեկիցն է առհասարակ ամեն մի դա-

սակարգային տիրապետության, չի կարող իր աչքերը
փակել այս հեղափոխական խնդրի առաջ, վոր կատա-
րում է ինքնակալության ջարդ ու փշուր անող յա-
պոնական բուրժուազիան: Պրոլետարիատը հակառա-
կորդն է ամեն մի բուրժուազիայի և բուրժուական
կարգի ամեն մի արտահայտության. սակայն հակա-
ռակորդ լինելով հանդերձ՝ պրոլետարիատը պարտավոր
է տարբերել պատմականորեն առաջագիծ բուրժուա-
զիայի ներկայացուցիչներին հետադիմականներից: Ուս-
տի և միանգամայն հասկանալի չէ, վոր միջազգային
սոցիալ-դեմոկրատիայի ամենահետևողական և վճռա-
կան ներկայացուցիչները—ժյուլ Գեդը Ֆրանսիայում
և Հայնզմանը Անգլիայում—առանց այլևայլության
իրանց համակրանքն արտահայտեցին Յապոնիային,
վոր ջարդ է տալիս ռուսաց ինքնակալությանը: Մե-
զանում, Ռուսաստանում գտնվեցին իհարկե սոցիալիստ-
ներ, վորոնք այդ հարցի մեջ մտքերի խառնաշփո-
թություն հայանաբերեցին: «Հեղափոխական Ռուսաս-
տանը» Գեդին և Հայնզմանին հանդիմանություն կար-
գաց, հայտնելով, վոր սոցիալիստը կարող է կողմնա-
կից լինել միայն բանվորական, ժողովրդական Յապո-
նիային և վոչ թե բուրժուականին: Այդ հանդիմանու-
թյունը նույնքան անհեթեթ է, վորքան անհեթեթ կը-
լիներ, յեթե սկսեյին դատապարտել ահա սոցիալիստին,
վորն ընդունեւր ազատ առևտրի կողմնակից բուրժու-
ազիայի հառաջագիծ լինելը՝ հովանավորության (պրո-
տեկցոնիզմը) կողմնակիցների նկատմամբ: Գեդն ու
Հայնզմանը չեն պաշտպանում յապոնական բուրժու-
ազիային և յապոնական իմպերիալիզմը. սակայն յեր-
կու բուրժուական յերկրներին ընդարման հարցում նը-

րանք ճիշտ նկատել են մեկի պատմականորեն-առաջադեմ դերը: «Սոցիալիստ-հեղափոխականները» մտքերի խառնաշփոթությունը իհարկե անխուսափելի հետևանք է այն հանգամանքի, վոր մեր արմատական ինտելիգենցիան չի ըմբռնում դասակարգային տեսակետը և պատմական մատերիալիզմը: Ձեր կարող մտքերի խառնաշփոթությունը չունենալ նաև նոր «Укра»-ն: Սկզբում նա քիչ խոսքեր չեր շռայլում խաղաղության համար, ինչ գնով ել ուզում եր լինի այդ խաղաղությունը: Սպա նա սկսեց «ուղղվել», յերբ ժորեսը ակնառու ցույց տվավ, թե ընդհանրապես խաղաղության համար այդ իբր թե-սոցիալիստական կամպանիան ում շահերին պիտի ծառայե—առաջադեմ, թե՞ հետադեմ բուրժուազիայի: Թերթն այժմ վերջացնում է գոհնիկ դատողություններով այն մասին, վոր անտեղի յե «սպեկուլյացիա» (!!?) անել յապոնական բուրժուազիայի հաղթությամբ, թե պատերազմը չարիք է՝ «անկախ նրանից», կըվերջանա արդյոք ինքնակալության հաղթությամբ թե պարտությունը:

Վնչ. ոռւսական ազատություն և ոռւսական (նա և համաշխարային) պրոլետարիատի պայքարի գործը սոցիալիզմի համար շատ ուժեղ կերպով կախված է ինքնակալության ուղմական պարտություններից: Այս պայքարի գործը խիստ մեծ շահ ունեցավ պատերազմական սնանկությունից, մի սնանկություն, վոր յերկյուղ է ազդում բոլոր յերոքողական կարգը պահողներին: Հեղափոխական պրոլետարիատը պետք է անդադար ագիտացիա անե պատերազմի դեմ, միշտ հիշելով, վոր պատերազմներն անխուսափելի յեն, քանի դեռ կանգուն է դասակարգային տիրապետությունը:

առհասարակ: Խաղաղության համար անձար ֆրազներ շռայլելով և լա ժորես, չես ոգնիլ ճնշված դասակարգին, վորը պատասխանատու է յերկու բուրժուական ազգերի բուրժուական պատերազմի համար, վորն ամեն բան անում է առհասարակ ամեն մի բուրժուազիայի տապալման համար, վորը գիտե ժողովրդական թշվառությունների անհունությունը նաև «խաղաղ» կապիտալիստական շահադործման ժամանակ: Սակայն պայքար մղելով ազատ կոնկուրենցիայի դեմ, մենք չենք կարող մոռանալ նրա առաջադեմական լինելը՝ համեմատած կիսաճորտատիրական կարգի հետ:

Կովկելով ամեն մի պատերազմի, ամեն մի բուրժուազիայի դեմ, մենք խիստ պետք է տարբերենք մեր ագիտացիայի միջոցին առաջադեմ բուրժուազիային ճորտատիրական ինքնակալությունից, մենք միշտ պետք է նշմարենք մեծ հեղափոխական դերն այս պատմական պատերազմի, վորին ապամա մասնակցում է ոռւս բանվորը:

Վնչ թե ոռւս ժողովուրդը, այլ ոռւսական ինքնակալությունն է սկսել այս դաղութային պատերազմը, վոր վերածվել է դարձել է հին և նոր աշխարհների կռիվ: Վնչ թե ոռւս ժողովուրդը, այլ ինքնակալությունն է խայտառակ պարտություն վրել: Ռուս ժողովուրդը շահել է ինքնակալության պարտությամբ: Պորտ-Սուդանի անձնատուր լինելը նախերգանքն է ցարիզմի անձնատուր լինելուն: Պատերազմը դեռ շուտ չի վերջանա. սակայն նրա շարունակության ամեն մի քայլը անհունորեն ընդլայնացնում է ոռւս ժողովրդի մեջ խմորումն ու վրդովմունքը, մոտեցնում է նոր մեծ պատերազմի ժամը, ժողովրդի պատերազմի ընդդեմ ինք-

նակալության, պրոլետարիատի պատերազմի հանուն ազատության: Զուր չե, վոր այնքան անհանգստանում և ամենից հանգիստ և զգաստ յեվրոպական բուրժուազիան, վորն ամբողջ սրտով ուրախ կըլինեն, յեթե ուսական ինքնակալությունը լիբերալ զիջումներ տան, սակայն վորը ուսական հեղափոխությունից, վորպես յեվրոպական հեղափոխության նախերգանքից, ավելի յե վախենում, քան կրակից:

Հաստատապես արմատացած կարծիք ե,—գրում ե գերմանական բուրժուազիայի զգաստ որդաններից մեկը,—վոր հեղափոխության պայթումն Ռուսաստանում միանգամայն անկարելի բան ե: Այդ կարծիքը պաշտպանում են ամենքը ամեն տեսակ պատճառաբանություններով: Առաջ են բերում ուս գյուղացության անշարժությունը, դեպի թագավորն ունեցած հավատը, հոգևորականությունից կախված լինելը: Ասում են, վոր դժգոհների մեջ ծայրահեղ տարրերը մի փոքրիկ բուն մարդիկ են, վորոնք կարող են առաջ բերել միայն փոքրիկ բռնկումներ և տերրորիստական փորձեր, բայց վոչ յերբեք ընդհանուր ապստամբություն առաջացնել: Եեդ ասում են, վոր դժգոհների լայն մասսաներին պակասում ե կազմակերպություն, զենք և, վոր գլխավորն ե, իրանց ուժը վտանգի յենթարկելու վրձնականություն: Իսկ ուս ինտելիգենտը հեղափոխականորեն տրամադրված ե լինում միայն սովորաբար, մոտ մինչև 30 տարեկան հասակը, վորից հետո նա գեղեցիկ կերպով տեղավորվում ե արքունի տեղերից մի հարմարավոր անկյունում, և տաք գլուխների մեծ մասին վերածում են սովորական չինովնիկներին: Բայց այժմ, շարունակում ե թերթը, ամբողջ նշաններ վկա-

յում են խոշոր փոփոխության մասին: Ռուսաստանի հեղափոխության մասին արդեն մենակ հեղափոխականները չեն խոսում, այլ և «հրապուրվելուց» միանգամայն հեռու կարգի այնպիսի հաստատուն սյուներ, ինչպիսին ե իշխան Տրուբեցկոյը, վորի գրած նամակը ներքին գործերի մինիստրին, այժմ արտասահմանի վող մամուլն արտատպում ե: Ռուսաստանի հեղափոխության յերկյուղն ըստ յերեւութին ունի իրական հիմքեր: Ժիշտ ե, վոչ վոք չի կարծում, վոր ուս գյուղացիները յեղանները ձեռք կառնեն և կովի կերթան սահմանադրության համար: Սակայն միթե հեղափոխությունները գյուղերումն են անում: Նորագույն պատմության մեջ հեղափոխական շարժման կրողները վաղուց ե արդեն խոշոր քաղաքներն են դարձել: Իսկ Ռուսաստանում հարավից հյուսիս և արեւելքից արեւմուտք, հենց քաղաքներումն ե վոր խմորում կա: Վոչ վոք հանձն չի առնիլ գուշակելու, թե ինչով կըվերջանա այս, բայց վոր Ռուսաստանում հեղափոխությունն անկարելի համարող մարդկանց թիվը որեցոր պակասում ե, դա մի անկասկածելի փաստ ե: Իսկ յեթե տեղի ունենա մի լուրջ հեղափոխական պայթյուն, ավելի քան կասկածելի յե, վոր Հեռավոր Արեւելքի պատերազմի հետեանքով թուլացած ինքնակալությունը կարողանա նրանից գլուխ հանել:

Այս ինքնակալությունը թուլացել ե Հեղափոխությանն սկսում են հավատալ ամենից անհավատները: Ընդհանուր հավատը դեպի հեղափոխությունը՝ արդեն սկիզբն ե հեղափոխության: Նրա շարունակության մասին հոգ ե տանում ինքը կառավարությունը իր ռազմական արկածախնդրությամբ: Լուրջ հեղափո-

խաղան զրոհի պաշտպանության և ընդլայնման մասին հոգ կը տանի ռուսական պրոլետարիատը:

«Вперед», № 2, Ժընև. 14 (1) հունվար. 1905 թ.

11. ՄԻ ՀԱՏՎԱԾ Մ. Ն. ԼՅԱԴՈՎԻ ՀԱՌԱՋԱՐԱՆԻՑ

(«Ռ. Ս. Դ. Բ. Կ. Յ-րդ համագումարը՝ 1905 թ.» գրքից)

1904 թվականի փետրվարից սկսվում է արգեն բալչեիկյան կոմիտեների պայքարը արտակարգ համագումար հրավիրելու համար, վոր պետք է վերջ դնել իրենցի այն դրության, վոր ստեղծվել էր շնորհիվ նրան, վոր կուսակցության աննշան փոքրամասնությունը, հենված արտասահմանի տարագիր ինտելիգենցիայի վրա, իր ձեռքն էր հավաքել կենտրոնական ուղղանները: Տեղական կոմիտեների սկսած պայքարը՝ համագումարի համար, հուսահատական ընդդիմության է հանդիպում նոր, «Իսկրայի» կուսակցության խորհրդի և հաշտեցողական կենտրոնական կոմիտեի կողմից: Մենչևիկյան ղեկավարները մի բուպե անգամ չեյին կասկածում, վոր կուսակցության համագումարն անագին մեծամասնությամբ իրանց դեմ պիտի արտահայտվի և բալչեիկյաների դիրքը պիտի ամրացնի: Յեվ հենց հատկապես դրա համար ել նրանք վճռել էյին թույլ չտան համագումարը: Ամբողջ տարին տևում է պայքարը: Այդ պայքարի ընթացքում ավելի և ավելի յեն պարզվում բալչեիկյաների և մենչևիկյաների մեջ յեղան հիմնական տարաձայնությունները: Մյուս կողմից ել պարզվում է, վոր այդ պայքարը ցանկալի հետևանքների չպետք

է հանգի, յեթե բուլչեիկյաներն իրանց համար չստեղծեն. և չձևակերպեն գաղափարական և կադմակերպական կենտրոն:

Այդ ուղղությամբ առաջին քայլը 22 բուլչեիկյաների կոնֆերանսը յեղավ, վոր կայացավ Ժընևում 1904 թ. ոգոստոսին: Այս կոնֆերանսը գումարել էր Վլադիմիր Իլիչը: Կոնֆերանսին մասնակցում էյին գըլխավորապես Ռուսաստանում աշխատող ընկերները, վորոնք նոր էյին յեկել արտասահման: Այդ կոնֆերանսում մշակվում է մի բանաձև, վորն սպա տպագրվում է Ռիգայի կոմիտեյի տպարանում: Այդ բանաձևի մեջ պարզ և վորոշ մատնանշվում է, վոր սոցիալ-դեմոկրատիայի համար անհրաժեշտ է կադմակերպել ինքնակալության դեմ վերջին, վճռական կռիվը: Ապա ասվում է, վոր այդ խնդիրն անհրաժեշտ է յե շնորհիվ նրա, վոր չկա կուսակցական միաձուլություն, կարգապահություն (դիսցիպլին) և «ներդաշնակ միացած գործողության» ընդունակություն: Այս խնդիրն իրագործելի կը դառնա միայն այն ժամանակ, յերբ կուսակցությունը կատարելապես հաղթանակե խմբակցականությանը: Մենչևիկյաների գլխավոր կադրերը՝ իրանց եյությամբ ինդիվիդուալիստորեն տրամադրված ինտելիգենտներ էյին, վորոնք ուղանապես անկարող էյին ընդունել կուսակցական դիսցիպլինան: Ընդհակառակը՝ անգուսպ զարգացող պրոլետարական տեղական կադմակերպությունները ձգտում են աշխատանքի կարգապահ միասնականության: Համագումարի հետ կապված՝ «վճռվում է կուսակցության կյանքի հարցը, պատվի և արժանավոր

թուլթյան հարցը, արդյոք գոյութիւն ունի՞ր կուսակցութիւնը վորպես գաղափարական և իրական ուժ, ընդունակ խելացիորեն կազմակերպելու այն չափով, վորպեսզի հանդես գա վորպես իսկական ղեկավար մեր յերկրի բանվորական հեղափոխական շարժման»:

Բալչևիկյան կուսակցութիւն կազմակերպութեան սկիզբը փաստորեն կարելի չի համարել 22-ի կոչը: Այդ կոչը, վոր ընդունել է և տպագրել Ռիգայի կոմիտեն, քննութեան և առնվում Ռուսաստանի յերեք կոնֆերանսներում. Հյուսիսային, Հարավային և Կովկասյան: Այս կոնֆերանսներում բանաձև ընդունվում է պլատֆորմա՝ բոլշևիկյան ամբողջ ֆրակցիայի համար: Հենց այդ կոնֆերանսներում էլ ընտրվում է ֆրակցիայի կենտրոն—«Մեծամասնութեան Կոմիտեների Բյուրո», վորին տեղական կազմակերպութիւնները վստահում են թե համագումարը կազմակերպելու աշխատանքը և թե մինչև համագումարը բոլոր աշխատանքների ղեկավարութիւնը: Մեծամասնութեան Կոմիտեների Բյուրոն իր «Вперед» թերթի համար կազմում է խմբագրութիւն: Իհարկե, Մեծամասնութեան Կոմիտեների Բյուրոյի և «Вперед» թերթի խմբագրութեան սիրտն ու հոգին լինում է Իլիչը:

«Третий очередной Съезд Р. С. Д. Р. П. 1905 г.»
Госиздат. Москва, 1924 г. стр. 9.

12. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

(Ռ. Ս. Դ. Բ. Կ. (բայլեվիկներին) 22 անդամի 1904 թ. դիմումը)

ՌՈՒՄ. ՍՈՑ. ԴԵՄ. ԲԱՆ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ*)

Մոտ որեքս կայացավ Ռ. Ս. Դ. Բ. Կ. 22 անդամների մասնավոր ժողովը: Դրանք՝ կուսակցական 2-րդ համագումարի ժամանակ մեծամասնութեան տեսակետի վրա կանգնածներից էին: Այդ կոնֆերանսից հետո, քննութեան առնելով մեր կուսակցութեան կրիտիկ հարցը և այդ կրիտիկից դուրս գալու միջոցները, վճռում է դիմել Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատներին հետևյալ կոչով.

Ընկերներ. Կուսակցական կյանքի ծանր կրիտիկը դեռ շարունակ ձգձգվում է. նրա վերջը չի յերևում: Շփոթը մեծանում է՝ շարունակ նորանոր ընդհարումներ առաջ բերելով. կուսակցութեան դրական աշխատանքը ամբողջ գծով ծայրահեղորեն ճնշված է: Տակավին յերիտասարդ և դեռ չամրացած կուսակցութեան ույժերը ապարդյուն կերպով վատնվում են ըսպառնալից չափերով:

Մինչդեռ պատմական մոմենտը կուսակցութեանն առաջադրում է այնպիսի հսկայական պահանջներ, ինչպես յերեք յեղած է: Բանվոր դասակարգի հեղափոխական հուզմունքն աճում է, սաստկանում է խմորու-

*) Ժողովածու. Կ. «Партия», Ժընևի, 1904 թ.

մը հասարակութեան նաև այլ խաղերում. պատերազմն ու կրիգիսը, սովն ու գործազրկութիւնը տարերային անխուսափելիութեամբ փորում են ինքնակալութեան արմատները: Խայտառակ պատերազմի խայտառակ վախճանն այնքան ել հեռու չէ, իսկ այդ հանգամանքն անխուսափելիորեն պիտի տասնապատկե հեղափոխական հուզմունքը, անխուսափելիորեն պիտի հրե բան-վոր դասակարգին յերես առ յերես կանգնելու իր թըշ-նամիրները դեմ և պահանջե սոցիալ-դեմոկրատիայից հսկայական աշխատանք, ուժերի սաստակագոյն լա-րում՝ ինքնակալութեան դեմ վերջին վճռական կռիւ կազմակերպելու համար:

Կարող եւ արդյոք մեր կուսակցութիւնն իր ար-դի վիճակում գոհացում տալ այդ բոլոր պահանջներին: Ամեն մի բարեխիղճ մարդ առանց տատանումների պետք ե պատասխանե՝ վնչ:

Կուսակցութեան միասնականութիւնը ջլատված ե խորապես. նրա ներքին կռիւն դուրս ե յեկել ա-մեն մի կուսակցականութեան շրջանակից: Կազմակերպ-չական կարգապահութիւնը խախտված ե մինչև խոր հիմքերը. կուսակցութեան ընդունակութիւնը կազմա-կերպված ե միահամուռ գործողութեան համար ցնորք ե դառնում:

Բայց և այնպես կուսակցութեան այդ հիվանդու-թիւնը մենք համարում ենք աճման հիվանդութիւն: Այդ կրիգիսի հիմքը մենք տեսնում ենք այն հանգա-մանքի մեջ, վոր սոցիալ-դեմոկրատիան խմբակային ձևից անցնում ե կուսակցական ձևերին: Կուսակցու-թեան ներքին պայքարի ելութիւնը խմբակցութեան և կուսակցականութեան ընդհարման մեջ ե: Յեւ դրա

համար ել մեր կուսակցութիւնը կարող ե դառնալ իսկակառն կուսակցութիւն միայն այն ժամանակ, յերբ վերջ տրվի այդ հիվանդութեան:

«Փոքրամասնութեան» անունով մեր կուսակցու-թեան մեջ խմբվել են այլազան տարրեր, վոր իրար հետ կապված են խմբակցական հարաբերութիւնները, կազմակերպութեան նախակուսակցական ձևերը գի-տակցաբար կամ անգիտակցաբար պահելու ձգտում-ներով:

Առաջվա ամենաազդեցիկ խմբակների մի քանի աչքի ընկնող գործիչներ, վորոնք անսովոր են կազ-մակերպչական այն ինքնասահմանափակումներին, վոր պահանջում ե կուսակցական կարգապահութիւնը, տը-րամադիր են ըստ սովորութեան համ-կուսակցական շահերը շփոթել խմբակցական շահերի հետ, վորոնք, հիրավի, խմբակցական շրջանում կարող եյին շատ ան-գամ նույնը լինել. այդպիսի գործիչների մի ամբողջ շարան գլուխ ե անցել այդ պայքարի, վոր մղվում ե՝ և՛ հոգուտ խմբակցականութեան, և՛ ընդդեմ կուսակ-ցականութեան («Իսկրա» թերթի առաջվա խմբագրու-թեան մի մասը, նախկին Կազմակերպչական Կոմիտեյի մի մասը, նախկին «Հարավային Բանվոր» խմբագրի անդամները և ուրիշները):

Դրանց դաշնակից դուրս յեկան այն բոլոր տա-րրերը, վորոնք թե թերօրիայում և թե պրակտիկայում ջեղվում եյին ճշմարիտ սոցիալ-դեմոկրատիզմի սկզբ-բունքներից, վորովհետեւ միայն խմբակցականութիւ-նն եր, վոր կարող եր այդ տարրերի դադափարական անհատականութիւնը և ազդեցութիւնը պահպանել, իսկ կուսակցականութիւնն սպառնում եր լուծել նը-

նելով այս լողուններն, վաղը մյուս լողուններն, նա նյութ է քաղում ավելի կուսակցութեան ավ թելից—«Իսկրայի» նախկին հակառակորդներից,—գաղափարապես մոտենում է ավելի նրանց, վերականգնելով նրանց կուսակցութեան կողմից մերժված թեորիաները, հետ տանելով կուսակցութեան գաղափարական կյանքը դեպի սկզբունքային անորոշութեան, գաղափարական տատանումների և յերեբումների թվում եր արդեն առարած շրջանը:

Մյուս կողմից՝ նոր «Իսկրան», աշխատելով վարկաբեկել կուսակցութեան մեծամասնութեան բարոյական ազդեցութունը, ավելի էս սաստիկ զբաղված է մեծամասնութեան գործիչների սխալները վորոնելով և նրանց մերկացնելով, ամեն մի իրական վրիպում ուղեցնելով և հասցնելով հրեշային չափերի և աշխատելով պատասխանալու թյուրումներ բարդիլ ամբողջ մեծամասնութեան վրա, ձայնակցելով ամեն մի խմբակցական բամբասանքի, ամեն մի քսութեան, վոր կարող է վրնասել հակառակորդին, հոգ չտանելով վոչ միայն զբրանց ստուգման մասին, այլ շատ անգամ նույնիսկ հավանականութեանը: Այդ ձանադարնով նոր «Իսկրայի» գործիչները մինչ այնտեղ հասան, վոր սկսեցին մեծամասնութեան անդամներին վերագրել վոչ միայն միանգամայն չեղած, այլև միանգամայն անհնարին հանցագործություններ, և վոչ միայն քաղաքական (որինակ Կ. Կ. մեղադրելը այն բանում, վոր նա անհատներին և կազմակերպություններին բռնի լուծում է): Այլև ընդհանուր բարոյականութեան տեսակետից (կուսակցութեան ականավոր գործիչներին մեղադրելը կեղծիքի և կեղծիքին բարոյական աջակցություն ցույց

առաջ համար): Դեռ յերբեք կուսակցությունը չեր ընկել կեղտի և ցեխի այգալիսի մի ծովի մեջ, վորպիսին ստեղծվել է ներկա բանակովի միջոցին արտասահմանյան փոքրամասնութեան ձեռքով:

Խնչպես կարող եր այս բոլորը պատահել:

Ամեն կողմի գործողությունների յեղանակը համապատասխանում եր կողմի տենդենցների հիմնական բնույթին: Կուսակցութեան մեծամասնությունը ձգտելով ինչ գնով ել լինի, պահպանել նրա միասնականությունը և նրա կազմակերպչական կապը, պայքարում եր միայն կուսակցական—լոյալ միջոցներով և հաշտութեան համար մեկ անգամ չեր, վոր գիշումներ եր տանում: Փոքրամասնությունը, հետապնդելով անարխիստական տենդենցներ, հոգ չեր տանում կուսակցութեան հաշտութեան և միասնականութեան մասին: Նա ամեն մի գիշում վենք եր դարձնում հետագա պայքարի համար: Փոքրամասնութեան բոլոր պահանջներից չի բավարարված մինչև այժմ միայն մեկը—անհամերաշխություն մտցնել կուսակցութեան կենդրոնական կոմիտեյի մեջ՝ ընդունելով բռնութեամբ նրա վզին փաթաթած փոքրամասնութեան (անդամներին կոպտացիայի իրավունքով—և փոքրամասնութեան հարձակումներն ավելի կատաղի յեն դառնում, զան վորեւե ժամանակ: Փոքրամասնությունը, տիրանալով կուսակցութեան կենդրոնական որգանին և խորհրդին, այլևս չի քաշվում իր խմբակցական շահերի համար շահագործելու նույն այն գիսցիպլինան, վորի դեմ նա պայքարում է ըստ եյության:

Դրությունը դարձել է անտանելի, անհնարին. ավելի յերկար ձգձգել՝ ուղղակի հանցանք է:

Այդ դրութիւնից դուրս գալու միակ միջոցը մենք համարում ենք կուսակցական հաբաբերութիւններին մեջ կատարյալ պարզութիւն և անկեղծութիւն: Գեղատի և մշուշի մեջ անկարելի յե արդեն ուղիղ ճանապարհի գտնել: Կուսակցական ամեն մի հոսանք, ամեն մի խմբակ պետք է բաց և վորոշակի ասի, թե ինչ են մտածում կուսակցութեան ներկա վիճակի մասին և ինչպիսի յելք են ուզում դրանից դուրս գալու համար: Այս առաջարկով ել մենք դիմում ենք բոլոր ընկերներին, կուսակցութեան ամեն յերանգի ներկայացուցիչներին: Կրիզիսից դուրս գալու գործնական յելքը մենք տեսնում ենք կուսակցական 3-րդ համագումարի անհապաղ գումարումը: Միայն նա կարող է պարզել դրութիւնը, վճռել ընդհարումները, շրջանակների մեջ դնել պայքարը: Առանց համագումարի կարելի յե միայն սպասել կուսակցութեան պրոգրեսիվ կազմալուծումը:

Բոլոր այն առարկութիւնները, վորոնք առաջ են բերվում համագումարի դեմ, մենք համարում ենք անպայման անդոր:

Մեզ ասում են. Համագումարը կըտանի պառակտման: Բայց ինչո՞ւ: Յեթե փոքրամասնութիւնը անհաշտ մնա իր անարխիստական ձգտումներով, յեթե նա պատրաստ է ավելի շուտ պառակտման դնալու, քան կուսակցութեանը յենթարկվելու, նա արդեն փաստորեն պառակտվել է կուսակցութիւնից, և այն ժամանակ պառակտվել է կուսակցութիւնից, — յերկու կողմերն ել, կապված լինելով միեւնոյն շղթայով, կըսկսեյին շարունակ ավելի ու ավելի անմիտ կերպով վատնել իրանց ուժերը

մանր կռիւների և բամբասանքների վրա, բարոյապես ուժասպառ լինելով և մանրանալով: Սակայն մենք չենք ընդունում պառակտման հնարավորութիւնը: Կազմակերպված կուսակցութեան իրական ուժի առաջ անարխիստորեն տրամադրված տարրերը պարտաւոր կըլինեն, և մենք կարծում ենք, կարող կըլինեն խոնարմել, վորովհետեւ իրանց իսկ բնույթով ինքնուրույն ուժ կազմակերպել նրանք չեն կարող: Առում են, վոր հաշտութիւնը հնարավոր ե առանց համագումարի: Բայց ինչպիսի հաշտութիւն: Վերջնականապես անձնատուր լինել խմբակցութեանը, փոքրամասնութեան կողպտացիան կենտրոնական կոմիտեյի մեջ, և հետեւապես լիակատար լրումն կենդրոնական մեջ, և հետեւապես կազմալուծման: Այն ժամանակ հիմնարկութիւնների կազմալուծման: Այն ժամանակ կուսակցութեան լոկ միայն անունը կըմնա. կուսակցական մեծամասնութիւնը ստիպված կըլինի նոր պայքար սկսելու: Իսկ փոքրամասնութիւնը: Մինչև այժմ ձեռք բերած ամեն մի զիջում նրա համար յեղել է միմիայն հենակետ իր կազմալուծող աշխատանքի համար: Նույնիսկ փոքրամասնութեան տեսակետով պայքարը մեծացել է և դուրս է յեկել կողպտացիոն բամբասանքների շրջանակից. ինչպե՞ս կարող է փոքրամասնութիւնը վերջ տալ պայքարին: Առավել ևս նա չի գատարեցնիլ պայքարը, մինչև վոր չստանա բոլոր զիջումները: Մեզ ասում են. համագումարը չի կարող վոչ մի նպատակի հասնել, վորովհետեւ մինչև այսօր չեն պարզված տարաձայնութիւնները: Բայց միթե այժմ խոսքը տարաձայնութիւնների պարզաբանութեանն է վերաբերում, միթե շփոթըն ավելի է ավելի չի աճում: Տարաձայնութիւններն

այժմ չեն պարզաբանվում, այլ վորոնվում են և ըստեղծվում, և միայն համագումարը կարող է վերջ դնել դրան։ Միմիայն նա, համագումարը, յերկու կրովող կողմերին կանգնեցնելով իրար դեմուդեմ, ստիպելով նրանց վոր վորոշ և բաց արտահայտեն իրանց ձգտումները, միայն նա ուժ ունի կատարյալ պարզություն մտցնելու կուսակցական հոսանքների և կուսակցական ուժերի փոխադարձ հարաբերություններին մեջ։ Սակայն համագումարը կարելի չէ կեղծել՝ կադմակերպությունները կազմալուծելու միջոցով, — հայտարարում և փոքրամասնությունը։ Դա մի ստահող զրպարտություն է, սլատասխանում ենք մենք, մի զրպարտություն, վորի հաստատության համար չի բերված և վոչ մի փաստ։ Յեթե փաստեր լինեյին, փոքրամասնությունը իր տրամադրության տակ ունենալով կուսակցական որդանը, կարող եր իհարկե լայնորեն հրապարակել այդ փաստերը և իր ձեռքում պահելով կուսակցության խորհուրդը, նա կատարյալ հենարավորություն ուներ նրանց ուղղելու։ Վերջապես խորհրդի այս վերջին որերի բանաձևը, չմատնանդելով այդպիսի փաստեր անցյալում, վերջնականապես յերաշխավորում և դրանց անկարելիությունը ապացույցում։ Ո՞վ կըհավատա այժմ այդ անհավանական զրպարտության։ Յերկուդ են հայտնում, վոր համագումարը չափազանց շատ ուժեր և միջոցներ կըլինի դրական աշխատանքից։ Դառն ծաղր։ Միթե հնարավոր է ուժերի և միջոցների ավելի մեծ վատնում, քան առաջ և բերում այս խառնաշփոթությունը։ Համագումարն անհրաժեշտ է։ Նա անհրաժեշտ կըլիներ նույնիսկ կուսակցական կյանքի նորմալ ընթացքի ժամա-

նակ՝ նկատի առնելով պատմական բացառիկ մոմենտը, նկատի առնելով նոր խնդիրների հնարավորությունը, վոր համաշխարհային դեպքերը կառաջադրեն կուսակցությանը։ Նա կրկնակի անհրաժեշտ է կուսակցական ներկա կրիզիսի միջոցին աղնվաբար և խելացիորեն նրանից դուրս դալու, կուսակցության ուժերը պահպանելու նրա պատիվն ու արժանավորությունը պահպանելու համար։

13. «Вперед» ԼՐԱԳՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեհիկի չեքսադրակված նամակը

Նախկին պահնորդական բաժնի արևիվի գործերում գտնված Լենինի նամակը, վոր այստեղ հրատարակում ենք, վերաբերում է 1904 թվականի վերջերին։ Այդ այն ժամանակն էր, յերբ կուսակցության ներսում տեղի ունեցող ֆրակցիոն պայքարը, վոր սկսվել էր 2-րդ համագումարում, արդեն կարողացել էր բավական պարզորոշությամբ դրսևորել կուսակցության պառակտված տարրերի — «փոքրամասնության» և «մեծամասնության» — սկզբունքային դիրքը։ Արդեն նույն 1904 թվականի ամառը լույս է տեսնում 22-ի հայտարարությունը (դեկլարացիան), վորը կոչ էր անում համախմբվել «կուսակցական համագումար հրավիրելու» լողունվի շուրջը։ Այդ ժամանակից այդ լողունվը — «Պայքար համագումարի համար» — սկսում և իր շուրջը հաղաքել կուսակցության տեղական կոմիտեներին։ Իսկ կուսակցության դեկավար մարմինները — խորհուրդ և լենտրոնական որդան՝ նոր «Իսկրա»-ն — վորոնք

փոքրամասնության տրամադրութեան տակ ելին դուրս միում, պայքար են մղում ընդդէմ համագումարի: Համագումարի դէմ մղվող պայքարին միացավ նաև հաշտարարաբար (примиренчески) տրամադրված կենտրոնական կոմիտեն: Նույն թվականի նոյեմբերին յետքէ կոնֆերանցիաներում—Հաբավային, Կովկասյան ու Հյուսիսային—վորոնք ընդհանուր առմամբ ներկայացնում էին 13 տեղական կազմակերպություն, ընդունվում են ընդհանուր առմամբ 22-ի ղեկավարացիայի հիմնական սկզբունքները և ընտրվում են մեծամասնութեան կոմիտեների բյուրո, ժորին այսպես, «հեղափոխական» ճանապարհով ել անցնում են համագումարը հրավիրելու նախաձեռնությունը: Արտասահմանի բաշխիկները՝ հանուն համագումարի պայքար մղելու հետ միաժամանակ քայլերի ղեկներն տալով որդանի հըրատարակութեան համար: Սկսած այն ժամանակից, յերբ «փոքրամասնութեան» կողմն անցած կենտրոնական կոմիտեն սկսում են պայքարել նաև «մեծամասնութեան» զրականութեան դէմ»—«փոքրամասնութեան» դէմ պայքարը, «փոքրամասնութեան» ուղղորտյունի տակն ելութեան մերկացնելը և վերջապես համագումարի համար պայքարը—այս բոլորը տիրաբար պահանջում էին տալով որդանի: 1904 թ. դեկտեմբերի 22-ին (ն. տ.) լույս տեսավ այդ լրագրի առաջին համարը: Լրագրի անունն եր «Вперед»:

1) Пролетарская Революция, ист. жур. Испрт. № 4 (16) 1923 г. Гос. Изд. Москва-Петроград-стр. 185.

Լենինի այդ տալագրված նամակը կրժառայե վրպես ամենաարժեքավոր մի վավերագիր՝ պառակտման այս նկարագրվող շրջանի ուսումնասիրութեան համար:

«Մեծամասնութեան որդան «Вперед-ը բնականաբար դառնում են ուղագրութեան կենտրոն վոչ միայն «մեծամասնութեան» արտասահմանյան խմբակի, այլ և մեծամասնութեան հարող Ռուսաստանի բոլոր կուսակցական կոմիտեներին: Սակայն թնչպիսի լրագիր պետք է լինի այդ թերթը: Խնչպես պետք է լինի առհասարակ կուսակցական որդանը: Ո՞վ պետք է աշխատակցե կուսակցական լրագրում, ինչք մասին պետք է գրել, թնչպես պետք է ոգտագործել ինֆորմացիոն նյութը: Այս բոլոր հարցերի պատասխանները տալիս են Լենինը իր նամակում, վորը նայե այս մասնակի հարցում կուսակցական լրագիրը և նրա կապը լայն մասսաների հետ մինչև այսոր պահպանել և իր բոլոր նշանակությունը:

Այս նամակը, վոր ըստ յերևութին գաղտնի բնով են վոստիկանութեան ձեռքով: Նամակի պատճենը («իսկական բնագիրը») վոստիկանութեան դեպարտամենտն ուղարկել են Մոսկվայի պահնորդական բաժնին: Նամակը, ինչպես գրված են վոստիկ. դեպարտամենտի հաղորդագրութեան մեջ, ուղարկված են Փարիզից հեռեկայ հասցեյով. «Ս.Տ. Գունովիչ, Մոսկվա, Տվերսկայա տ. Նայդենովի № 17, Մաաքարոստական կաբինետ, բընակ. 6»:

Ի. Վոլկովիչե

Լենինի նամակը՝ Բորիսին (*), 13 դեկտեմբերի, (***) Գ. Տ. (***) Այսոր արտասահմանյան բաշխիկներ

*) Նոսկով (Գլեբով): Մեռել են Խորագործիկում 1913 թ. 2/Կ.

**) 1904 թ.

***) Թանկագին ընկեր.

մի նեղ շրջանի ժողովում լուծվեց, սկզբունքով վաղուց արդեն լուծված, տպագիր պարբերական կուսակցական որգան հիմնելու հարցը, որգանը, պայքարելով այն կազմակերպչական և գործնական շփոթի դեմ, վոր մըտեւ և կուսակցութեան մեջ փոքրամասնութեան շընորհիւ, պետք է նվիրված լինի մեծամասնութեան ըսկզբունքները պաշտպանելու և զարգացնելու գործին. այդ որգանը պիտք է սպասավորեն նաև ուսական կազմակերպութեաններ շընորհիւ գործելու. այդ կազմակերպութեաններ ղեմ այժմ ամբողջ Ռուսաստանում փոքրամասնութեան գործակալներ ղեմը տարվում է մի այնպիսի կատարել կռիւ, վոր սարսափելի կազմալուծում է կուսակցութեանը մի այնպիսի կարևոր պատմական մոմենտում, մի կռիւ, վոր տարվում է ամբողջովին ամենաանպատկառ միջոցներով և աղանդավորական յեղանակներով, կուսակցութեան այսպես կոչված կենտրոնական որգանի (*) կեղծ արցունքներ թափելու ժամանակ պառակտման առթիւ. Ինչ վոր հընարավոր է՝ մենք արել ենք, վոր կռիւ տանենք կուսակցական ճանապարհով. մենք հունվար ամսից սկըսած պայքարում ենք համագումարի համար, վոր միակ պատվավոր յելքն է կուսակցութեան համար այս անհնարին դրութեանից դուրս գալու. Այժմ արդեն պարզից էլ պարզ է, վոր փոքրամասնութեան կողմը փախած կենտրոնական կոմիտեի բովանդակ գործունեութեանը նվիրված է համագումարի դեմ, հուսահատական կռիւ. խորհուրդը դիմում է ամեն միջոցի, ամենաանկարելի և անթույլատրելի խաղերի, վոր հա-

*) Այսինքն Նոր «Իսկրան».

մագումարը ձգձգելու խորհուրդն ուղղակի արգելք էր լինում համագումարին. ով այդ բանին դեռ չի համոզվել, կարգալով նրա վերջին վորոշումներ ղեմ մասին յեղած նամակները, վոր տպագրված են «Իսկրայի» № № 73, 74 և 77 հավելվածում (*), նա այդ կիմանա մեր «Խորհուրդը կուսակցութեան դեմ» գրքույկից, վոր գըրել է Որլովսկին (**): Այժմ պարզից էլ պարզ է, վոր առանց միավորվելու և մեր, այսպես կոչված, կենտրոնական հիմնարկութեաններին հակահարված տալու, հասարակութեանը (***) ու չի կարող պաշտպանել իր կուսակցութեանը, չի կարող պաշտպանել կուսակցականութեանը խմբակցականութեան դեմ մղվող կռիւ: Ռուս բալլետիկներ ղեմ վորոշումը իրանք՝ բալլետիկները վաղուց են որակարգել հարց դրել. հիշեցեք Մոսկվայի կոմիտեի 19-ի տպագիր պրոկլամացիան (1904 թ. հոկտեմբերի): Վերջապես կուսակցութեան համարյա բոլոր կոմիտեներին հայտնի յե վոր այս ամենավերջին որերս տեղի յեն ունեցել և մասամբ դեռ տեղի յեն ունենում միշարք մասնակի կոնֆերենցիաներ՝ մեծամասնութեան կոմիտեների մեջ. մեծամասնութեան կոմիտեները յեռանդադին և վորոշ փորձեր են անում միմյանց հետ ամուր կապվելու, վոր խորհրդի, կենտրոնական որգանի և կենտրոնական կոմիտեի մեջ նստած՝

*) Խորհուրդը վերաբերում է «Կուսակցական կյանքի հարցերը» վերնագրով հոգվածին, վոր տպագրված է «Իսկրայի» հիշյալ համարներում:

**) Վ. Վ. Վորովսկին: Մականվել է Լոգանում ըսպիտակ գվարդիականի ձեռքով 10/Մ.

***) Ըստ յերևույթին այս բառը սխալմամբ է գրված մեծամասնութեան բառի փոխարեն:

իրանց չափը կորցրած բռնապարտիստներին հակահարված տան: Մենք հույս ունենք, վոր շատ մոտիկ աղագայում այդ քայլերը կը հրապարակվեն ընդհանուր տեղեկության համար, յերբ արդեն դրանց հետեւանքները թույլ կը տան մեզ վորոշակի ասելու, ինչ վոր արդեն ձեռք ե բերված: Առանց առանձին հրատարակության մեծամասնության ինքնապաշտպանությունը, հասկանալի յե, միանգամայն անկարելի յեր: Ահա ԿԿ. ինչպես դուք գուցե գիտեք մեր գրականությունից, մեր գրքույկներն ուղղակի դուրս հանեց՝ կուսակցական տըպարանից և մերժեց թե՛ արտասահմանի մեծամասնության և թե՛ Ռուսաստանի կոմիտեների (որինակ, Ռիգայի կոմիտեյի) ուղղակի առաջարկները՝ մեծամասնության գրականությունը Ռուսաստանի ուղարկել: Կուսակցության հասարակական կարծիքը կեղծելը միանգամայն վորոշակի կերպով յեք ընդունում, վորպես նոր ԿԿ սիստեմի տակտիկա: Մեր հրատարակչական գործն ընդլայնելու, մեր փոխադրությունը (տրանսպորտ) կազմակերպելու անհրաժեշտությունն անխուսափելիորեն մեզ վրա ընկավ:

Այն կոմիտեները, վորոնք իրանց ընկերական հարաբերությունները կտրել են կենտրոնական որդանի խմբագրության հետ, չկարողացան և չեն կարող առանց պարբերական որդանի մնալ: Կուսակցությունն առանց որդանի, որդանն առանց կուսակցության: Այս ախուր փաստը, վոր մեծամասնությունը նշել եր դեռ ողոստոսին, անողորմաբար տանում եր դեպի միակ յեղքը—դեպի մեր որդանը հիմնելը: Յերիտասարդ գրական ուժեր դալով արտասահման՝ առաջ գործիչները մեծամասնության հարազատ գործին աջակցելու համար,

իրանց ուժերը գործադրելու պահաջ են անում. մի շարք առաջ կուսակցական գրականագետներ նոյնպես թախանձազին պահանջում են որդան, Հիմնելով այդպիսի մի որդան («Вперед» անունով), մենք գործում ենք առաջ քաշելիկյան մասսայի հետ կատարյալ համերաշխությամբ, կատարելապես համաձայն կուսակցական պայքարի մեջ մեր ընդանուր ամբողջ վարքագծի: Մենք ձեռք ենք առել այդ գենքը, տարվա ընթացքում փորձելով բոլոր, անխտիր բոլոր՝ ալիլի հասարակ, կուսակցության համար ալիլի համապատասխան ուղիները: Մենք բնավ յերբեք ձեռք չենք քաշում համագումարի համար պայքարից, այլ ընդհակառակն ուղում ենք ընդլայնել, ընդհանրացնել և պաշտպանել այդ պայքարը. ուղում ենք ոգնել կոմիտեներին, վոր ներանք իրանց առաջ ծառայած համագումարի նոր հարցը լուծեն առանց խորհրդի և կենտրոնական կոմիտեյի կամքի,—մի հարց, վոր պահանջում ե քաղմակողմանի լուրջ քննություն: Մենք հանդես ենք գալիս բացարձակ հանուն այն խնդիրների և հայացքների, վորոնք արդեն վաղուց մի շարք գրքույկների միջոցով շարադրված են կուսակցության առաջ: Մենք պայքարում ենք և պիտի պայքարենք հեղափոխական տեղեկության համար, խառնափնդորությունների և տատանումների դեմ՝ թե՛ կազմակերպչական և թե՛ տակտիկական հարցերում:

Նոր որդանի հրատարակության մասին հայտարարությունն արդեն լույս ե տեսել *) լրագրի առաջին հա-

*) «Вперед» լրագրի հրատարակության հայտարարությունը տես օտորեւ, եջ՝ 116.

մարը լույս կըտեսնի հունվարի 6-10 թվերին (Ն. Տ.): Խմբագրական կոլեգիայի մեջ մասնակցում են մեծամասնության մինչև այժմ բոլոր աչքի ընկնող գրահանագետները (Ռյադովոյ *), Գալերկա, Լենին, Ուրլովսկի): Գործնական ղեկավարության և տարածման բարձր գործի, ագենտուրայի և այլն և այլն. կոլեգիան կըկազմվի (մասամբ արդեն կազմվել և) ռուսական կոմիտեների մի ամբողջ շարք ռուսական կոմիտեների կողմից՝ վորոշ ֆունկցիաները վորոշ ընկերների ուղղակի հանձնարարելու հիման վրա:

Մենք այժմ դիմում ենք բոլոր բայլեկ-ընկերներին, խնդրելով, վոր ամեն կերպ աջակցեն: Մենք այդ որդանն առաջ պիտի տանենք միայն այն պայմանով, վոր նա լինի ռուսական շանթման որդան և վոչ յերբեք արտասահմանյան խմբակի: Դրա համար ել անհրաժեշտ ե ամենից առաջ և ամենից շատ ամենայնոհադագին «գրական» աջակցություն, ալելի ճիշտ՝ գրական մասնակցություն Ռուսաստանից: Յես ընդգծում եմ և չակերտների մեջ եմ առնում «գրական» բառը, վորպեսզի միանգամից նշեմ այդ բառի հատուկ նշանակությունը և նախադգուշացնեմ այն թյուրիմացությունից, վոր շատ սովորական ե և սարսափելի վնասակար գործի համար: Այդ թյուրիմացությունն այն ե, վոր իբր թե հատկապես գրականագետները և միայն գրականագետները (այդ բառի պրոֆեսիոնալ նշանակությամբ) ընդունակ են հաջողությամբ մասնակցելու որդանին. ընդհակառակն որդանը կենդանի ու կենսունակ կըլինի միայն այն ժամանակ, յերբ ղե-

կավարող և մշտապես աշխատակցող մի հինգ գրականագետների դիմաց՝ հինգ հարյուր և հինգ հազար վոչ գրականագետ աշխատակիցներ լինեն: Հին «Իսկրա»-ի պակասություններից մեկն այն եր, վորից և միշտ աշխատում եյին ապտեղ նրան (և վորը նոր «Իսկրայում» հասավ մինչև հրեշային չափերի), վոր Ռուսաստանից թույլ եյին աշխատում թերթում: Պատահում եր՝ մենք տպագրում եյինք, միշտ համարյա առանց բացառություն այն բոլորը, ինչ վոր ուղարկվում եր Ռուսաստանից: Իբրեք կենդանի որդանը պետք ե տըպագրի իրեն ուղարկված նյութերի մեկ տասներորդականը, մնացածն ոգտագործելով ինֆորմացիայի և գրականագետների ցուցմունքների համար: Անհրաժեշտ ե, վոր մեզ հետ գրագրություն ունենան, վորքան կարելի յե, ալելի մեծ թվով կուսակցական աշխատավորներ, հենց «գրեն» — այս բառի սովորական նշանակությամբ և վոչ գրական: Ուտարությունը, անիծյալ արտասահմանյան ճահճի հափշտակող*) մթնոլորտը այստեղ այնքան են ճնշում, վոր միակ փրկությունը մընում ե կենդանի հաղորդակցությունը Ռուսաստանի հետ: Թող այս չմոռանան նրանք, վորոնք վոչ միայն խոսքով, այլ և գործով ցանկանում են մեր որդանը դարձնել ամբողջ մեծամասնության որդան, բոլոր ռուս աշխատող մասսայի որդան: Թող ամեն մեկը, ով այս որդանն իրանն ե համարում և ով զիտակցում ե սոցիալ-դեմոկրատ կուսակցության անդամի պարտականությունները, միանգամ ընդմիշտ հրաժարվի բուրժու-

*) Ըստ յերևույթին պետք ե լինի «հոտած» բառը (Захватывающая, захватная):

**) Ա. Բոգդանով:

ալիան սովորութիւնից—մտածել ու գործել այնպիսի, ինչպէս այդ ընդունված և իրերսւ լրագրների նկատմամբ. իբր նրանց գործն և գրել, մերժ՝ կարգալ: Սոցիալ-դեմոկրատական թերթում պետք աշխատեն բոլոր ուսանողները^{*)}: Մենք խնդրում ենք, վոր ամենքը թղթակցեն, մանավանդ բանվորները: Ավելի լայն հնարավորութիւն տվեք բանվորներին, վոր գրեն մեր թերթում, գրեն անխտիր ամեն բանի մասին, գրեն, վերջան կարելի չի շատ, իրենց առորջա կյանքի, շահերի և աշխատանքների մասին—առանց այդ նյութի՝ կոպեկի արժեք չի ունենա սոցիալ-դեմոկրատական որգանք, և նա արժանի չի լինի կոչվելու սոցիալ-դեմոկրատական: Մենք խնդրում ենք գրել նաև բացի դրանից վորպէս նամակադրութիւն, գիտամար՝ վոչ թե թղթակցութիւն, այսինքն՝ վոչ թե տպելու համար, այլ խմբագրութեան հետ ընկերական հաղորդակցութիւն պահպանելու և նրան իրազեկ անելու, իրազեկ անելու վոչ միայն փաստերին ու դեպքերին, այլև տրամադրութիւններին և, վոր դիտավորն և, շարժման՝ առորջա «անհատաբարբախտ», սովորական, ավանդապահական կողմին: Արտասահմանում չեղած՝ դուք չեք կարող յերեակայել թե այդպիսի նամակները մեզ վերապատճան հարկավոր են (այդ նամակներում չէ վոր բացարձակապէս վոչ մի կոնսպիրատիվ բան չկա, և

*) Պետք և յենթադրել, վոր այդ բառի փոխարեն բնագրում յեղած կըլինի՝ սոցիալ-դեմոկրատները, վորը պահանջողական բաժնի աշխատակցի բութ յերեկայութեան մեջ, վոր աշխատել և ծածկապիր նամակի բնագիրը վերականգնել, դարձել և «ուսանողները»:

շարաթը մի անգամ, 2 անգամ այդպիսի անծածկապիր նամակ գրել, իսկապէս վոր միանգամայն հնարավոր և յուրաքանչյուր ամենից շատ զբաղված մարդու համար անգամ):

Գրեցեք մեզ բանվորական խմբակներում տեղի ունեցող զրույցներին, այդ զրույցների բնույթի, պարագմունքներին, թեմաներին, բանվորների հարցերին ու պահանջներին, պրոպագանդայի և ագիտացիայի դրութեան մասին, հասարակութեան, գործի, յերիտասարդութեան մեջ յեղած կապերի մասին: Ամենից շատ գրեցեք բանվորներին դժգոհութեան մասին (մեղանից, ևսգեկներից), նրանց տարակուսանքների, պահանջներին, բողոքների մասին և այլն: Հետաքրքրական և, մանավանդ աշտմ, գործի պրակտիկ գրման հարցերը, և խմբագրութեան այդ հարցերին ծանոթացնելու վոչ մի այլ միջոց չկա, բացի կենդանի գրագրութիւնից, վոչ թե թղթակցական, այլ պարզապէս ընկերական բնույթով: Ի հարկէ, ամեն մարդ գրելու ցանկութիւն ու կարողութիւն չունի. սակայն՝ «մի ասիր՝ չեմ կարող, այլ առա՛ չեմ ուզում»: Միշտ, յեթե ցանկութիւն կա, ամեն մի խմբակում, ամեն մի, նույնիսկ ամենափոքր, ամենայնիւրորդական անգամ խմբակում (յերկրորդականները շատ անգամ տաւանձնապէս հետաքրքրական են, վորովհետև նրանք յերբմեջ անում են գործի ամենից կարեւոր, թեև աննշմարելի մասը) կարելի չի գտնել մեկ-յերկու ընկեր, վորոնք կարող և յին գրել: Այստեղ մենք քարտուղարութիւնը միանգամայն դրել ենք լայն հիմքերի վրա (սգտվելով հին «Իսկրայի» վործից), իսկ ձեզ խնդրում ենք նկատի ունենալ, վոր ամեն վոք, առանց բացառութեան, ա-

ուանց նեղութեան այնպես կանե, վոր իր բոլոր նամակները (կամ 9,110 տեղ, կըհասնեն: Յես այս արուստ եմ հին «Բակրայի» յերեք տարւոյ վորո՞ւնք վրա հիմնելով: «Բակրայ» ունեւ մեկից ավելի այդպիսի թղթ-թակիցներ (վոր շատ անգամ ծանոթ չէին խմբագրութեան վոչ մեկ անդամի հետ), վորոնք ամենայն ճշտապահութեամբ գրում էին: Վաղուց ե, վոր վոստիկանութիւնը բացարձակապէս անկարող ե ըսնել արտասահմանի նամակները (ըսնում են միայն պատահաբար կամ ուղարկողի արտաքին կարգի անփութութեան շնորհիւ), և հին «Բակրայի» հսկայական նյութը միշտ անցնում եր ամենասովորական ծանապարհով սովորական ծրարների մեջ մեր հասցեներով: Առանձնապէս կըցանկայինք նախագահուցանել մեր բարեկամներին գրագիտութիւնը միայն կոմիտեյում և քարտուղարութեան մեջ կենտրոնացնելու սխտեմից: Այդպիսի մոնոպոլիայից ավելի վնասակար բան չկա: Վորքան պարտադիր ե միասնականութիւնը գործողութեան, վորոշումների միջոցին, նույնքան անհեթեթ ե այն ընդհանուր ինֆորմացիայի, գրագրութեան մեջ: Շատ և շատ հաճախ պատահում ե, վոր առանձին հետաքրքրութիւն են ունենում համեմատաբար «կողմնակի» մարդկանց նամակները (կոմիտեյից հեռու). այդ մարդկանց վրա ավելի թարմ են տպւորւում շատ այնպիսի բաներ, վորոնք չափազանց սովորական են հին փորձված աշխատողի համար և աչքաթող են լինում նրա կողմից: Ավելի մեծ հնարավորութիւն տված ե յերիտասարդ աշխատողներին, և՛ յերիտասարդութեան, և՛ աշխատողներին, և՛ «կենտրոնականներին», և՛ «լիստեզկաներին» ու «մասսովկաներին» շարքային հասա-

րակ անդամներին, վոր մեզ գրեն: Միայն այն ժամանակ և միայն այնպիսի լայն գրականութեան պայմանով մենք բոլորս միասին ընդհանուր ուժերով կարող ենք մեր թերթը դարձնել իրատես Ռուսաստանի բանվորական շարժման որդան: Յեռանդակին խնդրում ենք, վոր այս նամակը կարդաք բոլոր և ամեն տեսակ ժողովներում, խմբակներում, յենթախմբակներում և այլն, և այլն, վորքան կարելի յս լայնորեն, իսկ մեզ ել գրեք, թե բանվորներն ինչպէս ընդունեցին այս կոչը: Բանվորական («Ժողովրդական») որդանը ընդհանուր ղեկավարող ինտելիգենտական որդանից դատելու դադարներն մենք վերաբերում ենք կասկածով (սկիստիկոբեն). մենք կըցանկանայինք, վոր սոցիալ-դեմոկրատական թերթը դառնա ամբողջ շարժման որդան, վոր բանվորական թերթը և սոցիալ-դեմոկրատական թերթը ի մի ձուլվեն և դառնան մի ղեկավար որդան: Այդ կարող ե հաջողվել միայն բանվորների ամենադործոն պաշտպանութեամբ:

Ն. ԼԵՆԻՆ

Հաղորդեց՝ Ի. Վոլկովիչե

14. «Вперед» ԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ *)

Հիմքերը վաղուց փտած, վաղուց իր ժամանակն անցկացրած, գիշատիչ, ապիկար, կատաղի ինքնակա-

*) Այս հայտարարութիւնն արտատպւում ե մի տպագիր հազվագյուտ որինակից, վորը պահվում ե Կուսպատի ցուցահանդեսում: Ծանոթ խմբագր.

լությունը վերջին տարիները ահուսարսափով տեսալ, վոր ինքը կանգնած է անդունդի ծայրին: Վոչ արևմտայնորոպական ռեակցիայի պաշտպանությունը, վոչ յեկվոր և բնիկ կապիտալիստներին՝ ուսս ժողովրդի մինչև վերջին շապիկը պրկելու իրավունք տալը, վոչ սոսնկական կոպիտ բռնությունը չկարողացան արդելք լինել վճռական ժամի մոտիկնալուն: Ռուս ժողովրդի առաջավոր մասը, քաղաքականապես հասունացած ռուսական պրոլետարիատը, դուրս եր գալիս պատմության ասպարեկը:

Այդ նոր ժողովրդային Ռուսաստանի, քաղաքների և գործարանային ավանների ժողովրդի վառ հզոր շարժումը կենդանություն ներշնչեց ռուսական ոպպոզիցիայի բոլոր սարսափահար և ընկճված տարբերին: Ահեղ անցքերը, հեղափոխության նախազուշակները, հաճախանում էին: Յերևաց կարմիր ուրվականը և սկսեց անշեղորեն հարձակվել իրավադուրկ յերկրի անկոտրով տերերի վրա: Յեվ ռուսական ինքնակալությունը, ինչպես վոր սպասելի յեր, կորցրեց իր գլուխը: Տխմար ու լիբը ինքնակալությունը մտադրվել է ժողովրդի արյունի գնով խեղդել դժգոհությունը: Նա վճռել է գրոհ տալ մի յերկրի վրա, վորին թույլ եր համարում և անքաղաքակիրթ, դուրս գալ առաջնորդ ազգային ուժերի, միացնել այդ ուժերը թմբուկների հաղթական դրդուցի տակ: Նեղված պրոլետարիատից վերջին տարիների պատմական դեպքերի գլխավոր շարժիչ ուժից կառավարությունը դուրս յեկավ ռազմական քննության և իհարկե տապալվեց:

Հայրենասիրական կարճատև խղճուկ և վակիւսնալիային հաջորդեց ավելի լայն, ավելի խոր դժգո-

հությունը: Պիկելյի մահը առիթ ծառայեց դիմելու քաղաքական կեռամանների (գիգղակների), վորը կարելի յեր գուշակել: Չնչին գիշումների միջոցով, գիշումների, վոր համեմված էին քաղցր Ֆրագներով, կառավարությունն աշխատում եր գնել բուրժուական հասարակության վստահությունը, վորպեսզի դրքսի տյգ հասարակությանը հեղափոխականների դեմ, վորոնք իրանց անժամանակ պահանջներով խանգարում են խաղաղ բարենորոգումների կանոնավոր ընթացքը: Սակայն այս սրիկայական միջոցն էլ անաշուղ դուրս յեկավ, դեռ ավելին. նույն իսկ բուրժուական լիբերալները տեսան, վոր կառավարությունից կարելի յե ավելին պահանջել, քան առաջարկում է: Իշխանության տատանումները, վոր խճճվել եր իր իսկ ձեռքով ձգած ցանցերի մեջ, միայն բանը հասցրեց այնտեղ, վոր չտեսնված կենդանություն ստացավ Ռուսաստանում ամեն յերանդի դեմոկրատիք շարժումը: Պրոլետարիատը կարող է և պետք է ոգտազործե երկրի այսպիսի վիճակը: Նրա հիմնական նպատակն է՝ կործանել բուրժուական աշխարհը և նրա ավերակների վրա կերտել սոցիալիստականը: Բայց վորպեսզի պրոլետարիատը մեծանա և դառնա այնպիսի ուժ, վորն ընդունակ լինե իրադործելու այդ համաշխարհային—պատմական մեծ նպատակը, նա կարիք ունի քաղաքական ազատության, խոսքի և մտմուլի, ժողովների և միությանների ազատության, նա կարիք ունի դեմոկրատիք հանրապետություն ընդհանուր, հավասար, օւղղակի և գաղտնի ընտրական իրավունքով: Ռուսաստանում դեմոկրատիք շարժումը, տակավին ռազմային, բայց խոր և վեհասունակ, կարող է փոխվել և դառնալ ռուսական

հեղափոխությունն և բերել պրոլետարիատի համար անհրաժեշտ քաղաքական ազատություն միայն այն գեպքում, յեթե պրոլետարիատը կատարյալ գիտակցությամբ և իր ամբողջ յեռանդով վրա ընկնի ինքնակալությանը:

Ընդ սմին պրոլետարիատը պետք է առանձին հանդես գա միացած շարքերով իր հատուկ լողունգներով. նա պետք է հանդես գա վնչ վորպես կույր գործիք բուրժուական հեղափոխության, այլ վորպես այդ հեղափոխության ամենից գիտակից և ամենից վճռական մասնակցողն ու շարժիչը: Վնչ թե պրոլետարիատն է հեղափոխության համար, այլ հեղափոխությունն է պրոլետարիատի համար:

Կտն բոլոր տվյալները, վորպեսզի պրոլետարիատի պայքարի տարերային արտահայտումը լուսաբանվի գիտական սոցիալիզմի իսկական պրոլետարական դադափարներով, վոր այդ դադափարները բարձրանան մինչև հաստատուն և անշեղ տակտիկա, վոր դրանք կաղապարվեն և դառնան ամուր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հաստատուն ձևեր: Սակայն բացի արտաքին տվյալներից՝ կարևոր է նաև կազմակերպող սկզբունքի ներկայությունը: Այդպիսին կարող է լինել միայն գիտակից պրոլետարիատի միջուկը, այսինքն Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը: Մեր կուսակցության վրա ընկնում է դժվարին ու վսեմ խնդիր. կռելով տաք յերկաթը՝ կազմակերպել պրոլետարիատի յեռանդը, առ նրան ուղիղ լողունգներ, ուղղել նրան նպատակահարմար ուղիներով: Կազմակերպությամբ ուժերը ամոսնապատկվում են: Կազմակերպվել՝ սա յե

մեր ամենից առաջնակարգ և ամենից ստիպողական խնդիրը:

Յերբ կուսակցական աշխատանքի բովանդակությունը մեծանում է դանդաղ և տաթիճանաբար, կարող են աստիճանաբար մեծանալ նաև նրա կազմակերպչական ձևերը: Սակայն այն մրրկահույզ է ուժգին աճման միջոցին, վորպիսին հայտնաբերում է ռուսական պրոլետարիատի ակտիվությունն ու գիտակցականությունը, կուսակցական կյանքի հին ձևերը անխուսափելիորեն պետք է կործանվեն և վերաստեղծվեն սուր կրիզիսների միջոցով: Իսկ առանձին անհատներին և առանձին մասն խմբակները, ինչպես ամեն տեղ, մնում են կառչած ու կսված կուսակցական կյանքի այդ հին ձևերին: Այն կուսակցական աշխատավորները, վորոնք գիտակցում են հին ձևերի արմատական բեկման անհրաժեշտությունը, գործիք են հանդիսանում տեղեկների և ստիպված են լինում գործել անողորմաբար, հաշվի չառնելով առանձին անհատների զգացումներն ու համակրանքները: Պատահում է, վոր մի ուժգին քայլ դեպի առաջ այդպիսի պայմաններում առաջ են բերում սուր ռեակցիա. հին կարգի (УКЛАД) բոլոր գիտակից ու անդիտակից կողմնակիցները միանում են և դաշն կազմում համախմբված՝ միայն ատելությամբ դեպի նովատորները (նորարարները), և ժամանակավորապես յերկու քայլ հետ են շարժում կուսակցությանը: Բնական է, վոր կազմակերպչական ռեակցիայի հետ միասին այդ միջոցին առաջ է գալիս նաև սկզբունքային ռեակցիա:

Հատկապես հենց այդպիսի մի կրիզիս և ապրում մեր կուսակցությունը: Այդ կրիզիսը պրոլետարիատի

ուժերի հզոր և արագ աճման անդրադարձումն է: Հասունացած հոսանքը ձգտելով դառնալ իսկական կադմակերպված պրոլետարական կուսակցություն, իր համար յեղ Վորոնեյով ներկա քաղաքական մոմենտի մթնոլորտում, հեղափոխականորեն խորատկում էր խմբակցականության շրջանակները: Թեակցիան անխուսափելի յեր և շատ սուր դուրս յեկավ: Խմբակցականության ռեակցիոն բռնկումը պայթեցրեց կուսակցությունը: Կուսակցական պաշտոնական կենդրոնները հանդիսացան ջատագովներ խմբակային արտդիցիւտներէ և պրիմների, նրանք դարձան խմբակային շահերի արտահայտիչներ: Տեղական կոմիտեները պաշտպանում էին նոր ծնունդ առնող կուսակցականությունը: Կուսակցությունը զրկվեց իր կենտրոնական հիմնարկություններից, կենտրոնական հիմնարկությունները մնացին կուսակցությունից դուրս: Խմբակցականության ջատագովները, վոր միավորում էին այլացեղ տարրերին միայն թշնամությամբ դեպի կյանքի նոր պահանջները, չկարողացան հրապարակ հանել և վոչ մի առաջադիմական լոզունգ: Կազմակերպչական սկզբունքի բացակայությանը նրանք ձգտում էին պրոցեսի կազմակերպության թերեւս դարձնել: Անդոր կյանքի առաջադրած նոր խնդիրներին լուծում տալու, նրանք միայն կրկնում էին հին լոզունգներն այն խմբակների, վորոնք ամենահետամնացն էին բուհբուրջներին: Կանգնելով կազմակերպչական ուղարտյունի դմի թեք մակարդակի վրա, նրանք գլորվելով հասան նաև տաքտիքական ուղարտյունի դմին:

Կուսակցությունը ի դեմս իր տեղական կադմակերպությունների պաշտպանում էր հեղափոխական

սոցիալ-դեմոկրատիայի տոկուն ուղղությունը: Կուսակցությունն աշխատում էր բավարարություն տալ նոր պահանջներին, վորոնք առաջադրվում էին պրոլետարիատի հեղափոխականության անշեղ աճումով: Յեղ կուսակցության մեջ հասունանում էր այն դիտակցությունը, վոր նրա կենդրոնական հիմնարկություններն անընդունակ են ղեկավարելու բանվոր դասակարգի շարժումը: Կուսակցության մեջ ամրանում էր այն համոզումը, վոր ինքը՝ կուսակցությունը պետք է ուղիներ վորոնի նոր խնդիրների լուծումն տալու համար:

Բանվորական մասսաների մեջ խմորումն ավելի և ավելի լայնանում և խորանում է: Պատմական մոմենտի պայմանները յերաշխավորում են, վոր մենք դառնվում ենք այն որվա նախորդակին, յերբ այս շարժումը պիտի ընդունի նոր, բարձր ձևեր: Կայծից արդեն բռնվել և բոցը: Մոտ է այն որը, յերբ այդ բոցը կըտարածվի վորպես ժողովրդական ապստամբության հրդեհ: Սոցիալ-դեմոկրատիայի պատասխանատվությունը մեծանում է պրոլետարիատի առաջ: Ավելի սուր է զգացվում նրա պայքարի իսկական քաղաքական ղեկավարություն պահանջը: Այսպիսի մի մոմենտ Կուսակցությունը չի կարող միայն առանց որդանի:

Ղեկավարող որդանը պետք է կուսակցության հետ սերտ հաղորդակցության մեջ լինի, նա պիտի անխուսափելի կառնունա պրոլետարիատի շարժման հետ, գնալով առաջից, լուսավորելով ճանապարհը, զգուշացնելով սխալ քայլերից: Նա, որդանը, կարող կըլինի իր նպատակն իրադրծել միայն վորպես հետևանք կուսակցության կողմնակալ ստեղծագործության: Լինելով ղեկավար, այդպիսի որդանը պետք է լինի նաև պրո-

լեռարիաւոր գործիքը՝ Նրա խնդիրն է՝ լինել պրոլե-
տարիաւոր վառ լուսատուն:

Ռուսաստանի կոմիտեների հակայական մեծա-
մասնութիւնը, վորոնք արտահայտվեցին մեր կուսակ-
ցական կրիզիսի մասին, անվստահութիւն հայտնեց
Նախ «Исбра»-ի խմբագրութեանը և ապա կուսակցու-
թեան կենդրոնական կոմիտեին և պահանջեց՝ գումա-
րել 3-րդ կուսակցական համագումարը: Այդ պահանջը
կատարելու մերժումը և նույնիսկ կենդրոնների ուղ-
ղակի պայքարը համագումարը հրավիրելու դեմ՝ ստի-
պեցին տեղական կոմիտեներին, վոր միմյանց հետ մի-
անան, ստիպեցին նշանց մի շարք կոնֆերանսներ
կազմակերպել և մի քանի ընկերներին լրագորութիւն
տալ, վոր մեծամասնութեան դիրքերը պաշտպանեն
կուսակցական պայքարում: Այդ ընկերները պետք է
վարեն Նաև ներկա ձեռնարկութեան կազմակերպչական
մասը: «Вперед» թերթի խմբագիրների և մերձավոր
աշխատանքների կոլլեգիան բողոքացած է կուսակցու-
կան մեծամասնութեան գրականագետներից, վորոնք
առաջ համախմբված էյին Լենինի և Բռնշ-Քրուչիչի
հրատարակչութեան շուրջը: Այդ հրատարակչութեան
այժմ ամբողջապես հանձված է մեր թերթին:

«Вперед» թերթը կը հրատարակվի ամիսը 2 անգա-
մից վոչ պակաս: Առաջին համարը լույս կը տեսնի 1905
թ. հունվարի սկզբին:

Խմբագրութեան հասցեն՝ Արտասահանից Էրսպե-
դիցիայի միջոցով, իսկ Ռուսաստանից՝ կոմիտեների և
կուսակցական մեծամասնութեան կողմնակիցների մի-
ջոցով:

«Вперед» и «Пролетарий»

Испарт. Вып. I.

Изд. «Красная Новь» 1924 г. Москва.

ԳԻՆԸ 50 ԿՈՊԵԿ



ՀՀ Ազգային գրադարան



NL0411425

